# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԸ. ՏԱՐԻ ԹԻՒ 12 (1362) ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 12, 2008
VOLUME 28, NO. 12 (1362) SATURDAY, APRIL 12, 2008

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## ԱՌԵՂԾՈՒԱԾԱՅԻՆ ՄԱՐԴԸ, ՈՐ ԿԸ ՀԵՌԱՆԱՅ ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ԴԷՄՔՈՎ

***ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ***

*Իր աւարտական տեղեկագիրը, զոր կարդաց Քոչարեան այսօր, մեր օրով Երեքշաբթի, թերեւս իմացաք: Շատ հաւանաբար չգրէի այս սիւնակը, եթէ դոյզն չափի իրականութիւն, չքմեղանք, զգաստութեան ոգի տեսնէի հոն: Զղջումի նշոյլ մը՝ իր ժողովուրդին հանդէպ, անոր պատճառած ցաւերուն, զրկանքներուն, անձնական երազներու փլուզման, անոր անցուցած անօթի ծարաւ, մսկոտ եւ հիւանդկախ գիշերներուն կապակցութեամբ, փոխանակ իր տասնամեայ գործունէութեան տեղեկագրին մէջ յիշատակելու այն բոլորը, որոնք շինծու են, սուտ ու պատիր բուրգեր կը կազմեն, նման այն կեղծիքներուն, որոնց ականատես վկաները դարձանք նախագահական ընտրութիւններուն, ընթացիկ տարուան անցնող Փետրուարին...*

*Թուականէս աւելի քան տասը տարիներ առաջ, Հայաստանի Հանրապետութեան օրուան քարեմիտ իշխանութիւնները, այդ օրերուն Լեռնային Ղարաբաղի նախագահ Քոչարեան կոչուած մարդուն՝ հրաւիրեցին հայաստան, դառնալու Վարչապետ: Մինչեւ օրս, շատ շատերու առեղծուած մնաց, ոսկի ափսէի վրայ անոր ընծայուած այդ հրաւէրը:*

*Ա՞յդ աստիճան բոպիկ էր մեր հայրենիքը, որ չունենար իր վարք ու բարքով օրինակելի, կեանք ու կենցաղով մաքուր, սկզբունքով ու աշխարհայեացքով ազգասէր, արդարադատ, ժողովրդավար՝ տիպար վարչապետցու մը, որ գար ու դառնար շինարար առաջնորդ: «Մանուկը ծնած օրէն յայտնի կ'ըլլայ» կ'ըսէ ժողովրդական առածը...*

*Ի՞նչպէս կարելի էր լքել իր նախագահի պաշտօնը եւ ետին թողուլ, այդ թէժ օրերուն, «ըլլալու եւ չըլլալու» ճակատագրական պատերազմի մէջ գտնուող եւ միջազգային գետնի վրայ բոլորի կողմէ լքուած Արցախը, մերօրեայ անզուգական երկրորդ հանրապետութիւնը...*

*Ինչպէ՞ս կարելի էր ետին թողուլ, երդումով իր պաշտպանութեան ու հոգածութեան յանձնուած անտէր ժողովուրդ մը...*

*Ահա առեղծուածը: Ինչպէ՞ս բացատրել այդ օրերու մեր իշխանաւորներու քարեմտութիւնը:*

*Մինչեւ օրս, առեղծուած մնաց այն, որ մեր իշխանութիւնները չկարողացան ճանչնալ գառնուկի մորթի տակ իր իսկական էութիւնը թաքցնող նշանակեալ այս վարչապետը, ճիչ ժամանակ անց, դառ-*

***Շար.ը էջ 5***

### ՀԱԶԱՐԱՒՈՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ

## ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՈՒԳՈՎ ԵՒ ԲՈՂՈՔՆԵՐՈՎ ԴԻՄԱՒՈՐԵՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

*Սերժ Սարգսեանի երդման արարողութեան օրը՝ Ապրիլ 9-ը եկաւ անգամ մը եւս ցոյց տալու թէ, ինչպիսի հսկայ անջրպետ գոյութիւն ունի Հայաստանի ժողովուրդի եւ ղեկավարութեան միջեւ:*

*Մինչ, Սերժ Սարգսեան պահուըտած հազարաւոր ոստիկաններ ետին, Օփերայի դահլիճէն ներս կը խոստանար դառնալ բոլորի նախագահը, անդին՝ Միասնիկեանի արձանի մօտ Հայաստանի ժողովուրդը կ'արտայայտէր իր սուգը՝ Մարտ 1-ի ջարդի ընթացքին զոհուածներու քառասունքին առթիւ:*



*Միասնիկեանի արձանի մօտ հայ կանայք կը սգան Մարտ 1-ի զոհերը*

*Ձեռքը դնելով ՀՀ Սահմանադրութեան մայր օրինակի եւ վեհամօր Աւետարանի վրայ, Սերժ Սարգսեան արտասանեց Սահմանադրութեամբ ամրագրուած երդումը: Ապա, ան իր ելոյթին մէջ ըսաւ, «Մեր ժողովուրդի մի մասը պաշտպանել է այլ թեկնածուների, ու ես հիմա դիմում եմ նրանց. դուք իրաւունք ունէիք քուէարկել ոչ իմ օգտին, սակայն ես իրաւունք չունեմ չլինել ձեր նախագահը»*

*Նոյն պահուն, հազարաւորներ ծաղիկներ կը դնէին ու մոմեր կը վառէին ողբերգական իրադարձութիւններու վայրը՝ Ալեքսանդր Միասնիկեանի արձանի մօտ:*

*Արձանի շուրջ մեծ էր ոստիկաններու թիւը, որոնք կ'ստիպէին արագ հեռանալ ու չկուտակուիլ՝ կանխելու համար բողոքի հանրահաւաքի որեւէ փորձ:*

*Իսկ Արաբկիրի փոխոստիկանապետ Վալերի Օսիպեան նախ հետաքրքրուեցաւ, թէ ինչու համար հաւաքուած են, յետոյ լսելով պատասխանը, որ անոնք կը յարգէին Մարտ 1-ին զոհերու յիշատակը, խորհուրդ տուաւ ժողովուրդին այցելել գերեզմանոց եւ այնտեղ սգալ անոնց մահը: «Հարթակից իջէք եւ գնացէք գերեզմանոցում խունկ ծխէք«,- խորհուրդ տուաւ ոստիկանապետը:*

*«Ժառանգութիւն» կուսակցութեան անդամ պատգամաւոր Զարուհի Փոստանջեան մարդոց մոմավառութիւնը խոչընդոտելը բնութագրեց հետեւեալ կերպով. «Սա կրկին անգամ մեր ոստիկանութեան անգրագէտ մօտեցումն է, թէ ինչպէս պէտք է աշխատել ընդհանուր առմամբ ժողովրդի հետ, նոյնիսկ եթէ նրանք հրաման ունեն, դա պէտք է կատարեն գրագէտ ձեւով, այլ ոչ թէ ժողովրդի վրայ յարձակուելով,*

***Շար.ը էջ 4***

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ

*Միջազգային ճգնաժամային խումբը (International Crisis Group - ICG) Ապրիլ 8-ին ծաւալուն զեկոյց մը հրապարակած է Հայաստանի մէջ տիրող կացութեան մասին, իրավիճակը բնութագրելով որպէս «ներքաղաքական խորը ճգնաժամ»:*

*Ըստ խումբի փորձագէտներու, պէտք է մտածել կտրուկ քայլերու մասին: Անոնք Միացեալ Նահանգներուն եւ Եւրամիութեան խորհուրդ կու տան՝ Ա. դադարեցնել Հայաստանին յատկացուող օգնութիւնները, Բ. Եւրոպայի խորհուրդը պէտք է քննարկէ Հայաստանի անդամակցութեան սառեցման հարցը եւ Գ. Միացեալ Նահանգներն ու Եւրամիութիւնը պէտք է քննարկման առարկայ դարձնեն Սերժ Սարգսեանի եւ ուժային կառոյցներու ղեկավարներու արեւմուտք կատարելիք այցելութիւնները արգիլելու հարցը:*

*Զեկոյցի մանրամասնութիւնները տեսնել էջ 5-ի վրայ:*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿԱԲԵԿՈՒԱԾ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՎՏԱՆԳԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ

*Ապրիլ 8-ին Հայաստանի ընդդիմադիր կուսակցութիւնները հանդէս եկան յայտարարութեամբ՝ մտահոգութիւն յայտնելով Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման շուրջ վերջին զարգացումներուն նկատմամբ:*

*«Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման խնդրի շուրջ վերջին զարգացումները վտանգում են Լեռնային Ղարաբաղի ապագան ու խաղաղութեան հեռանկարները տարածաշրջանում, ապացուցում քոչարեանա-սարգսեանական վարչախմբի վարած արտաքին քաղաքական կուրսի սնանկութիւնը»,-ըսուած է Լեւոն Տէր-Պետրոսեանին սատարած 19 կուսակցութիւններու ստորագրութիւնը կրող յայտարարութեան մէջ: «Հայաստանի վարչախմբի ապաշնորհ քաղաքականութեան կործանարար արդիւնքների գագաթնակէտն էր ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի Մարտի 14-ի բանաձեւը, որով «վերահաստատուեց» Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը եւ պահանջուեց «բոլոր հայկական ուժերի անյապաղ, լիակատար եւ անվերապահ դուրս բերում Ատրպէյճանի Հանրապետութեան բոլոր գրաւեալ տարածքներից»: ՄԱԿ-ի Գլխաւոր Ասամբլեայի այս բանաձեւը Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան միջազգային դիրքերը վնասող աննախադէպ փաստաթուղթ է, որով փորձ է արւում կանխորոշել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը որպէս Ատրպէյճանի մաս եւ միակողմանի զիջումներ է պահանջւում հայկական կողմից», ըսուած է յայտարարութեան մէջ:*

*«1994 թուականին ռազմական եւ դիւանագիտական յաղթանակների շնորհիւ յաջողուել էր հասնել նրան, որ Լեռնային Ղարաբաղը ԵԱՀԿ-ի Բուդապեշտեան գագաթաժողովի կողմից ճանաչուեց*

***Շար.ը էջ 4***

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

# ՊԱՐՏՈՒԹԻՒՆ՝ ՉԿԱՅԱՑԱԾ ՊԱՐՏԻԱՅՈՒՄ

*Սերժ Սարգսեանը երբեմն յիշեցնում է լամանչեցի դոն Քիշոտին՝ սուր է ճօճում ողջ աշխարհի դէմ: Միայն թէ նա Սանչօ Պանսայի բոյին է, եւ նրա առջեւ ոչ թէ երեւակայական հակառակորդներ են, այլ՝ իրական:*

*Սպասուածին հակառակ, հիմա Հայաստանի իշխանութիւններն աջակցութիւն չեն ստանում անգամ Կրեմլից: Դրա ամենավառ վկայութիւնը ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցերում աւելի խորացող բացասական միտումներն են: Առաջին անգամ Մինսկի խմբի համանախագահները համատեղ յայտարարեցին, որ բանակցութիւնների սեղանին դրուած կարգաւորման փաթեթը հիմնուած է Ատրպէյճանի տարածքային ամբողջականութեան յարգման սկզբունքի վրայ, եւ չեն ճանաչում Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը: Երբեք Մինսկի խումբը նման կոշտ յայտարարութիւն չէր արել: Օրերս էլ Ռուսաստանի արտգործնախարար Սերգէյ Լաւրովը Պետական Դումայում յայտարարել է, որ Մադրիդում Հայաստանի եւ Ատրպէյճանի արտգործնախարարներին յանձնուած կարգաւորման բազային փաստաթուղթը լաւ հիմք է բանակցութիւնները շարունակելու համար: Ո՞րն է այդ փաստաթղթի առանձնայատկութիւնը: Այն, որ հաշուի առնելով ներկայիս ստատուս քվոն, զիջումներ պէտք է անի միայն Հայաստանը: Ատրպէյճանի միակ զիջումն այն է, որ պէտք է համաձայնի Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ արդէն իսկ առկայ միջանցքը մասամբ թողնելուն: Ատրպէյճանի դիրքերն այնքան են ամուր, որ հիմա այս հարցն են դարձնում սակարկութեան առարկայ: Ինչ վերաբերում է Ղարաբաղի հետագայ կարգավիճակին, ապա այն պէտք է որոշուի բանակցութիւնների միջոցով: Ինչպէս տեսնում ենք, այստեղ ոչ Քոչարեանը, ոչ Սերժ Սարգսեանը, ոչ, առաւել եւս, Օսկանեանը, ոչ էլ նոյնիսկ դիւանագիտական լեզուն իւրացրած Տիգրան Թորոսեանը հպարտանալու եւ պարծենալու ոչինչ չունեն:*

*Կարելի՞ էր արդեօք կանխել բանակցութիւնների նման ընթացքը: Միանշանակ՝ այո: Եթէ Արեւմուտքը հաւանութիւն է տուել Կոսովոյի անկախութեանը, կարող էր հաւանութիւն տալ նաեւ Լեռնային Ղարաբաղի անկախութեանը: Կամ էլ, առնուազն, առաւել հայանպաստ դիրքորոշում ընդունել: Սակայն պարզ զգացւում է, որ ոչ Փարիզը, ոչ էլ Վաշինգտոնը Երեւանին քաղաքական աջակցութիւն ցուցաբերելու ցանկութիւն չունեն: Նրանք առանց այն էլ մեզ մեծ լաւութիւն են անում, կանխելով կամ դէմ արտայայտուելով հարցի քննարկումներին ՄԱԿ-ում: Ժամանակին Լեւոն Տէր-Պետրոսեանը առիթ ունեցել է ասելու, որ միջազգային ատեաններում Ատրպէյճանի հիմնական յաղթաթուղթը նաւթն է, իսկ Հայաստանինը կարող է լինել ժողովրդավարութիւնը: Այս խօսքերի իմաստն այն է, որ Արեւմուտքը այլ մօտեցումներ կ՚արձանագրի ժողովրդավարական եւ բռնապետական Հայաստանների համար: Հայաստանի ետընտրական գործընթացներին անմիջապէս յաջորդող արտասահմանեան դիւանագէտների կոշտ յայտարարութիւնները վկայում են, որ այս թէզը հեռու չէ իրականութիւնից: Երբ Ռոբերդ Քոչարեանը հրամայում էր զինուորներին ու ոստիկաններին կրակել, նա սպաննում էր ոչ միայն անմեղ ցուցարարներին, այլեւ հարուածում էր հենց Ղարաբաղի շահերին: Իսկ միգուցէ նա այլասերուել է այն աստիճան, որ սեփական իշխանութեան պահպանումը վեր է դասում նաեւ իր հայրենի Ղարաբաղի անվտանգութիւնից: Ղարաբաղի անկախութիւնը ճանաչելու՝ Քոչարեանի մերկապարանոց յայտարարութիւնները դեռ ոչինչ չեն նշանակում: Քոչարեանը 10 տարի նախագահելու ընթացքում երբեք չի ասել, որ հարկաւոր է ճանաչել ԼՂՀ անկախութիւնը, իսկ պաշտօնից հեռանալուց մէկ շաբաթ առաջ նման բան է ասում: Սա կասկածի տակ է դնում նրա անկեղծութիւնը, յատկապէս եթէ հաշուի առնենք, որ Ատրպէյճանը առաջին անգամ չի հանդէս գալիս Ղարաբաղեան կարգաւորումը ՄԱԿ տեղափոխելու օգտին: Քոչարեանի ասածները աւելի շուտ ներքին սպառման համար են, Սերժ Սարգսեանի վրայ ազդեցութիւն ապահովելու ցանկութիւն:*

*Մինչ Սերժ Սարգսեանը փորձում էր շախ յայտարարել Իլհամ Ալիեւին, առաջինն ինքը մատ ստացաւ: Նա պատրաստւում էր Ալիեւին ասել, թէ նրա հետ խօսելիք չունի, եթէ վերջինս հարցը տեղափոխի ՄԱԿ, բայց չստացուեց: Դիւանագիտութիւնը «լաւ» տղերքի զբօսավայր չէ, ոչ էլ բանակցութիւնն է պէտք շփոթել գողական սխոդկեքի հետ: Կամ էլ Սերժ Սարգսեանը Ալիեւին շփոթել է իր նախարարների հետ, որոնք սիրում են լսել իրենց շէֆի հանդիմանանքները: Բոլոր դէպքերում, Ալիեւ-Սարգսեան չկայացած առաջին պարտիայում յաղթանակը շնորհուեց ատրպէյճանցուն: Եթէ Հայաստանը ցանկանում է վերսկսել բանակցութիւնների նորմալ ընթացքը, ապա, որքան էլ տհաճ է, ստիպուած կը լինի աւելի զիջող լինել, քան նախկինում: Եթէ, իհարկէ, Սերժ Սարգսեանի ցանկութիւնը ղարաբաղեան երկրորդ պատերազմը վերսկսելը չէ: Սակայն հաշուի առնելով բանակում ներկայումս տիրող անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը, հազիւ թէ հիմա դա լաւագոյն տարբերակն է: Մի բան ակնյայտ է. կարգաւորման աննպաստ ընթացքը կարող է շտկել միայն լեգիտիմութեան կասկած չյարուցող, ժողովրդավարական պետութիւն ղեկավարող նախագահը: Թէկուզ մէկ նորմալ ընտրական գործընթացը Ղարաբաղին շատ աւելին կը տայ, քան մի քանի դիւիզիաներ միասին վերցրած:*

**Ա. ԱՐԱՄԵԱՆ**
**«ՏԱՐԵԳԻՐ»**

# ՄԻ ՈՒՐՈՒԱԿԱՆ Է ՓԱԽՉՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՐՈՒԱԿԱՆԸ

*Բնական է, որ քառակողմ կոալիցիայի մաս կազմած կուսակցութիւններն իրենց այդ քայլը պէտք է բացատրէին երկրի կայունութեան եւ բարեփոխումների մղումով, ներկայացնէին որպէս հասարակական երկխօսութեանն ուղղուած գործողութիւն, եւ հաւաստիացնէին, որ այն, ինչ ամրագրուած է կոալիցիոն յուշագրում, դառնալու է իրականութիւն: Եւ թերեւս այնպիսի մի իրականութիւն, որ հասարակութիւնը յետոյ նրանց մի գուցէ նախատի նաեւ, որ այդ ամէնն իմանալով նրանք աւելի շուտ չկազմեցին այդ կոալիցիան: Կայ երկու տարբերակ: Նրանք, այսինքն այդ կուսակցութիւնները, կամ այդ մասին խօսում են հաւատալով իրենց խօսքին, կամ էլ պարզապէս զբաղուած են երեսպաշտութեամբ: Ի հարկէ, կեանքը ցոյց կը տայ, թէ որքանով են նրանց համոզմունքները, եթէ դրանք կան, համապատասխանում իրականութեանը: Սակայն խնդիրը հետեւեալն է, թէ ինչ են անելու այդ կուսակցութիւնները, երբ այդ խոստումները, կամ կոխալիցիոն յուշագրում ամրագրուած նպատակներն ու գործողութիւնները չդառնան իրականութիւն:*

*Ի հարկէ, քանի դեռ դրանք կան, միշտ ունեն իրականութիւն դառնալու հնարաւորութիւն, եւ ասենք եթէ չորս տարուայ ընթացքում ոչինչ էլ տեղի չունենայ, կամ չունենայ այնպէս եւ այնքան, որքան պահանջում է հասարակութիւնը, ապա չորս կուսակցութիւնները կ՚ունենան 2012 թուականի խորհրդարանի ընտրութիւնից յետոյ կրկին կոալիցիա կազմելու հիանալի նախադրեալ եւ հիմնաւորում: Եւ նոյնիսկ կարելի է վստահաբար ասել, որ նրանք անկասկած մինչեւ 2012 թուականը կոալիցիոն յուշագրի կէտերի մի զգալի մասը թողնելու են անկատար, որպէսզի, նախ, ունեան ընտրութեան շէմին իրարից բաժանուելու եւ իրար քննադատելու առիթ ու պատճառ, եւ երկրորդ, որպէսզի ապահովեն ընտրութիւնից յետոյ կրկին կոալիցիա կազմելու հիմք: Չէ որ երկրում պէտք է ինչ որ բան այնպէս չլինի, որ այդ կուսակցութիւնները արդարացնեն իրենց «կոալիցիացումը»:*

*Հետեւաբար, պէտք է ենթադրել, որ անկատար նպատակները կոալիցիոն քառեակի համար երաշխաւորում են գլխաւոր նպատակի յաւերժական իրականացումը, այսինքն 2003 թուականից յետոյ ձեւաւորուած ներիշխանական ստատուս-քուոյի պահպանութիւնը:*

*Թւում է , թէ ստատուս-քուոյի պահպանութեան աւելի կարճ ճանապարհ էլ կայ: Կարելի է իրականութիւն դարձնել այն, ինչ գրուած է յուշագրում, եւ հասարակութիւնն իր իսկ կամքով մի գուցէ պահպանի այդ կուսակցութիւնների իշխանութիւնը: Սակայն խնդիրն այն է, թէ կայ արդեօք իրական բարեփոխումների իրական կամք: Այստեղ նախ պէտք է ճշդել, որ թէեւ կուսակցութիւնները չորսն են, այդուամենայնիւ ամէն ինչ կախուած է մէկից՝ Հանրապետականից: Այսօր այդ կուսակցութեան մէջ են կենտրոնացած այն մարդիկ, որոնք տնօրինում են Հայաստանի ռեսուրսների եթէ ոչ 100, ապա գրեթէ 90, կամ առնուազն 80 տոկոսը: Այս փաստն ինքնին խօսուն է: Արդեօք միամիտ չէ կարծել, որ այդ մարդիկ պատրաստ կը լինեն գնալ իրավիճակի որեւէ փոփոխութեան, բացի նրանից, որ այդ փոփոխութիւնը լինի ուղղակի կոսմետիկ, ձեւական, հասարակութեան աչքին թոզ փչելու համար: Արդեօք այն մենատէր գործարարներն ու գործարար պաշտօնեաները, որ խմբուել են Հանրապետական կուսակցութեան մէջ, կը գնան մի քայլի, եթէ իմանան, որ այդ քայլի հետեւանքով իրենք ընկնելու են օրէնքից կախուածութեան մէջ:*

*Իսկ կարող են արդեօք կոալիցիայի անդամ միւս երեք կուսակցութիւնները՝ ՀՅԴ-ն, ԲՀԿ-ն ու ՕԵԿ-ը, Հանրապետականին մղել իրական փոփոխութիւնների: ԲՀԿ մասով երեւի թէ ամէն ինչ պարզ է: Իսկ ՕԵԿ-ն ու ՀՅԴ-ն, ըստ ամենայնի, չեն կարող: Նախ, դրա համար ցանկութիւն է պէտք, իսկ ցանկութիւն այդ կուսակցութիւնները չեն արտայայտել: Խօսքը միայն բառերով արտայայտած ցանկութեան մասին չէ: Պէտք էր այդ ցանկութիւնն արտայայտել գործով: Իսկ գործը կը լինէր այն, որ Դաշնակցութիւնն ու Օրինաց երկիրը ոչ թէ մտնէին կոալիցիա, այլ յայտարարէին, որ մնում են եւ դառնալու են կոշտ ընդդիմութիւն, որպէսզի Հանրապետականին մղեն լուրջ փոփոխութիւնների: Խօսքն ամենեւին Լեւոն Տէր-Պետրոսեանին միանալու մասին չէ, ինչպէս ընկալում են այդ կուսակցութիւնները, երբ որեւէ մէկը նրանց մեղադրում է իշխանութեան հետ կրկին գործակցելու համար: Դրա այլընտրանքն ամենեւին էլ Լեւոն Տէր-Պետրոսեանին միանալը չէր: Բայց եթէ ՕԵԿ-ն ու Դաշնակցութիւնը յստակ ընդդիմադիր դիրքորոշում որդեգրէին եւ մնային իրենց այդ կեցուածքին հաւատարիմ, ապա Հանրապետականը փոփոխութիւնների շատ աւելի լուրջ դրդապատճառ կ՚ունենար, քան այժմ: Իսկ այժմ ՕԵԿ-ը եւ Դաշնակցութիւնը ՀՀԿ-ի վրայ որեւէ ազդեցութիւն չունեն, քանի որ եթէ չունես հասարակական աջակցութիւն, ապա իշխանութեանը չես կարող մղել ոչնչի:*

**ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ**
**«ԼՐԱԳԻՐ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

**ԼՈՒՐԵՐ**

## ԱՂՈՒԱՆ ՅՈՎՍԷՓԵԱՆԻ ՎԱՐԴԵՐԸ ՆԵՏԵՑԻՆ ՄԱՅԹԵՐԻՆ



*Քաղաքական բանտարկեալներու հարազատները ցոյց կը կատարեն Դատախազութեան շէնքին առջեւ*

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:* «Մեզ ձեր ծաղիկները պէտք չեն: Մեր տղամարդկանց ձերբակալել էք, ու մեզ էլ դեռ համարձակւում էք ծաղիկ տալ: Ձեր լկտիութիւնը չափ ու սահման չունի: Էս ծաղիկները կը տաք Սերժին ու Ռոբերդին: Այսօր նրանց տօնն էր, նրանք, որ տղամարդ լինէին, մեր տղամարդկանցից չէին վախենայ եւ ձերբակալի»,- նման խօսքերով ՀՀ Գլխաւոր դատախազութեան մօտ Ապրիլ 7-ին հաւաքուած Տէր-Պետրոսեանի թիմի ձերբակալուածների հարազատներն ու համախոհները մայթերին նետեցին՝ Գլխաւոր դատախազ Աղուան Յովսէփեանի ուղարկած ծաղիկները «Ազատութիւն քաղբանտարկեալներին» պաստառներով եւ բոլոր ձերբակալուածների դիմանկարները ձեռքերին, գրեթէ բոլորը սեւ հագուստով եւ գլխաշորերով դատախազութեան շէնքի մօտ բողոքի ցոյց էր կազմակերպուել: Իրենց նամակը նրանք հնարաւորութիւն չունեցան առձեռն յանձնել գլխաւոր դատախազին: «Մեզ նոյնիսկ ընդունարան թոյլ չտուեցին մտնել: Ասացին, որ դիմումը գցենք արկղը եւ հեռանանք»,- ասաց դատախազութեան շէնք մտած կանանցից մէկը:

Երեւանից Սեդա Աղաեանը, որի հարազատներից ոեւէ մէկին չեն ձերբակալել, սակայն շարունակելու է պայքարել բոլորի համար, որոնք դարձել են անօրինականութեան զոհերը, նշեց.«Մեր երկրում երեք դաւաճան կայ՝ Ռոբերդ Քոչարեան, Սերժ Սարգսեան եւ Արթուր Բաղդասարեան: Մարտի 1-ի արիւնը նրանց վրայ է: Աստուած է նրանց պատիժը տալու: Ես չեմ վախենում: Ինձ ասում են մի խօսիր, բայց ես խօսում եմ: Ի՞նչ պէտք է անեն ինձ: Պէտք է սպանհե՞ն, կանխե՞ն: Թող ինչ ուզում են անեն, ես չեմ լռելու: Ես կորցնելու բան չունեմ»: «Ինչպէս մեր հարազատներն էին ասում, մենք էլ ենք ասում. «Պայքար, պայքար մինչեւ վերջ:

Օրէնքը մենք ենք, օրէնքը ժողովուրդն է, եւ իշխանութիւնները մեզ չպէտք է ասեն, թէ ինչպէս եւ որտեղ անցկացնենք մեր տօնը՝ Ապրիլի 7-ը»,- ասաց «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղխորհրդի ձերբակալուած անդամ Սմբատ Այվազեանի աղջիկը՝ Տաթեւիկը:

Իսկ տարեց մի կին անընդհատ կրկնում էր. «Թող Սերժ Սարգսեանը չհամարձակուի իր ձեռքը դնել Սուրբ գրքին եւ երդուել:

## «ՈՒՄ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՀՐՈՒԵՑ ՍՊԱՆԴԸ»,- ՀԱՐՑ Է ՏԱԼԻՍ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԸ

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:* Ապրիլ 8-ին Խորհրդարանում պատգամաւորների յայտարարութիւնների ժամին, Մարտի 1-ի դէպքերի մասին յիշեց Խորհրդարանի միակ ընդդիմադիր խմբակցութիւնը՝ «Ժառանգութիւնը»: Անահիտ Բախշեանը յիշեցրեց, որ ընտրութիւններից անցել է 50 մղձաւանջային օրեր, եղել է Մարտի 1, եւ պաշտօնեաներից ոեւէ մէկը հրապարակաւ չի տուել բացատրութիւն կատարուած իրադարձութիւնների համար. 8 երիտասարդ է զոհուել հանրահաւաքից 1 կմ հեռաւորութեան վրայ՝ Մաշտոցի պողոտայի ծայրամասում:

«Ո՞ւմ կողմից հրահրուեց այդ սպանդը»,- հարց հնչեցրեց Անահիտ Բախշեանը եւ թուարկեց զոհուածների անունները՝ Զաքար Յովհաննիսեան՝ 28 տարեկան, երբեք չի մասնակցել հանրահաւաքների, Դաւիթ Պետրոսեան՝ 28 տարեկան, յայտնուել է այդ դժոխքի մէջ պատահականօրէն, Գրիգոր Գէորգեան՝ աշխատանքից տուն էր գնում, պարզապէս պէտք է անցներ Պարոնեան փողոցով, Գոռ Քլոյեան՝ 20 տարեկան, ԲՀԿ անդամ, Սերժ Սարգսեանի ընտրութեան համար ակտիւ պայքարած, Յովհաննէս Յովհաննիսեան՝ 45 տարեկան, հանգիստ, խաղաղ մարդ. ո՞ւմ դէմ էր կռւում, Տիգրան Խաչատրեան՝ 23 տարեկան, Արմէն Ֆարմանեան՝ 28 տարեկան եւ վերջապէս Համլետ Թադեւոսեան՝ 30 տարեկան, հայկական բանակի սպայ. ինչու զոհուեցին այս մարդիկ, ո՞ւմ պաշտպանելիս, ո՞ւմ վրայ յարձակուելիս, օդում առկայ այս հարցերի պատասխանը դեռեւս չի տրուել,- նկատեց Անահիտ Բախշեանը եւ յիշեցնելով, որ վաղը լրանում է զոհուածների քառասունքը, նկատեց, որ. «Ու այդ օրը նախատեսուած են օրուան ոչ համահունչ անհամեստ միջոցառումներ»:

## «ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ ԿԱՐԳԱԽՕՍ ՉԷ»

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»:* «Իշխանութիւնները պէտք է շահագրգիռ լինեն՝ համապատասխան քայլերով շահելու ժողովրդի վստահութիւնը: Պէտք է հասկանան՝ ռեպրեսիւ մեթոդներով այս ճգնաժամն յաղթահարել ուղղակի անհնար է»,- յայտարարեց ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեանը: Իսկ երկխօսութեան համար, ըստ նրա, հարկաւոր են նպաստաւոր պայմաններ: «Առաջնահերթ խնդիր ենք համարում՝ դադարեցնել քաղաքական հետապնդումները, ազատ արձակել քաղբանտարկեալներին, թուլացնել լարուածութիւնը, քրէական յանցանք կատարած անձանց տարանջատել իրենց քաղաքական դիրքորոշումն արտայայտող մարդկանցից: Թէ Ազոյի խումբը, թէ Եւրոխորհուրդը պահանջում են նաեւ վերանայել հանրահաւաքների, երթերի մասին օրէնքում կատարուած փոփոխութիւնները: Բնականաբար երկխօսութիւնը չպէտք է դառնայ ինքնանպատակ կարգախօս, պէտք է ձեւաւորուի յստակ օրակարգ»,- կարծում է Դեմիրճեանը՝ աւելացնելով, որ այդ ճգնաժամը պէտք է հանգուցալուծուի նոր ընտրութիւնների միջոցով: Ըստ նրա՝ արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների անցկացումը տրամաբանական պահանջներից մէկն է, քանի որ «խորհրդարանում ակնյայտօրէն չեն արտացոլւում հասարակական տրամադրութիւնները»:



*ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճեան*

Իշխանական կոալիցիայի ձեւաւորումը պայթունավտանգ եւ լարուած իրավիճակի խնդիրը, Դեմիրճեանի համոզմամբ, չի լուծում: «Պէտք չէ ինքնախաբէութեամբ զբաղուել, թէ իբր իրենք վայելում են հասարակութեան 70-80 տոկոսի աջակցութիւնը: Անձերի պայմանաւորուածութիւնը պէտք չէ ներկայացնել որպէս ազգային համաձայնութիւն: Իրական երկխօսութիւն պէտք է ժողովրդի հետ սկսել. սա ի վերջոյ պայքար է իրենց իրաւունքների համար եւ պէտք է ձեռք բերել նրա վստահութիւնը»,- ընդգծեց նա:

Ըստ նրա՝ Մարտի 1-ի իրադարձութիւնների պատճառը ՀՀ նախագահի ընտրութիւնների ժամանակ իրականացրած բռնութիւններն ու կեղծիքներն էին: Իսկ այն, ինչ տեղի ունեցաւ Միասնիկեանի արձանի յարակից տարածքում, ըստ Դեմիրճեանի՝ հետեւանք էր խաղաղ ցուցարարների նկատմամբ Ազատութեան Հրապարակում առաւօտեան ուժի գործադրմամբ: Ինչ վերաբերում է այն յայտարարութիւններին, թէ իբր Ազատութեան Հրապարակում կիրառւում էին ինչ-որ տեխնոլոգիաներ, ապա Ստեփան Դեմիրճեանը նշեց, որ պատճառը իշխանութիւնների կողմից կիրառուած տեխնոլոգիաներն էին, որոնք կրում էին կազմակերպուած բնոյթ:

Ստեփան Դեմիրճեանը նշեց նաեւ, որ Մարտի 8-ից յետոյ, իրեն այլեւս չեն հրաւիրել հարցաքննութեան:

## ՍՈՒՐԷՆ ՍՈՒՐԷՆԵԱՆՑԸ ԴԱԴԱՐԵՑՐԵԼ Է ՀԱՑԱԴՈՒԼԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* «Հանրապետութիւն» կուսակցութեան քաղաքական խորհրդի անդամ Սուրէն Սուրէնեանցը դադարեցրել է 10 օրից աւելի տեւած հացադուլը: Այդ մասին «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական վարչութեան մամուլի քարտուղար Արսէն Բաբաեանը:

Մինչ այդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի գրասենեակի ներկայացուցիչ Արմէն Խաչատրեանը «Ազատութիւն» ռադիոկայանին փոխանցել էր, որ «վատացել է Սուրէն Սուրէնեանցի առողջական վիճակը, վատ է նաեւ, որ շաբաթ է, վաղը՝ կիրակի, եւ փաստաբանը, փաստօրէն, չի կարողանայ հանդիպել Սուրէնեանցի հետ»:

«Մենք ուղղակի խնդրում ենք, որ այն մարմինները, որոնք պարտաւոր են Սուրէնեանցին օգնութիւն ցոյց տալ, հետեւեն նրա առողջական վիճակին, որպէսզի անընդհատ ուշադրութեան տակ պահեն նրան», - ասել էր Խաչատրեանը:

Արդարադատութեան նախարարութեան քրէակատարողական վարչութեան մամուլի քարտուղարը վստահեցրեց, որ Սուրէնեանցը գտնւում է բժիշկների հսկողութեան տակ, եւ նրա առողջական վիճակը բաւարար է:

## ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՄՆԱՑ ՆՈՅՆԸ

Ալավերդի քաղաքապետի աթոռը եւս չորս տարի կը զբաղեցնի գործող քաղաքապետ, ՀՀԿ անդամ Արթուր Նալբանդեանը: Ապրիլ 6-ին Ալավերդի քաղաքում անցկացուեցին քաղաքապետի ընտրութիւններ, որին մասնակցում էին երկու թեկնածու՝ գործող քաղաքապետ Արթուր Նալբանդեանն ու ՀՅԴ Ալբերտ Սարգսեանը: 83 տոկոս ձայների մեծամասնութեամբ յաղթեց գործող քաղաքապետը:

Ըստ ընտրացուցակների՝ ընտրութեան մասնակցելու իրաւունք ունէին 16233 ընտրող, որից ընտրութեան է մասնակցել 7752-ը,այսինքն՝ 48 տոկոսը:

ՀՀԿ-ական Արթուր Նալբանդեանը ստացել է 6393 քուէ, իսկ նրա մրցակից ՀՅԴ Ալբերտ Սարգսեանը 1216 քուէ: 142 քուէաթերթիկ համարուել է անվաւեր

Ընտրութիւնների ընթացքում ոչ մի բողոք, ոչ մի բախում չի արձանագրուել:

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՎԵՆԵՏԻԿԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՒ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-Ը ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ ԵՆ ՀԱՄԱՐԵԼ ՀԱՆՐԱՀԱՒԱՔՆԵՐ, ԵՐԹԵՐ ԵՒ ՑՈՅՑԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Եւրախորհրդի Վենետիկի յանձնաժողովը եւ ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատութիւնների եւ մարդու իրաւունքների գրասենեակը համատեղ իրաւաբանական կարծիք են հրապարակել՝ եզրակացնելով, որ հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին Հայաստանի օրէնսդրական փոփոխութիւնները լուրջ մտահոգութիւնների տեղիք են տալիս:*

*Համատեղ յայտարարութեան մէջ նշուած է, որ Մարտի 17-ին ընդունուած օրէնսդրական փոփոխութիւնները՝ ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին, քննարկուել են ԺՀՄԻԳ-ի փորձագիտական խմբի եւ Վենետիկի յանձնաժողովի կողմից՝ Հայաստանի Ազգային Ժողովի խօսնակի խնդրանքով:*

*Հիմք ընդունելով նախնական գնահատականը, Եւրախորհուրդի Վենետիկի Յանձնաժողովը եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Փորձագիտական Խումբը ընդունելի չեն համարել առաջարկուած օրէնսդրական փոփոխութիւնները՝ այն չափով, որ դրանք ճապէս աւելի են սահմանափակում հաւաքներ անցկացնելու իրաւունքը, ասուած է համատեղ փաստաթղթում:*

*Օրէնսդրական փոփոխութիւնները խստացնում են ինքնաբուխ հանրահաւաքներին վերաբերող դրոյթները եւ սահմանափակում անկախ դատարանի հնարաւորութիւնը՝ քննելու հաւաքները հասարակական կարգի համար վտանգ պարունակելու մասին որոշումները, նշում են Եւրախորհուրդի եւ ԺՀՄԻԳ-ի փորձագէտները իրենց իրաւաբանական եզրակացութեան մէջ:*

*Փորձագէտները քննադատում են նաեւ փոքր իրադարձութիւնները աւելի մեծ հաւաքների վերածուելու մասին դրոյթի վերացումը՝ համարելով, որ այն լաւ փորձառութեան օրինակ էր եւ դարձնում էր այդ օրէնքը առաջադիմական՝ իր նախնական տեսքով:*

*Եւրախորհուրդի Վենետիկի Յանձնաժողովի եւ ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական Հաստատութիւնների ու Մարդու Իրաւունքների Գրասենեակի համատեղ կարծիքը փոխանցուել է Ազգային Ժողովին՝ Մարտի 28-ին: Այն քննարկուելու է Ազգային Ժողովի ներկայացուցիչների հետ՝ Ապրիլի 15-ին եւ 16-ին:*

# ՀՀ ՕՄԲՈՒԴՍՄԵՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԻՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ



*ՀՀ Մարդու Իրաւունքների Պաշտպան Արմէն Յարութիւնեան*

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-Ֆէ»: ՀՀ Մարդու Իրաւունքների Պաշտպանի կարծիքը «Ժողովներ, հանրահաւաքներ, ցոյցեր եւ երթեր անցկացնելու մասին» ՀՀ օրէնքի փոփոխութիւնների որոշ դրոյթների վերաբերեալ հիմնականում համընկնում է Վենետիկի Յանձնաժողովի եզրակացութեան հետ: Տեղեկացնում է ՀՀ Մարդու իրաւունքների Պաշտպանի տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի բաժինը:*

*Բազմաթիւ քաղաքացիներ ՀՀ Մարդու Իրաւունքների Պաշտպանին առաջարկութիւն են ներկայացրել դիմել սահմանադրական դատարան «Ժողովներ, հանրահաւաքներ, ցոյցեր եւ երթեր անցկացնելու մասին» ՀՀ օրէնքում 2008 թուականի Մարտի 20-ին կատարուած փոփոխութիւնները Սահմանադրութեան 2-րդ գլխի դրոյթներին համապատասխանութեան հարցով:*

*Հաշուի առնելով այն հանգամանքը, որ ըստ պաշտօնական հաղորդագրութեան 2008 թուականի Ապրիլի 15-16-ին Ազգային Ժողովում պատգամաւորների եւ միջազգային փորձագէտների միջեւ տեղի են ունենալու համապատասխան դրոյթների քննարկումներ, Մարդու Իրաւունքների Պաշտպանը նպատակայարմար է գտնում անդրադառնալ սահմանադրական դատարան դիմելու խնդրին քննարկումների արդիւնքների մասին տեղեկութիւններ ստանալուց յետոյ:*

*«Կարեւոր է հաշուի առնել, որ ներկայիս բեւեռացման հիմնապատճառների վերացման համար իշխանութիւնների կողմից պէտք է ոչ միայն կիրառուեն իրաւական բնոյթի միջոցներ, այլեւ մշակուի եւ իրականացուի հասարակական կեանքի ժողովրդավարացմանն ուղղուած քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային բարեփոխումների համալիր ծրագիր»,- ասւում է հաղորդագրութեան մէջ:*

# ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ

*Ապրիլ 8-ին Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան Խորհուրդը միաձայնութեամբ որոշեց վարչապետի պաշտօնին առաջադրել Կեդրոնական Դրամատան Նախագահ Տիգրան Սարգսեանի թեկնածութիւնը:*

*Սահմանադրութեան համաձայն, վարչապետին կը նշանակէ Նախագահը՝ Ազգային Ժողովի խմբակցութիւններու հետ խորհրդակցութիւններու հիման վրայ:*

*Վարչապետ նշանակումը պէտք է արժանանայ պատգամաւորներու մեծամասնութեան վստահութեան:*

*Ապրիլ 9-ի երդման արարողութենէն ետք, Սերժ Սարգսեան ստորագրեց իր հրամանագիր՝ Նոր վարչապետի նշանակման մասին:*



*Տիգրան Սարգսեան*

# ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍՈՒԳԻ ՄԷՋ ԴԻՄԱՒՈՐԵՑ

*Շարունակուած էջ 1-էն*

*գոռալով եւ ճնշում գործադրելով»:*

*Ժամը 14-ի մօտ, մահակներով եւ վահաններով զինուած ոստիկանները շրջապատեցին Միասնիկեանի արձանը, իսկ հաւաքուածները սկսան վանկարկել՝ «Ազատութիւն», «Պայքար, պայքար մինչեւ վերջ», «Լեւոն Նախագահ», այլ կարգախօսներ:*

*Արձանի պատուանդանին, որը ամբողջութեամբ ծածկուած էր ծաղիկներով, փակցուած էին Մարտի 1-ին զոհուածներու լուսա-նկարները:*

*Զոհուածներու քառասունքը նշուեցաւ նաեւ մարզերու մէջ: Մասնաւորապէս Ապարանի մէջ տասնեակներով մարդիկ ծաղիկներ դրին Զոհուած ազատամարտիկներու յուշարձանին: Գիւմրիի մէջ ինքնաբուխ կերպով հաւաքուած մարդիկ ծաղիկներ դրին Երկրաշարժի զոհերու յուշարձանին եւ մոմեր վառեցին եկեղեցիներու մէջ:*

*Անտեսելով ժողովուրդի զգացումները, երեկոյեան Հանրապետութեան հրապարակի վրայ կազմակերպուած է տօնական համերգ՝ Սերժ Սարգսեանի երդման արարողութեան առիթով: Սակայն, ցայտաղբիւրի մօտ հաւաքուած խումբ մը երիտասարդներ սկսած են վանկարկել «Լեւոն, Լեւոն»: Ըստ ականատեսներու, ոստիկանները յարձակելով այդ երիտասարդներուն վրայ, սկսած են ծեծել զանոնք:*

*Նոյն ժամերուն, խումբ մը քաղաքացիներ, որոնք արտաքին գործոց Նախարարութեան շէնքի մօտէն վանկարկելով «Սերժիկ հեռացիր», «Լեւոն Նախագահ»՝ կը քալէին դէպի Աբովեան փողոց, յարձակումի ենթարկուած են խումբ մը ոստիկաններու կողմէ, որոնք դաժան ծեծի ենթարկած են մեծ մասամբ կին եւ երեխայ այդ ցուցարարները:*

*«Ես բղաւում էի Լեւոն նախագահ, երբ իմ վրայ յարձակուեցին եւ հայհոյելով սկսեցին գլխիս հարուածել: Ինձ ծեծեցին 5 հոգով: Մի քանիսի ձեռքերն էլ ոլորեցին եւ տարան»,- պատմեց Ռոբերդ Աբրահամեան: Նոյն պահուն դաժան ծեծի ենթարկուած է նաեւ Ղարաբաղ կոմիտէի անդամ Սամսոն Ղազարեանը, որը հանգիստ կեցած էր նախարարութեան շէնքի մօտ:*

*Այս դէպքերէն ետք ժողովուրդը հաւաքուեցաւ Հիւսիսային պողոտայի վրայ, ուր շարունակեցին վանկարկել «Սերժիկ մարդասպան», «Սերժիկ հեռացիր», «Լեւոն Նախագահ»: Վանկարկումները կ'ընդհատուէին հայրենասիրական երգերով: Մօտ 40 րոպէ յետոյ ոստիկանները յայտարարեցին. «Ձեր գործողութիւնները անօրինական են»:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԿԱԲԵԿՈՒԱԾ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Շարունակուած էջ 1-էն*

*հակամարտութեան լիիրաւ կողմ, ինչով սկիզբ դրուեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ինքնորոշման միջազգային ճանաչմանը: Սակայն 1999-ին ստորագրելով ԵԱՀԿՍտամբուլի «Խարտիան», Հայաստանի իշխանութիւնները նախ ըստ էութեան ճանաչեցին Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, ապա նաեւ վարչախմբի յանցաւոր նախաձեռնութեամբ Լեռնային Ղարաբաղը դուրս մղուեց բանակցային գործընթացից, ինչի հետեւանքով Լեռնային Ղարաբաղի պայքարը ինքնորոշման համար վերածուեց տարածքային վէճի Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ»:*

*Յայտարարութեան հեղինակները շարունակելով կ'ըսեն,-«Բանաձեւի անցկացումը ՄԱԿ-ում կանաչ լոյս է վառել միջազգային տարբեր ատեաններում ատրպէյճանանպաստ փաստաթղթերի ընդունման համար, ինչին ի զօրու չի լինելու դիմագրաւել հեղինակութիւնը կորցրած ՀՀ դիւանագիտութիւնը: Ատրպէյճանն ստացաւ այնքան հզօր յաղթաթուղթ, որ արդէն իրեն իրաւունք է վերապահում խօսել բանակցութիւններից ու հանդիպումներից հրաժարուելու մասին: Դրա վկայութիւնն էր Հայաստանի իշխանութիւնների յուսահատ փորձերը հանդիպում կազմակերպել Բուխարեստում Ապրիլի 3-ին կայացած ՆԱՏՕ-ի գագաթաժողովի ընթացքում: Չնայած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աջակցութեանը՝ այն մերժուեց Ատրպէյճանի կողմից»:*

*«Լեռնային Ղարաբաղի փրկութեան գործում մենք ունենք մէկ միջոց ու ճանապարհ. Հայաստանը դարձնել բարձր լեգիտիմ իշխանութեամբ օժտուած ժողովրդավարական երկիր, որպէս այդպիսին միջազգային ասպարէզում ձեռք բերել արժանի տեղ եւ հեղինակութիւն: Միայն այդ դէպքում մենք կարող ենք դառնալ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման խնդրում կարեւոր գործօն եւ հասնել արժանապատիւ խաղաղութեան հաստատման»,- կ'եզրափակէ յայտարարութիւնը, որու տակ ստորագրած են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, Հայաստանի Ժողովրդական Կուսակցութիւնը, «Հանրապետութիւն» Կուսակցութիւնը, Հայոց Համազգային Շարժումը, Ժողովրդավարական Ուղի կուսակցութիւնը եւ այլ կուսակցութիւններ:*


ՄԱՍԻՍ

ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ «ԽՈՐԸ ՃԳՆԱԺԱՄ Է»

Միջազգային ճգնաժամային խումբը Ապրիլ 8-ին հրապարակած ծաւալուն զեկոյցում իր մօտեցում է յայտնում Հայաստանում ստեղծուած կացութեան առթիւ՝ իրավիճակը բնութագրելով որպէս «ներքաղաքական խորը ճգնաժամ»:

Դրա ծագման անմիջական պատճառները, ըստ խմբի փորձագէտների, թերութիւններով անցած նախագահական ընտրութիւններն էին, դրանց յաջորդած ընդդիմութեան ցոյցերի բռնի ճնշումը, Երեւանում յայտարարուած արտակարգ դրութիւնն ու ընդդիմադիրների լայնածաւալ ձերբակալութիւնները:

Իսկ ի՞նչ է անհրաժեշտ անել ճգնաժամը յաղթահարելու համար: Այս առումով Միջազգային ճգնաժամային Խումբը յստակ քայլերի մի ողջ փաթեթ է առաջ քաշում: «Լեգիտիմութեան ճգնաժամից խուսափելու եւ քաղաքական կայունութիւնը վերականգնելու համար» զեկոյցի հեղինակները Հայաստանի իշխանութիւններին առաջարկում են «վստահութիւն ներշնչող երկխօսութեան» մէջ մտնել ընդդիմութեան հետ: Խումբը նաեւ խորհուրդ է տալիս «ազատ արձակել բոլոր այն անձանց, որոնք բանտարկուել են իրենց քաղաքական ակտիվութեան պատճառով, դադարեցնել ընդդիմադիրների ձերբակալութիւններն ու նրանց ուղղուած սպառնալիքները՝ այդ թւում այն գործողութիւնները, որոնք ուղղուած են Փետրուարի 19-ի ընտրութիւնների ընթացքում [Սերժ Սարգսեանի] հիմնական մրցակցի, Նախկին Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի դէմ»:

Մարտի 1-ին մայրաքաղաքի կենտրոնում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերեալ խմբի փորձագէտների տեսակէտը հետեւեալն է. - «Իշխանութիւնները պէտք է նախաձեռնեն Մարտի 1-ի իրադարձութիւնների անկախ հետաքննութիւն՝ միջազգային մասնակցութեամբ, ինչպէս նաեւ պարտաւորութիւն ստանձնեն՝ պատժել բոլոր այն ոստիկաններին, որոնք անօրինականօրէն զէնք են կիրառել քաղաքացիների նկատմամբ»:

Բացի այդ, Միջազգային ճգնաժամային Խումբը իշխանութիւններին կոչ է անում վերացնել հանրահաւաքների մասին օրէնքում «արտակարգ դրութեան ռեժիմի գործողութեան օրերին կատարած փոփոխութիւնները», հետաքննել ընտրութիւնների օրը տեղամասերում արձանագրուած բռնութիւնները, որոնց թիրախ էին դարձել ընդդիմադիր կուսակցութիւնների դիտորդները: Կառավարութեանը կոչ է արւում վերացնել լրատուամիջոցների գործունէութեան վրայ սահմանուած բոլոր արգելքները:

Ինչ վերաբերում է հայաստանեան ընդդիմութեանը, ապա այն, ըստ Միջազգային ճգնաժամային Խմբի, եւս պէտք է «առանց որեւէ նախապայմանի եւ առանց յապաղելու» երկխօսութեան մէջ մտնի կառավարութեան հետ:

Զեկոյցի հեղինակները ընդդիմութեան առաջնորդներին խորհուրդ են տալիս Սահմանադրական Դատարանի Մարտի 8-ի վճիռը վիճարկել Մարդու Իրաւունքների Եւրոպական Դատարանում: Խմբի փորձագէտները ընդդիմութեանը նաեւ կոչ են անում բացառել ցանկացած քայլ, որը կարող է հանգեցնել անկարգութիւնների, մասնաւորապէս՝ «պետական հիմնարկների արգելափակմանն ու այդ հաստատութիւնների գործունէութեան համար սպառնալիքների ստեղծմանը»:

Հրապարակուած այս զեկոյցի մի քանի դրոյթներ վերաբերում են հայաստանեան վերջին իրադարձութիւնների միջազգային արձագանքին: Միջազգային ճգնաժամային խմբի փորձագէտները բաւական լուրջ քննադատութեան են ենթարկում արեւմտեան կառոյցներին՝ դրանց արձագանքը անուանելով «ոչ համարժէք»:

Քաղաքական զարգացումների այս փուլում, ըստ խմբի անդամների, Եւրամիութիւնն ու Միացեալ Նահանգները պէտք է խրախուսեն բոլոր առաջատար քաղաքական ուժերին, որպէսզի դրանք մտնեն ուղղակի բանակցութիւնների մէջ միմեանց հետ. - «Բացի այդ, Արեւմուտքը միանշանակօրէն պէտք է հասկացնի Սարգսեանի վարչակազմին, որ բնականոն յարաբերութիւններ չեն կարող հաստատուել այնքան ժամանակ, քանի դեռ քաղաքական ուժերի հաշտեցմանն ուղղուած լուրջ քայլեր չեն ձեռնարկուել եւ քանի դեռ չեն վերացուել ներկայ անկայունութեան խորքային պատճառները»:

Ըստ խմբի փորձագէտների՝ եթէ Հայաստանի իշխանութիւնները այնուամենայնիւ չդիմեն վերը նշուած քայլերին, ապա հարկ կը լինի մտածել աւելի կտրուկ գործողութիւնների մասին:

Իրադարձութիւնների զարգացման նման անբարենպաստ սցենարի դէպքում Միջազգային ճգնաժամային Խսումբը Միացեալ Նահանգներին եւ Եւրամիութեանը խորհուրդ է տալիս. «1. Դադարեցնել Հայաստանին յատկացուող օգնութեան տրամադրումը», «2. Եւրոպայի խորհուրդը պէտք է քննարկի Հայաստանի անդամակցութեան սառեցման հարցը» եւ «3. Միացեալ Նահանգներն ու Եւրամիութիւնը պէտք է քննարկման առարկայ դարձնեն դիւանագիտական էմբարգոյի հարցը՝ արգելք դնելով Նախագահ Սարգսեանի եւ ուժային կառոյցների ղեկավարների՝ Արեւմուտք կատարուող ցանկացած այցելութեան վրայ»:

Այս վերջին քայլի անհրաժեշտութիւնը, ըստ խմբի փորձագէտների, կարող է ծագել՝ եթէ լինեն բռնութեան նոր դէպքեր:

Ինչ վերաբերում է զեկոյցի նկարագրական մասին, ապա այն բաւական մանրամասնօրէն անդրադառնում է յատկապէս Մարտի 1-ի իրադարձութիւններին՝ արձանագրելով, որ «երկու կողմից էլ այդ օրը բռնարարքներ արձանագրուեցին, սակայն կասկած չկայ, որ խաղաղ ցուցարարների հանդէպ Մարտի 1-ի առաւօտեան Ազատութեան Հրապարակում կառավարութեան իրականացրած գործողութիւններն էին, որ հետագայում հանգեցրին նման ողբերգական իրադարձութիւնների»:

Միջազգային ճգնաժամային Խմբի այս զեկոյցում նաեւ փորձ է արւում հասկանալ, թէ որոնք էին առկայ ճգնաժամի խորքային պատճառները: Ըստ խմբի մասնագէտների, դրանք են՝ իշխանութեան կենտրոնացումը գործադիր մարմինների, բանակի եւ անվտանգութեան ծառայութիւնների ձեռքում, դատարանների փաստացի անազատութիւնն ու Հայաստանում գործող հիմնական լրատուամիջոցներում առկայ կառավարական գրաքննութիւնը:

«Ազատութիւն» ռ/կ

# ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ



2008թ Ապրիլի 8-ին երեկոյան ժամը 6:00-ին Հոլիվուդի Լիթըլ Արմենիա Թաղամասում աւելի քան 5000 ամերիկահայեր իրենց բողոքը արտայայտեցին Հայաստանում մի քանի ժամ յետոյ կայանալիք նախագահի երդման արարողութեան կապակցութեամբ: Բողոքի ցոյցի մասնակիցները ստորագրեցին ցոյցի կողմից դիմում՝ ուղղուած ԱՄՆ եւ Եւրոպական երկրների կառավարութիւններին, որպէսզի նրանք չճանաչեն Սերժ Սարգսեանին որպէս ընտրուած ՀՀ նախագահ, ձեռնամուխ լինեն անկախ միջազգային հետաքննութիւն անցկացնելուն, աջակցեն անյապաղ ազատելու քաղաքական բանտարկեալներին եւ Հայաստանում ժողովրդավարական կառավարման համակարգ վերահաստատելուն: Ցոյցի ընթացքում մասնակիցները մէկ րոպէ լռութեամբ յարգեցին Մարտի 1-2-ին զոհուածների յիշատակը:

Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցութեան ԱՄՆ-ի կենտրոնի լրատուական ծառայութիւն

# ԱՌԵՂԾՈՒԱԾԱՅԻՆ ՄԱՐԴԸ, ՈՐ ԿԸ ՀԵՌԱՆԱՅ ԻՐ ՀԱՐԱԶԱՏ ԴԷՄՔՈՎ

*Շարունակուած էջ 1-էն*

նար պիտի նախագահ, ու շուտով, առանց ժամանակ կորսնցնելու, պիտի նիւթէր տօնական օր դառնալու կոչուած հոգեւոր օր մը արեան ծովու վերածել, հայոց սահմանադիր պալատը...

Տասը տարի պատուհաս դարձաւ ան հայ ժողովուրդի գլխուն...

Ապրիլի 9-ին, հայ ժողովուրդը, իր յոգնաբեկ ուսերէն ընդմիշտ կը թօթափէ Քոչարեան Ռոպերթ կոչեցեալ մարդը, որ կը յիշեցնէ Ռումանիոյ երբեմնի չարաղէտ, վաշխառու, բռնակալ նախագահ՝ Չաուշեսքուն, թող որ Քոչարեան չունեցաւ անոր վերապահուած կեանքի վախճանական արդարացի աւարտը:

Հայանուն այս եռթական, հաստատապէս մենատէր մը, արիւնարբու նիւաղ առաջնորդ մը դարձաւ մեր խաղաղասէր, արդարադատ, ազատասէր եւ ստեղծագործ ժողովուրդին վրայ: Հինգ հազարամեայ մշակութային, ստեղծագործական, գիտական, ճարտարապետական ու ընկերային բարձր վարկով միջազգային համբաւի տիրացած հայ ժողովուրդի չըլլալիք իշխանաւորը դարձաւ ան, որ գիտակից անփութութեամբ անտեսեց ժողովուրդի բարոյական, ֆիզիքական-առողջապահական, տնտեսական ու անվտանգութեան դժխեմ գոյավիճակը: Անտեսեց, անգամ քաջալերեց արտագաղթը: Միջազգային թատերաբեմերու վրայ, հակասական յայտարարութիւններով, փորձեց դրժել Հայ ժողովուրդի դարաւոր պահանջատիրութիւնը, յետագային չքմեղանքներ հիւսելով անոնց շուրջ: Թիկունք կանգնեցաւ հայրենաբնակ մեր թշուառ ժողովուրդի արիւնը քամող կեղեքիչներուն, առաւելագոյնս պարարտացնելով իր քսակները: Մասնատեց մեր հայրենաբնակ ժողովուրդը, անոր անդրադարձը զգալի դարձնելով սփիւռքահայ զանգուածներուն վրայ: Ան, իր չարաղէտ իշխանութեան աւարտական օրերուն, մարտեան ջարդերով, նոյեմբերեան նախճիրը յիշեցնող, հայու արեամբ՝ արեան քաղնիք դարձուց հայուն հայրենիքը: Հայ ժողովուրդի ազգային, ազատագրական իրագործումներու եւ լինելիութեան գրաւական Երեւանի Ազատութեան Հրապարակը դարձուց ազատազրկութեան, բռնարարքներու, ծեծ ու խոշտանգումի, վայրի: Աւելին, ան արեան բաղնիք դարձուց հայոց Ազատութեան Հրապարակը... Այդ դժոխային, անմարդկային եւ սահմոկեցուցիչ սպանդները պիտի չսպիանան, բնաւ երբեք, ինչպէս, հայոց դէմ գործադրուած օսմանեան Ցեղասպանութիւնն ու ազերի անօրէն Սումկայիթը չեն սպիանար:

Առեղծուածը անշուշտ կը մնայ առեղծուած, որ անպայման իր բացատրութիւնը պիտի գտնէ, ու մեր հարցադրումները պիտի ստանան իրենց պատասխանները, մօտիկ ապագային:

**ԲԱՑ ՆԱՄԱԿ**

# ԲԱՑ ՆԱՄԱԿ ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՐՑԱՍԵՐՆԵՐԻՆ

*ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ ԽՈՐԼՈՊԵԱՆ*

*Նախ ցանկանում եմ իմ խորին շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնել բոլոր իմ ընթերցողներին, որոնք կարդալով հայ մամուլում տպագրուած «Ռոբերդ Քոչարեան Երեւոյթը» իմ յօդուածը առանձին հանդիպումներում եւ հեռախօսազրոյցների ընթացքում ինձ հետ սրտաբացօրէն քննարկեցին գրութեան մէջ արտայայտուած մտքերը ու արեցին իրենց գնահատումներն ու քննադատական դիտողութիւնները: Այսու ցանկանում եմ, ելնելով այդ բոլորից, կատարել որոշ լրացումներ ու տալ մեկնաբանութիւններ:*

*Իմ սիրելի ընթերցողները, ինձ հարց են տալիս, թէ ինչու ես երկար ժամանակ լռելուց յետոյ որոշեցի այս քաղաքական լարուած օրերին, Քոչարեանի ու ընդդիմութեան առճակատման սրման այս օրերին հանդէս գալ «Ռոբերդ Քոչարեան Երեւոյթը» յօդուածով:*

*Նախ նշեմ, որ Քոչարեանի Հայաստանեան քաղաքական թատերաբեմ դուրս գալու ժամանակ իմ գրած յօդուածով ես բացայայտ կերպով արտայայտեցի իմ կարծիքը նրա մասին: Ես նրան բնութագրել էի որպէս «փոքր լճի փոքր ձուկ» եւ վարչական կարողութիւնների տէր անձնաւորութիւն: Նշել էի, որ նրա ապագան բնութագրուելու է ըստ այն գործընթացի, որով նա կը դառնայ «մեծ ձուկ» եւ կը լողայ ծովի ու ովկիանոսի մէջ, ըստ այն բանի թէ նա ինչպէս կը բացայայտի իր վարչական ունակութիւնները: Դժբախտաբար Քոչարեանը մնաց փոքր լճի փոքր ձուկ եւ մեծ երեւալու համար դիմեց բացասական շեղումներ կանխորոշող քայլերի:*

*Քոչարեանի քաղաքական գործունէութեան ընթացքում գործադրած սխալներն ու վնասակար քայլերը սկզբում ընդունեցի մեծ ցաւով ու վրդովմունքով, բայց մտածեցի մի կերպ հանդուրժել, մինչեւ իր ժամկէտի աւարտը եւ թողնել, որ նա իր «լուման ներդնի» հայ նոր պետականութեան լինելութեան գործում՝ առանց թերագնահատելու ընդդիմութեան եւ համախոհականների դերը այդ ասպարէզում: Հոկտեմբեր 27, 1999-ի դէպքերից եւ մի շարք կամայականութիւններից յետոյ Ապրիլ 12-13, 2004 թուին ցուցարարների դէմ, երիտասարդների, կանանց, ծերերի, պատգամաւորների, թղթակիցների ու գիտնականների դէմ քոչարեանականների գործադրած բռնութիւնները ինձ, ինչպէս նաեւ հայ եւ օտար այլ մտաւորականների, ստիպեցին բողոքի գրիչ վերցնել:*

*Քաղաքակիրթ աշխարհում գործող մարդասիրական օրէնքների համաձայն, եթէ ծնողը ծեծի ենթարկի իր զաւակին, անկախ նրա կատարած սխալի բնոյթից, ծնողը ենթակայ է հասարակական պարսաւանքի ու պատժի: Այս դէպքում դաժան ծեծի ենթարկուեցին հարիւրաւոր քաղաքացիներ, որոնք համարձակութիւնն էին ունեցել իրենց սեփական կարծիքը ունենալու իշխանութեան ու երկրի ղեկավարի, երկրի ներկայի ու ապագայի մասին: Ինչպ՞ս կարելի է կիրթ մարդ լինել ու լռել:*

*Համայնավարական ու այլ բռնատիրական կարգերում պաշտպանւում է այն սխալ կարծիքը, որ տիրակալից, երկրի ղեկավարից տարբեր տեսակէտ պաշտպանելը, վարչակարգն ու երկրի ղեկավարին քննադատելը, նրա փոփոխութիւնը պահանջելը դաւաճանութիւն է, ազգադաւ ու թշնամական արարք է: Հալածւում էր այն նկարիչը, որ ղեկավարին չէր նկարում: Փորձութիւնների էր ենթարկւում այն գրողն ու երգահանը, որ հրաժարւում էր գովերգել առաջնորդին: Պատիժների ու արգելափակման էր ենթարկւում այն գիտնականը, որը փորձում էր շեղուել առաջնորդի պաշտպանած վարդապետութիւնից ու դրոյթներից: Սեփական կարծիք, այլախոհ կարծիք ունենալն ու այն արտայայտելը համարւում էր խիստ անթոյլատրելի: Այդպիսիներին հալածելը, բանտարկելը, աքսորելն ու սպանելը հայրենասիրական մեծ գործ էր նկատւում: Այդ բարբարոսական վարդապետութեանն անցեալում զոհ գնաց հայ մտքի սերուցքը: Հայ ժողովուրդը կարծում էր, որ ընդմիշտ ձերբազատուել է այդ շղթաներից: Քոչարեանն այժմ փորձում է այդ շղթաները նորից հագցնել մեր հայրենաբնակ ժողովրդին: Ինչպ՞ս կարելի է անտարբեր մնալ: Հայ ազգային կուսակցութիւնների հիմնադրման շարժառիթներից մէկը եղել է պայքարել այդպիսի բռնատիրութիւնների դէմ: Համաշխարհային ժողովրդավար ուժերը 1948-ից պայքարել են համայնավարութեան այդ գծերի դէմ: Ինչո՞ւ այժմ լռել:*

*Որոշ ընթերցողներ ցուցաբերում են հոգատար ու սրտացաւ վերաբերմունք եւ ինձ հարցնում. «Զ՞էք վախենում, որ Քոչարեանը, քոչարեանականները կամ նրանց բարեկամները ձեր նկատմամբ գործադրեն անհաբեկչական արարք»: Ուրիշներ հարցնում են «Դուք կամովին հրաժարուել էք Հայաստան այցի մեկնելու գաղափարից. դուք արդէն սեւ ցուցակի վրայ էք ու ձեզ այլեւս Հայաստան մուտքի վիզա չեն տայ»: Ես այդպիսի մարդկանց նախ պատասխանում եմ մեր ազգային կուսակցութիւնների նուիրեալների խօսքերով «Արդարութեան, ազատութեան, առաջադիմութեան, մարդասիրութեան եւ նման գաղափարները հնարաւոր չէ պարտութեան մատնել դրանց կրողներին ու երախտաւորներին հալածելով, բանտարկելով, սպանելով: Ընդհակառակը, այդպիսով այդ գաղափարները աւելի կը տարածուեն ու կը զօրանան»: Ես նաեւ նրանց շնորհակալութիւն եմ յայտնում, քանի որ նրանք այդպիսով աւելիով հաստատում են քոչարեանականութեան տրուած բացասական բնութագիրը եւ աւելի ահաւոր կերպարով ներկայացնում քոչարեանական վարչակարգը: Ես քոչարեանականների մասին աւելի լաւ կարծիքի եմ, քան նրանք: Նրանք այդպիսի արտայայտու-թիւններով գտնում են, որ քոչարեանականները անուղղելի են: Իսկ ես ինձ թոյլ եմ տալիս այն շռայլութիւնը, որ նրանք կարող են փոխուել առարկայական ժողովրդական քննադատութեան ու խղճի խայթի միջոցով:*

*Այժմ փորձենք տալ Պրն. Ռոբերդ Քոչարեանի շուրջ 20 տարուայ քաղաքական գործունէութեան ընդհանուր պատկերը: Նա քաղաքական ասպարէզ եկաւ, համայնավարական ակտիւ գործունէութիւնից անցում կատարելով դէպի նոր քաղաքական կեանք՝ «Կռունկ» կազմակերպութեան անդամակցելով: Այդ հաստատութեան գլխաւոր նպատակն էր հայկական ժողովրդական շարժումը կապել խմորուող ռուսական դեմոկրատական շարժման հետ: Աստիճանաբար ազդուելով ՀՀՇ-ից նա որոշակի դեր խաղաց «Կռունկի» քայքայման մէջ ու կազմակերպեց «Միացում» կազմակերպութիւնը: Նա դարձաւ ՀՀՇ-ի դրածոն, ռուքը, ներկայացուցիչն Արցախում: ՀՀՇ-ի օգնութեամբ նա պաշտօններ գրաւեց որոշ տեղական մարմիններում, որոնք ստեղծուել էին Արցախի եւ Հայաստանի Հանրապետութիւնների իշխանութիւնների ժամանակաւոր միացման ժամանակ: Որպէս ՀՀՇ-ական նա բերուեց Հայաստան ու որոշակի դեր խաղաց Հայաստանում ՀՀՇ-ի իշխանութեան տապալման գործում: Նա դաշնակցեց նոր ուժերի հետ՝ Վազգէն Սարգսեան ու Կարէն Դեմիրճեան ճակատի հետ, ու վճռական դեր խաղաց այդ դաշինքի ոչնչացման գործում: Այսպիսի կենսագրութեամբ այժմ նա ձգտում է իր սեւ գործը շարունակել նոր ուժերի հետ դաշնակցած: Սատանան գիտի, թէ այնտեղ ինչպիսի դաւեր են թագնուած, նոր դաշինք ստեղծելու Քոչարեանի ծրագիրը ինչպիսի խարդաւանքներով է յղի:*

*Որոշ ընթերցողներ միտում են ցուցաբերում նոյնացնել ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Ռոբերդ Քոչարեանի վարչակարգի հետ եւ վերջինիս հասցէագրուած ամէն մի քննադատութիւն նկատում են որպէս հայ պետականութեան դէմ ուղղուած ոտնձգութիւն, հայ պետականութեան նկատմամբ դաւաճանական արարք: Եթէ այդպէս լինէր ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսայի, Գերմանիայի ընդդիմադիր կուսակցութիւնների կողմից տիրող վարչակարգի հասցէին արուած քննադատութիւնը, նոյնիսկ նախագահի իմպիչմէնտի պահանջը, պէտք է նկատել դաւաճանական արարք, որպէս այդ երկրների պետականութիւնը վտանգող ոտնձգութիւն: Բայց իրականում, այդ երկրների ժողովուրդները հաւատում են, որ այդպիսի քննադատութեան բովում ու դրանց միջոցով էլ աւելի զօրանում է իրենց երկրի պետականութիւնն ու նրա ժողովրդավարական հիմքերը: Մեր արդի խնդիրն է, այսպիսով, անխնայ քննադատել Հայաստանում տիրող վարչակարգի սխալներն ու թերութիւնները որպէսզի մեր ազգային պետականութիւնը չհիւանդանայ, որպէսզի նրա հիւանդութիւնները չխորանան, որպէսզի դրանք խրոնիկական չդառնան, որպէսզի հայ պետականութիւնը դառնայ աւելի կատարեալ ու աւելի հզօր: Սխալ է վարչակարգի քննադատութիւնը ներկայացնել որպէս հակապետական արարք:*

*Հաւանական կարելի է համարել իմ որոշ գրուցակիցների այն վարկածը, որ Քոչարեան-ընդդիմութիւն պայքարում Քոչարեանը հարկադրուած պիտի լինի աւելի ու աւելի յենուել համախոհական կողմերի վրայ, աւելի ու աւելի կորցնել իր միահեծանութիւնը ու այդպիսով աւելի մօտենալ դէպի բուն համագործակցական գործընկերութեան՝ գնալով թուլացնելով իր բռնատիրական կեցուածքը:*

*Եղան ընթերցողներ, որոնք ցան-*

*Շար.ը էջ 20*

1975-2008
33th ANNIVERSARY
Life, Health, Group Health
Disability, Long Term Care
NEW YORK LIFE

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է
ԵՐԲԵՔ ՈՒՇ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՕ ՄԱՐՈՆԵԱՆ



818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

**ՕՐԱԳԻՐ**

# ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԳԱՐՈՒՆ ՉԵԿԱՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ...

*ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆ*
*05 Մարտ 2008*
*«Ազատագրուած Տարածքներ»*
*Հայաստան*

Խմբագրական Ծանօթութիւն

Ստորեւ տրուած օրագիրը կը նկարագրէ այն դժնդակ պահերը զորս ապրեցան հայրենի ժողովուրդի յառաջապահ հերոսական զանգուածները Երեւանի Ազատութեան Հրապարակին վրայ՝ Մարտի մէկի առաւօտ կանուխ, երբ խաղաղ ժողովուրդին վրայ յարձակեցան ներկայ իշխանութեան կամակատար ոստիկանութեան զինեալ ամենէն վայրագ վարձկանները: Հեղինակը՝ Սարգիս Հացպանեան, ծնած է Թուրքիա, ներկայիս ֆրանսահպատակ է, 90-ական թուականներու վաղ տարիներէն ի վեր Հայաստան կը բնակի, եւ արցախեան ազատամարտի վեթերան է: Ընդդիմութեան եւ մարդու իրաւունքներու պաշտպան ներկայացուցիչներու միջնորդութիւնը, ինչպէս նաեւ իր ֆրանսական հպատակութիւնը ձախողեցուցին ոստիկանութեան կողմէ զինք կալանաւորելու փորձերը 27 Փետրուար 2008-ին՝ ընդդիմութեան կողքին իր կողմնորոշման համար: Հանրահաւաքներու պատահարները արձանագրող եւ 20 Փետրուարէն 1 Մարտ ժամանակահատուածը ընդգրկող իր բուն օրագիրը անհետ կորսուեցաւ ոստիկանութեան միջամտութեան ստեղծած արիւնոտ խառնաշփոթութեան մէջ: Հետեւեալը այն տարբերակն է զոր ան վերստին գրի առաւ 5 Մարտ 2008-ին եւ որ միայն մէկ մասը կը կազմէ իր սկզբնական օրագրին:

*Դիւզացնավէպերում պատմուած տօնախմբութիւնները 7 օր, 7 գիշեր են տեւում: Ինձ բախտ վիճակուեցաւ ուղիղ 10 օր եւ 10 գիշեր մասնակցել մի այդպիսի տօնախմբութեան, որ երգ ու պարի, ցնծութեան, հպարտութեան, երջանկութեան արցունքներով թացցած աչքերովս վկայելով մասնակցեցի:*

*20 փետրուար 2008 թ. մինչեւ 1 Մարտ, 2008 թ. առաւօտեան տեւած այս՝ մարդկային հպարտութեան եւ արժանապատուութեան տաս օրերը, գրեթէ ամենայն մանրամասնութեամբ իմ մօտ եղած օրագրում գրել էի: Շատ եմ ափսոսում, որ օրագիրս, ինչպէս եւ տասնեակ հազարաւոր հայրենակիցներիս անձնական իրերը, մեր վարուած վրանների հետ կամ այրուեցին եւ կամ էլ ոստիկանութեան «Ներքին Զօրքեր»ի կողմից առգրաւուեցին:*

*Այդ տաս հրաշալի օրերն անմոռանալի էին իրօք... Հասարակութեան մօտ պակասող բարոյական արժէքներով ապրելու ցանկութիւնն ու պահանջը վերածնուեց բոլորի, բոլորիս մօտ: Կարծես «Ազատութեան Հրապարակ»ում ապրողներով իսկական քոյրեր, եղբայրներ դարձած լինէինք: Մէկ մարմին էինք դարձել եւ մի գլխով էինք մտածում: Բոլորիս նպատակը մէկն էր, իսկական ժողովրդավարական արժէքներով ապրելու ձգտումը, նրան հասնելու ծարաւը: Ես այդ հրապարակում ապրողներից տարբերւում էի միայն մէկ բանով, լինելով Ֆրանսայի քաղաքացի եւ չունենալով Հ.Հ.-ում ընտրել կամ ընտրուելու իրաւունք, ոչ թէ իմ այլ իմ երկու փոքր երեխաներիս ապագայի համար միացել էի հարիւր հազարներով հայրենակիցներիս, մասնակցած՝ Նախագահ Լ. Տէր-Պետրոսեանի առաջնորդած համաժողովրդական շարժմանը եւ երջանիկ էի:*

*1 Մարտ 2008 թ. առաւօտեան ժամը 4:30ի կողմերը իմ ծանօթներից մէկը ինձ զանգահարելով ասաց, որ «Ոստիկանութիւնը ոտքի հանուած է, գալու են «Ազատութեան Հրապարակ» եւ մեզ բոլորիս բռնի ուժով ցրեն: Ես, ծանօթիս ասացի, որ եթէ գալիս են թող բարով գան, մենք խաղաղ-հանգիստ նստել ենք ու եթէ նրանց մէջ հայութիւնը չի խօսում, ապա մեզ մօտ արժէքներն այլ են, Հայաստան արշաւած բոլոր օտարազգիները մեզ ծեծել-սպաննել են, թող այս անգամ էլ հայը հային ծեծի, ինչ անենք»:*

*Նեղսրտել էի, վրանիցս դուրս գալով հրապարակում աչքերով կազմակերպիչներից մէկին էի փնտռում: Տեսայ Նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին, որ իր թիկնապահների հետ հանգիստ ճեմում էր եւ ժողովրդի հետ զրուցում: Փորձեցի մօտենալ, բայց ճիշդ այդ պահին հեռուից ինձ կանչեց իմ մտերիմ ընկերներիցս մէկը, ում հետ պատերազմի ժամանակ, Շահումեանում էի ծանօթացել: Նրա հետ խօսեցի քիչ առաջ իմ լսածի մասին եւ ասացի, որ «եկողները լիուլի զինուած են, մեր ժողովրդի զաւակներ են, մենք չենք կարող որեւէ դիմադրութիւն ցուցաբերել: Ախր այս իշխանութիւնները մեզնից ի՞նչ են ուզում, ինչո՞ւ չեն թողնում խաղաղ մեր ցոյցն անենք»:*

*Ընկերս ասաց, որ որեւէ յարձակում չի լինի եւ եթէ լինի էլ մենք անզէն վիճակով, ոչ մէկ դիմադրութիւն ցոյց տալու ի վիճակի չենք արդէն: Միմիայն մեր նստած նստարանների փայտերը կարող ենք քանդել, այդ էլ քանի փայտ կը լինի՞, քանի հոգով պիտի կարողանանք պաշտպանուել, որ...*

*Հանգստացայ, ես էլ չէի հաւատում որ մերոնք մերոնց վրայ կը յարձակուեն: Ախր մեր հետ անհագին կին, երեխայ, պատանի աղջիկներ, նոյնիսկ մի քանի հատ յղի կին ու փոքր երեխաներ էլ կային: Ախր, նրանց համար մեր մէջ ապրելով, ծպտուած գործակալները այս ամէնը 24 ժամ տեսնում էին չէ՞, իրենց ամենօրեայ տեղեկատուութիւններում այս բոլորը գրումհաղորդում էին հաստատ: Մեր մէջ ապրող ծպտուած պետական պաշտօնեան էլ էր հայ եւ չէր կարող իր քոյրերի-եղբայրների կեանքի հետ խաղալ, մարդկանց կեանքը վտանգել:*

*Չէի հաւատում, որ յարձակում կը լինի: Գնացի իմ վրանս եւ հանգիստ սրտով պառկեցի քնելու: Քիչ անց (չգիտեմ ինչքան ժամանակ էր անցել եւ ժամը քանիսն էր), ինձ իմ վրանի կողքին ապրող երիտասարդները խուճապահար զարթնեցրին, թէ, «Ել Սարգիս ջան, ոստիկանները զինուած գալիս են արդէն»: Իմ մօտ ամէն ինչ փշրուեց, էլ սրտում հաւատքի, հաւատալու բան չէր մնացել: Չգիտէի ի՞նչ մտածել, ի՞նչ անել: Կեանքիս մէջ առաջին անգամ իմ հայրենակցի հետ դէմ-դիմաց էի կանգնելու, սիրտս խառնւում էր եւ ուզում էի հետ տալ: Իմ վիճակս տեսնող տղաներն ինձ ասացին. «... Չմտահոգուես եղբայր, մինչեւ նրանք մեր վրայից չանցնեն քեզ այստեղից չեն տանի, մենք քեզ կը պաշտպանենք»:*

*Իսկ իրականութեան մէջ, ես էի, որ փորձում էի նրանց պաշտպանել: Չէ որ Եւրոպացին-ֆրանսացին ես էի, բոլոր դիտորդներն էլ իմ համաքաղաքացիներն էին, նրանք այստեղ էին եկել մեր իշխանութիւններին դէպի Թուրքմենիստան, Աֆղանիստան, Մոնկոլիա, Ասիական բռնապետութիւն դառնալը խոչընդոտելու, կանգնեցնելու համար:*

*Ախր Գրուդ Արենսը իր իսկ երկրում կամ մնացած որեւէ Եւրոպական երկրում չէր հանդուրժի, այդ ինչ ինքը առաւօտից գիշեր Հայաստանում ականատես է լինում: Նրանք չէին կարող իրենց պետութիւնների եւ այդտեղ ապրող ժողովրդների արժեհամակարգին դաւաճանել, սա նրանց չէր ներուի երբեք: Ո՛չ, հայ ժողովուրդը նրանց չէր ների, սա շատ յստակ էր:*

*Ո՞ւր էին եւրոպացիները, ինչո՞ւ նրանցից ոչ ոք մեր իշխանութիւններին կարգի չէր հրաւիրում, «...այս անմեղ, խաղաղ ցուցարարներից ի՞նչ ես ուզում, ինչո՞ւ ես սադրում, վիճակը ապակայունացնո՞ւմ» չէ ասում: Միթէ, այսքան խեղճացել է Եւրոպան, թէ իր ուզածը ուրիշ բան է, որ մենք չգիտենք: Մի քանի օրեր առաջ ինձ հանրահաւաքի մասնակից տարիքով մի հայրենակից լրջօրէն ասել էր. «... Տղաս, եւրոպացիները մեր արիւնն են ուզում, նրանք մինչեւ մեր թափուած արիւնը չտեսնեն, չեն շարժուի...»:*

*Միթէ ճիշտ էր այդ մարդը, միթէ այս անգամ էլ եւրոպացիները դէպի ժողովրդավարութիւն քայլող իմ ժողովրդին մենակ ու անպաշտպան են թողնելու: Պատմութիւնը անգամ մը եւս կրկնւում էր արդեօք: Թէ ինչքան ճիշտ էր ասել Եղեռնին զոհ դարձած մեր բանաստեղծ Սիամանթօն. «Ով մարդկային արդարութիւն, թող ես թքնեմ քո ճակատին...»:*

*1 Մարտ 2008 թ. առաւօտեան ժամը 5:40ի մօտ էր, որ «Ազատութեան Հրապարակ»ը շրջափակած (հաւանաբար) ներքին զօրքերի ոստիկանութիւնը յարձակուեց ժողովրդի վրայ: Բոլորն էլ գլխում կասկաներ (casque) էին կրում, մի ձեռքում մեծ վահան էին բռնած, միւսում երկար ու հաստ մահակ ունէին: Ամէն մի հինգ-վեց ոստիկանի մէջտեղում կանգնած ոստիկանը վահան ու մահակի տեղ հրազէն ունէր: Կրակոցները այդքան անկանոն ու անթիրախ էին, որ նպատակը չէիր հասկանում:*

*Անընդհատ արցունքաբեր գազ էին կրակում, իրենք հակագազային հանդերձանքներով օժտուած էին, իսկ խեղճ ժողովուրդը աչքերը փակ ու արցունքոտ, շնչախեղդ վիճակում կուչ եկած, գետինը գալարւում էր: Խփում խփում եւ բարբարոսաբար խփում էին, մի 5-6 հոգով մէկ մարդու վրայ տալիս, գետինը պառկած մարդուն սպաննելու աստիճան խփում էին: Ես, այդ խառնաշփոթի մէջ հեռուից մէկի ձայնը լսեցի. «... Մի խփիր եղբայր, այդ կինը յղի է...», ձայնողի ձայնը ոչ մարդկային ձեւ ստացաւ. «... Մի խփիր արա, քոյրիկը յղի է», ձայնն արդէն անասնական ոռնոց էր դարձել, անմարդկային ճչի վերածուեց ու կտրուեց:*

*Ամենուր անշարժացած, արեան մէջ կորած մարմիններ էին բռուել, ես էլ գետինը պառկած, ստացածս հարուածների ցաւի պատճառով տքում էի: Ժողովուրդին (մի քանի հարիւր հոգի հազիւ կը լինէին) շրջօղակի մէջ արած, անխնայ հարուածում, խփում էին: Անկանոն կրակոցները ընդհատաբար շարունակւում էին, ուզում էի հասկանալ թէ, փամփուշտների ձայներից, ո՛ր տեսակի հրազէն էր օգտագործուողը, բայց ափսոս չէի հասկանում: Օդում շարունակ լուսարձակող կրակահերթ էր լինում, մի քանի տեղից մեր վրայ ուղղուած մեծ եւ հզօր լուսարձակ (prejecteur) լոյսերը մարդկանց աչքերը կուրացնում էին:*

*Հանրահաւաքի խաղաղ ցուցարարները իրենց փակ աչքերով, ծնկաչոք կամ գետինը պառկած, եթէ ֆիզիքապէս դեռ կարողանում էին, ապա իրենց ոտերով ու բռունցքներով միայն օդն էին ճօճում:*

*Իսկ անմեղ ու անպաշտպան մարդկանց յատկապէս գլխներին այդ-*

*Շար.ը էջ 23*

ՀԲԸՄ Արտաւազդ Թատերախումբը կը ներկայացնէ
ԿԱՏԱԿԻ ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ




ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 3, 2008, ԺԱՄԸ 8:00-ԻՆ
ՀԲԸՄ Ալեք Մանուկեան Կեդրոն - Պօյաճեան Սրահ
2495 E. Mountain Street, Pasadena
Մուտքի նուէր՝ $50.00 (Ներառեալ աղանդեր)
Տոմսեր ապահովելու համար հեռաձայնել
ՀԲԸՄ Կեդրոն՝ (626) 794-7942
Աբրիլ Գրատուն՝ (818) 243-4112 • Պերճ Գրատուն՝ (818) 244-3830

ԱԶԳԱՅԻՆ

# ԻՆՉՈ՞Ւ Է ԱՂՄԿՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԸ

**Ս. ԽԱՆՈՅԵԱՆ**

Հայաստանում աղաղակող խախտումներով կատարուած նախագահական ընտրութիւնները վարչակարգից դժգոհ ժողովրդական զանգուածներին բերեց Ազատութեան Հրապարակ:

Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի ղեկավարութեամբ, ծաւալուեց ժողովրդական շարժում, որ իր էութեամբ, զանգուածների ընդգրկուածութեամբ եւ կազմակերպչական բնոյթով յիշեցնում էր 1988ի Համազգային շարժումը: Մի շարժում որը կոչուած էր սատարելու Ղարաբաղի հայրենակիցներին, Ազերիա-Թուրքական լծից ազատագրելու, եւ Ղարաբաղը Հայաստանին միացնելու կամ անկախութեան հիմքեր դնելու գործընթացը: Կոնսեպտուալ առումով 2 շարժումների տարբերութիւնը կայանում է նրանում, որ առաջինը Համազգային բնոյթ կրելով յանուն Ղարաբաղի ժողովուրդին էր ուղղուած. քանի որ ազգային զարթօնք ապրած ժողովուրդը գիտակցեց որ Արցախի ազնիւ եւ մաքառող ժողովուրդը իր անբաժանելի մասնիկն է:

Իսկ երկրորդի ուղղուածութիւնը եղաւ, ընդդէմ Ղարաբաղեան կլանի, կրելով համաժողովրդական բնոյթ: Կլանի անուանումը որպէս Ղարաբաղեան պայմանական է, այն առումով որ Հայաստանի Նախագահ Ռ. Քոչարեանը եւ Վարչապետ Ս. Սարգսեանը լինելով Ղարաբաղցիներ գլխաւորեցին Հայաստանի պետական ողջ համակարգը կոռումպացնելու հակաժողովրդական գործընթացը, ներգրաւելով նաեւ Հայաստանեան օլիգարխներից մի զգալի մասին:

Սփիւռքի ամենամեծ համայնքում, այսինքն, Լոս Անճելոսի հայահոծ շրջանում Հայաստանի նախագահական ընտրութիւնների հետ կապուած զայրոյթի, ցասման եւ բողոքի խիստ արտայայտութիւններ դրսեւորուեցին: Բնականաբար եղան նաեւ վարչախմբին սատարող մարդիկ, որոնք Հայաստանի պետական միակողմնակի եւ ոչ անկողմնակալ լրատուահոսքի ազդեցութեան տակ դատողութիւններ էին անում եւ կարծիքներ արտայայտում: Մայրաքաղաք Երեւանում Մարտի 1-ի ողբերգական իրադարձութիւններից յետոյ, էլ աւելի շիկացաւ ներհամայնքային ասեկոսները:

Ցատկանշանակը այն է, որ Հայաստանում, լրատուամիջոցների նկատմամբ աննախադէպ շրջափակման եւ սեփական ժողովուրդի նկատմամբ դաժան հաշուեյարդարի պատճառով, համաշխարհային հասարակութեան ուշադրութիւնը բեւեռուեց Հայաստանեան անցուդարձերի վրայ, որին հետեւեց բնականաբար համապատասխան վերաբերմունք, կատարուածի հանդէպ:

Հեռահար բայց ոչ դիպուկ կրակով Աւանդական ընկեր Վահանը գաւառական դատողութեամբ խաղաղ ցոյցերի միջոցով բողոքի ակցիաները որակում է, որպէս դրսից տղայ կանչելու փորձեր: Ինչպիսի՞ տղայական կեցուածք: Ցայտնի չեղաւ այդ ամէնը հակա-լեւոնեան ագիտացիայի ներքին սպառման համար էր ասուած, թէ դա քաղաքական գործչի համոզմունքն էր:

«Հիացէք» ընկերներ, մեր յեղափոխական աւանդականի պահուածքով եւ նրա խաղերով իսկ ես ողբամ քեզ հայ ժողովուրդ, որ ճակատագիրդ կերտող են դարձել իշխանական ինտրիգներում վարպետացած տղաները: Որպէսզի յուզումնային դատողութիւններին աւելորդ տուրք չտանք, ընդհանուր եւ մեծամասնութեանը ընդունելի ուրուածգծերով մի կարճ պատմական էքսկուրս կատարենք Հայաստանի Հետխորհրդային շրջանի հանգուցային անցուդարձերի շուրջ:

1988 թ.ը նշանակալի եղաւ, ազերիների միջոցով Սումկայիթում հայերի կոտորածով, շարժառիթն էր Ղարաբաղի ինքնավար մարզի պատմական նստաշրջանը, հայ պատգամաւորների ջանքերով, որտեղ որոշուեց Ղարաբաղը դուրս բերել Ատրպէյճանի կազմից: Եւ միանալ Հայաստանին: Դժուարին եւ պատասխանատու ժամանակաշրջան էր: Ազգային ոգու զարթօնք էր սկսուել: Խորհրդային կայսրութեան համար անսովոր ժողովրդային շարժում էր ծաւալուել, որին Խորհրդային բանակը սուիններով դիմաւորեց:

Համազգային բնոյթ կրող շարժումը ի դէմս «Ղարաբաղ Կոմիտէի» բազմաթիւ փորձութիւնների ենթարկուեց: Տղաները յանձինս առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի ջանքեր չխնայեցին յուսախաբ չանելու բռունցք դարձած ժողովուրդին: Սկսուեց հայ փախստականների ծաւալուն բռնագաղթը Ատրպէյճանի տարբեր շրջաններից դէպի Հայաստան: Որոնք յաճախ դատարկ ձեռքով յայտնւում էին գաղթի ճամբին: Կրկին ցեղասպանութիւն եւ գաղթականութիւն:

Դժբախտաբար 1988 թ. աւարտը նշանաւորուեց եւս մի մեծ արհաւիրքով, Սպիտակի երկրաշարժով, ողջ հայ ժողովուրդը սգի մէջ էր, իսկ ողջ մարդկութիւնը կարեկցում էր Հայաստանին եւ հայ ժողովուրդին: Որքան ընտանիքներ եղան որ իրենց տանը հանգրուանում էին ե՛ւ փախստականներին ե՛ւ երկրաշարժից տուժածների, որոնք իրենց վերջին պատառ հացը կիսում էին նրանց հետ:

Խորհրդային կայսրութիւնը իր միաբեւեռ վարչախմբի միահեծան, համայնավար կուսակցութեան պատճառով լճացել եւ կենսունակ գոյատեւման ռեսուրսները սպառել էր: Սկսուեց Հայաստանի անկախութեան գործընթացը: 1991 թ.ի Սեպտեմբերի 21ին Հայաստանը հռչակուեց Անկախ Հանրապետութեան:

Նոյն թուին տեղի ունեցաւ նախագահական ընտրութիւններ, յիրաւի մաքուր եւ արդար ընտրութիւններ, որտեղ չկար բռնութիւններ, «կառուսել» կոչուած կամ այլ կարգի ընտրակեղծիքներ:

4 թէ 5 թեկնածուների մէջ քուէների բացարձակ մեծամասնութեամբ՝ 92%-ով Հանրապետութեան նախագահ ընտրուեց Լեւոն Տէր-Պետրոսեանը: Պատերազմի, երկրաշարժի հետքերի եւ շրջափակման պայմաններում սկսուեց նոր անկախ Հանրապետութեան պետականշինութիւնը, պետական ատրիբուտների կերտումը, եւ միջազգային կառոյցներին ինտերգրումը:

Ձեւաւորուեց եւ կայացաւ ազգային բանակը, որի օգնութեամբ եւ Ղարաբաղի հերոս ժողովուրդի ու ազատամարտիկների միջոցով ազատագրուեց Արցախը իրեն շրջապատող, եւ անվտանգութեան գօտի համարուող 7 շրջաններով: Վերոյիշեալ արհաւիրքների պայմաններում հայկական հողերի ազատագրումը եւ ազերիների հետ ընթացող ճակատամարտում յաղթանակի ապահովումը թանկ նստեց հայ ժողովուրդի վրայ: Ցիրաւի դժուարին խնդիրներ էին ծառացել կապուած ցուրտ ու մութ օրերի հետ:

Ի վերջոյ կայացաւ հրադադար 1994 թ.ին, հետզհետէ նորմալացուեց հոսանքի, գազի եւ ջրի մատակարարումը: Սակայն ցուրտ ու մութ կոչուած տարիների տառապանքը իր հետքը թողել նախագահական ընտրութիւնների, որտեղ ընտրազանգուածի տրամադրութիւնը ոչ այնքան յանուն Վազգէն Մանուկեանի էր, որքան ընդդէմ Լեւոն Տէր Պետրոսեանի իշխանութեան, որի նախագահութեան օրօք այդքան զրկանքներ կրեցին: Այս ընտրութիւնների ընթացքում, գրանցուեցին որոշակի խախտումներ, ի հարկէ դժուար է ասել այդ խախտումները ազդում էին ընտրութիւնների ելքի վրայ: Բայց բողոքի ալիք սկսուեց, որը սակայն իշխանութիւնները սուիններով եւ արնահեղութեամբ չդիմաւորեցին: Եթէ արիւն յեղուեց ապա դա Ազգային ժողովի Նախագահ Բաբգէն Արարքցեանի ճակատի արիւնն էր, Ա Ժ շէնքը ներթափանցած ինչ որ ցուցարարի ձեռքին եղած բութ գործիքով: Զնայած նոր անկախ բայց արտաքին ճկուն քաղաքականութեան շնորհիւ, Լեռնային Ղարաբաղը իր ղեկավարներով հանդերձ գտնում էր որ, ազգային ինքնորոշման ասպեկտով բանակցային գործընթացների սուբիեկտ դառնար: Քանի որ ստատուս քուոն անվերջ պահելու ռեսուրսները Հայաստանում անսպառ չէր:

Այսինքն միջազգային ասպարէզում անհրաժեշտ էր ամրապնդել այն տեսակէտը որ նշուած կոնֆլիկտը ոչ այդքան Հայաստան-Ատրպէյճանական է որքան Ղարաբաղա-Ատրպէյճանական:

Միաժամանակ դրան զուգահեռ անհրաժեշտ էր միջազգային հասարակական կարծիքը մշակել այն իրողութեամբ որ Հայաստանի եւ Ղարաբաղի ժողովուրդը ունեն էթնիկական բացառիկ միասնութիւն:

Այս սկզբունքով գործելակերպի վառ վկայութիւնը եղաւ: Հայաստանի առաջին նախագահ Լ. Տ. Պետրոսեանի կողմից Ղարաբաղի Նախագահ Ռոբերտ Քոչարեանին եւ ճակատամարտերում իրեն զգալի ներդրումների համար Սերժ Սարգսեանին երկրի ամենաբարձր պաշտօնների վստահումը:

Այդ ժամանակ վերոյիշեալ քայլը համարուեց հանճարեղ քայլ եւ ահագին իրարանցում առաջացրեց հենց Ատրպէճյանական վերնախաւում:

Լուրջ քաղաքագէտների մօտ վաղուց էր ձեւաւորուել այն կարծիքը որ Ղարաբաղի խնդրի լուծումը պէտք է գտնել տարածաշրջանային կոնտեքստում: Տնտեսական եւ քաղաքական զարգացումների համընթաց ոսկերչական ճշգրտութեամբ կորզել, սինթեզել Հայաստանի հանրապետութեան շահերը:

Եկաւ ներքին անհամաձայնութիւնների շրջանը, Ղարաբաղեան

Շար.ը էջ 21



## ՔԱՂԱՔԱԿԱՆ

# ՆԱԽԱԳԱՀ ՊՈՒՇ ԻՆՉՊԷ՞Ս ԽԱԲՈՒԵՑԱՒ...

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ**

*Մինչ Իրաքեան արշաւանքը, եւ անոր ընկերացող ֆիզիքական, տնտեսական եւ մարդկային վնասները կը շարունակուին, եւ արդէն մտած են 6րդ տարուայ մէջ, շատ աւելի երկար քան Համաշխարհային Առաջին եւ Երկրորդ պատերազմները, անդին կամաց-կամաց յայտնի կը դառնայ թէ ի՞նչ պայմաններու տակ եւ ո՛վ «խաբեց» Նախագահ Պուշը եւ իր իշխանութիւնը իրաքեան պատերազմի ձեռնարկելու համար: Այսօր կ՚առարկուի թէ միջազգային պետական կարծիքը, եւ անոր ընկերացող լրտեսական ցանցերը, համոզուած էին որ Իրաքի բռնատէր, Սատտամ Հիւսէյն, իր տրամադրութեան տակ ունէր «զանգուածային բնաջնջման զէնքեր (weapons of mass destruction), եւ զանոնք Սատտամի ձեռքէն վերցնելու նպատակով էր որ Ամերիկա նախաձեռնարկ եղաւ իրաքեան պատերազմին: Այս մէկը անշուշտ տեսակ մը «ծածկուած երեւոյթ» էր (mirage) պատերազմը արդարացնելու համար, անոր իսկական շարժառիթները երբեք ալ հրապարակ չդրուեցան, թէեւ կասկածները կ՚երթային անհատական վրէժխնդրութենէն (Պուշին կողմէ Սատտամի նկատմամբ, որ իր հօրը վրայ փորձած էր ահաբեկչութիւն մը կատարել), մինչեւ իրաքեան քարիւղի վրայ ձեռք ձգելու տրամադրութիւնը: Այս տրամադրութիւնները երբեք ալ հրապարակ չնետուեցան պաշտօնական եւ պետական շրջանակներու կողմէ, եւ անոնց տեղ Նախագահ Պուշ տակաւին կը խօսի, առանց որեւէ մէկը համոզելու գնով, որ Ամերիկան իրաքեան պատերազմի ձեռնարկեց նախ բռնատէր Սատտամի իշխանութեան վերջ մը դնելու եւ ապա շրջանէն, այսինքն Մերձաւոր Արեւելքէն ներս, «նոր կարգեր», հասկնալ տեմոքրասի-ժողովրդավարութիւն մը հաստատելու համար: Այս մտայնութիւնը կը ծնէր Ամերիկայի աշխարհի մէջ իբրեւ թէ ունեցած «ազատութիւն եւ ժողովրդավարութիւն» հաստատելու իրաւունքէն, զինք դարձնելով «աշխարհի ժանտարման», իր ուզած հասարակարգը հաստատելու համար: Իրողութիւնը այն է որ ինչ որ Ամերիկայի համար ընդունելի է իբրեւ աշխարհահընկալում եւ պետական կառոյց, կրնայ անպայման ալ ընդունելի չըլլալ ուրիշներու համար: Ասոր լաւագոյն փաստը Պուշ-Փութին հանդիպումներու ընթացքին, Փութինի պնդումը թէ Ամերիկան իրաւունք չունի իր տեսակէտները պարտադրելու ուրիշներուն: Ամէն պարագայի, պատմութիւնը ժամանակի ընթացքին պիտի կարողանայ ճշդել թէ ինչո՞ւ Պուշի իշխանութիւնը ձեռնարկեց իրաքեան արկածախնդրութեան որ դժբախտաբար, տակաւին կը շարունակուի առանց լուծումի մը հեռանկարը գծուելու:*

*Վերադառնանք սկզբնական հարցումին, թէ ինչպէս Նախագահ Պուշ եւ իր խորհրդականները «խաբուեցան» եւ ո՞վ զիրենք խաբեց Սատտամի մօտ «բնաջնջման զանգուածային զէքներու» գոյութեան մասին: Վերջերս բազմաթիւ աղբիւրներ երեւան հանած են թէ ինչպէ՞ս պատահած է այս «սուտը»-, մասնաւորաբար նկատի ունինք ամերիկեան կարեւոր մամուլներէն, «Wall Street Journal» ուրկէ եւ քաղուած են մեր տեղեկութիւնները:*

*Նախ յստակօրէն կը յայտնուի թէ ամերիկեան լրտեսական ցանցը (Intelligence) ձախողութեանց (fiasco) երկար պատմութիւն մը ունի, եւ ասոնց մէջ ներկայիս ամենէն քննարկուածն է «Curveball» ճանչցուած պարագան, այն աղբիւրը որ սխալ տեղեկութեանց եւ պնդումներու հիման վրայ պատասխանատու էր, նախքան իրաքեան պատերազմ, այն համոզումին որ Սատտամ Հիւսէյն վստահօրէն տիրացած էր այդ զէնքերուն: Այս վարկածը, կամ տեղեկութիւնը մէջտեղ նետուած է գերմանական «Der Spiegel» թերթի մը կողմէ, որ յստակօրէն կը խօսի այն լրտեսին մասին որ այս սուտը տարածած էր: Ըստ այդ թերթի տեղեկութեանց, «Curveball» ճանչցուած սուտը Ահմէտ Ջելեպի կոչուած իրաքցի քաղաքագէտի մը կողմէ ստեղծուած էր, մարդ մը որ ինքզինք կը ներկայացնէր իբրեւ «Իրաքի ազգային Քոնկրեսի» նախագահը, Սատտամ Հիւսէյնի վար առնուելէ առաջ: Այս սուտը հերքուեցաւ 2005 թուականին, երբ ամերիկեան քննարկում մը փաստեց անոր սուտ ըլլալը: Մինչ այդ սակայն, «Curveball»ի միջոցաւ, Ջելեպի կարողացած էր «խաբել ամերիկեան իր պահպանողական (neocon) բարեկամները, որոնք, իրենց կարգին, կարողցած էին «խաբել Նախապահ Պուշը, որ իր կարգին ճնշում բանեցուցած էր ամերիկեան «անջիղ» լրտեսական կազմակերպութեան (CIA) իրեն տրամադրելու անհրաժեշտ տեղեկութիւնները» (intelligence) Իրաքի պատերազմի ձեռնարկելու համար:*




**Ահմէտ Ջելեպի՝ լրտես կամ քաղաքագէտ...**

*Յայտնի կը դարձնէ «Der Spiegel» թերթը որ «Cureball»ը Ռաֆիտ Ահմէտ Ալուան կոչուած պատեհապաշտ, Իրաքէն Գերմանիա ապաստանած մէկն էր, որ 1999 թուականին Իրաքէն փախած էր: Իր պնդումներու վրայ, թէ ինք ունէր յստակ տեղեկութիւններ, ներսէն ստացուած, ըստ որոնց Հիւսէյն արդէն ունէր վերոյիշեալ զէքները, զինք «կարեւոր» մէկը դարձուցին գերմանական լրտեսական ցանցին (BND), որ 2001 թուականի աշնան, Գերմանիա հարկ տեսաւ գնել 35 միլիոն «տոզ», «smallpox» (Ծաղիկ) հիւանդութեան դէմ պատուաստ գնել: Նաեւ կ՚ըսուի թէ նոյնիսկ Սեպտեմբեր 11-ի ահաբեկչութենէն ետք, գերմանական կառավարութիւնը մերժեց ամերիկեան «CIA»ին հանդիպում ունենալ լրտեսին հետ: Փոխանակը, Գերման «BND»ն շուրջ 100 տեղեկութիւն փոխանցեց «CIA»ին, իրբեւ ստոյգ տեղեկութիւններ: Ամէն պարագայի, նոյնիսկ երբ «CIA», իբրեւ կազմակերպութիւն, իր սեփական սխալները ունեցաւ իր տեղեկութիւնները ճշդելու գործին մէջ, այս հարցը չէր կարող հիմնական փոփոխութիւն մտցնել Պուշի իշխանութեան մօտեցումին մէջ, Պաղտատի դահիճին հրապարակէն քշելու գործին մէջ:*

*Ինչ կը վերաբերի Գերմանիոյ, ան տակաւին չէ կարողացած լման իր պատասխանատու դերը ճշդել, իր տրամադրած սխալ լրտեսական տեղեկութեանց համար, նոյնիսկ երբ յետագային, կը խոստովանէր թէ երբեք չէր հաւատացած այս տեղեկութեանց ճշգրտութեան վրայ:*

*Ի՞նչ դասեր կարելի է քաղել «Curveball»ի այս «ֆիասքոյէն»: Լրտեսական տեղեկութեանց ձախողութիւնները» Իրաքի վերաբերեալ պիտի ստանային համաշխարհային «ընդունելութիւն», եւ անոր մէջ, նոյնիսկ անոնց կողմէ, որոնք, յետագային, իրաքեան արկածախնդրութեան ամենէն բիրտ քննադատները պիտի անդրիսանային: Վնասը սակայն հաստատուած էր, եւ այսօր, մարդ կը զարմանայ թէ ինչպէս մէկ անձի մը խելապատիկէն ելած «սուտը» կարող էր միջազգային աղէտի մը տեղի տալ...:*

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ
ԱՈՒԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE.
PASADENA
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680**



# ԱՊՐԻԼԻ 9 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
















# Massis Weekly

Volume 28, No. 12 Saturday, APRIL 12, 2008

## Armenians Mourn The Day In Silent Rememberence
## Sarkisian Sworn In Amid Tight Security

Serzh Sarkisian was sworn in as Armenia's president on Wednesday amid unusually tight security measures taken by the authorities.

The inauguration took place at a special session of the Armenian parliament held in the national Opera house in Yerevan. It was followed by a military parade in the adjacent Liberty Square, the scene of daily post-election demonstrations staged by Sarkisian's main challenger, former President Levon Ter-Petrosian.

Meanwhile, thousands of baton-wielding police blocked major streets leading to the square to keep opposition supporters from gathering there. Hundreds of protesters managed to rally elsewhere in the city center and demand a re-run of the February 19 presidential election controversially won by Sarkisian.

As the new president was taking the oath "to respect human and citizens' rights", numerous citizens had gathered near the Myasnikyan monument, near several foreign embassies and international organizations, near the Constitutional Court and the Central Election Commission building, demanding that he "really respect citizens' rights and respect the memory of the dead."

The silent remembrance quickly turned into an anti-government rally, with mostly female participants chanting "Freedom!" and "Levon!"



While the new president was promising "to adopt corresponding changes in the law on assembly in line with international standards", police near the Myasnikyan monument were having quarrels with people to try to force them to vacate the area.

"Your actions are unlawful, go away, don't stand here for more than two minutes, lay the flowers and go away, it already becomes a rally, and you don't have that right," one of the policemen was periodically shouting.

"Are you setting a term for mourning? I have the right to have time at least for a prayer," one woman was saying crossly.

"I was here on March 1," Seda, a gray-haired pensioner, told RFE/RL. "The people had only stones and sticks, but they still shot at us. I want Serzh and Kocharian to go and be put on trial.

**Continued on page 2**

## U.S. Expects 'Dramatic Steps'

The United States expects Serzh Sarkisian to restore civil liberties and take other "dramatically positive steps" to resolve Armenia's grave political crisis, a senior U.S. official said on Wednesday.

Deputy Assistant Secretary of State Matthew Bryza indicated that the Armenian government has so far failed to address U.S. concerns stemming from its crackdown on the opposition that followed the February 19 presidential election. He also said that Washington has revised its initial, largely positive, assessment of the government's conduct of the vote.

"More needs to happen to restore the confidence of the Armenian people that the country is moving in the right direction and that there is some momentum in the development of democracy," Bryza told RFE/RL in an interview. "First of all, healing has to take place," he said. "But beyond healing, dramatic steps are needed to restore a sense of confidence that the country is moving in the right direction."

Bryza said those steps should include a dialogue with the opposition, the release of opposition activists arrested for their political activities as well as a "full restoration" of freedom of speech and assembly. He warned that failure to take such steps would cause further damage to U.S.-Armenian ties and, in particular, call into question continued U.S. economic assistance to Armenia.

## Massachusetts Municipal Association Cuts Ties With "No Place For Hate" Program Over Stance On Armenian Genocide

Expressing strong disapproval over the Anti-Defamation League's (ADL) unwillingness to unequivocally recognize the Armenian Genocide, the Massachusetts Municipal Association (MMA) severed ties with the "No Place for Hate" (NPFH) program, a community-based program offered by the human rights group.

In a statement issued last week, the MMA Board of Directors expressed disappointment with the ADL's refusal to "clarify and strengthen" its earlier statements concerning the Armenian Genocide at the ADL's National Commission meeting in November 2007.

"The Board believes that unequivocal recognition of the Armenian Genocide is both a matter of basic justice to its victims, as well as essential to efforts to prevent future genocide," stated the MMA, a nonprofit, nonpartisan association that provides advocacy, training, publications, research and other services to Massachusetts cities and towns.

"The MMA feels strongly that it is imperative to speak with absolute clarity on the genocide and that due to the NPFH program's association with the National ADL, the Association will no longer be a sponsor of the program," the organization explained.

"The Massachusetts Municipal Association has made a just and rightful decision," said Massachusetts State Representative Rachel Kaprielian (D-Watertown), a member of the Armenian Assembly's Board of Trustees who has been working on this issue. "As Armenians across the globe continue to fight for official recognition of the Genocide of 1915 committed at the hands of the Ottoman Empire— this is another step on the long path toward worldwide recognition of the Armenian Genocide."

"As a former member of this board, a former municipal official and current State Representative, I am deeply heartened by today's unanimous decision," Kaprielian continued.

Following repeated calls by members of the Armenian, Jewish and other communities in Massachusetts and elsewhere, the ADL one of the oldest and most influential Jewish organizations in the US, issued a statement in August 2007 in which they categorized the events of 1915-1918 as "tantamount to genocide."

## Armenian Rally Ban Unacceptable To European Watchdogs

Europe's two leading human rights watchdogs have expressed serious concern about the Armenian authorities' recently enacted legal amendments that effectively banned further anti-government rallies in the country.

The National Assembly hastily passed the controversial amendments to an Armenian law on street gatherings on March 17, four days before the end of a state of emergency. They were closely examined by experts from the Council of Europe's Venice Commission the OSCE's Warsaw-based Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR) shortly afterwards.

"On the basis of a preliminary assessment, the Venice Commission and the OSCE/ODIHR Expert Panel on Freedom of Assembly do not consider the proposed amendments to be acceptable, to the extent that they restrict further the right of assembly in a significant fashion," they said in a joint statement released late Wednesday.

The two bodies had submitted a detailed analysis of the amendments to the leadership of the Armenian parliament late last week. Its findings were high on the agenda of an ensued visit to Yerevan by members of a more influential Council of Europe body monitoring the fulfillment of Armenia's membership commitments to the Strasbourg-based organization. Diplomats making up the so-called Ago Group pressed Armenian leaders to accept the Venice Commission's and ODIHR's recommendations in addition to engaging in dialogue with the opposition and releasing political prisoners.

In a letter sent to the National Assembly on March 28, the Venice Commission and the ODIHR said this provision is "excessive" and must be amended in a way that would allow Armenian courts to quash police or NSS bans.

The European watchdogs said this provision "greatly increases the potential for arbitrary restrictions" and enables security forces to disperse "an assembly where the authorities themselves have used excessive force resulting in the loss of life." "In addition, it must be emphasized that violence by a minority of participants should not automatically result in the dispersal of the entire event, and the Police and National Security Service must always distinguish between violent and non-violent participants," they said.

# Pre-election Sociology and Post-election Psychology

**Hrach Bayadyan**
**Hetqonline**

Armenia is witnessing the dawning of a period of gloom. The indications of this are numerous - the incessant persecution of those in any way linked to the Movement, the continued labeling of a "certain segment of the nation" and its leaders, the detention of people either strolling, reading or playing chess along Northern Avenue and the interrogation of schoolchildren participating in local protests in Vanatur.

It particularly manifests itself in the increase in the number of those speaking on behalf of the nation and those either making pleas, sounding the alarm or wildly ranting in the name of the nation. Even during the days of the State of Emergency the pages of the press were open to them, as well as the television and radio outlets.

Suddenly, one day they (those who now speak on behalf of the nation) discovered that in "our nation" there was a 21% segment of our politically active electorate that had been "zombified", who were "suffering from memory loss and who were driven by the rage to "destroy". This 21% group had the potential to betray the nation and they were overwhelmed with "righteous anger" regarding this fact.

Here are some examples of the language employed by those speaking on behalf of the nation. "We call on all patriotic forces to struggle against the movement of Levon Ter-Petrosyan that is detrimental to the nation"; "We must create a patriotic and a national opposition" (the words of G. Sargsyan and Hayk Babukhyan); "…Azerbaijan is overjoyed that Levon Ter-Petrosyan has succeeded in splitting the Armenian nation into pieces, of breaking its backbone. This is treason. And today, I am even more concerned that the events that have taken place can have much more severe consequences in terms of national preservation than we can imagine today" (Levon Melik-Shahnazaryan). In a word, patriotism, or more correctly, love of one's nation, has again become the fashion of the day.

What has evolved is something akin to a post-socialist form of post-modernism where everything is referenced from the Soviet-era without distinction (the formula sometimes used is, "socialist in form, national in content"; a formula which has been turned completely around from the original). As a result, we have witnessed everything from widespread interrogations and arrests, to people being called "traitors to the nation" and extending to a variety of absurd reminisces like "the years of stagnation". There are of course differences between what is taking place now and the past. The dissidents of today have still not been carted off to the psycho ward and for the most part it has been sufficient to label them as "victims of psychological diversion" or "individuals who have been lobotomized". During the Soviet era people were tracked down for reading books that were banned. Today, the reading of books at certain locations is banned. On the other hand, it's not clear why they don't interrogate the school kid from Gyumri who's donated 100 drams of his milk money to the GALA TV fundraiser or why they don't arrest the villager who walks several miles to Gyumri to donate a portion of his meager pension to that same fundraiser. For aren't these actions equally subversive as the others?

It's been evident for some time now that sociology in Armenia has become a "pre-election science". What's new is the use of psychology in the post-election phase, to explain everything that sociology couldn't predict or foresee in the first place. Putting it another way, if Armenian sociology explains the "norms" then the need was felt for psychology and psychologists to interpret the dangerous "deviations" or "anomalies" not accounted for. "They accept all gods without question. It's a form of hypnosis which leads to destruction" (Karen Nalchajyan). The victory of Serzh Sargsyan, in these terms, was sociological, and that of Levon Ter-Petrosyan was psychological (with a negative connotation).

It's really not important who started the whole campaign of psychological "explanations", but in the February 21st edition of "Azg", on the day after the first public rally following the election, there were already hints of the psychological commentary to follow in the questions posed by reporter Susanna Margaryan to a psychologist. Here are some examples of her questions: "Is it possible that a person imbued with the qualities of a leader could possess more undesirable (I won't say dangerous) opinions than any other candidate possessing beneficial opinions but having a weaker charisma?"... "I propose to speak in general terms, about the mass suggestion imparted to the crowd"... "Is it possible to keep a large segment of the electorate inspired for a given length of time?". And if Albert Nalchajyan's answers didn't clearly correspond to then expectations of the reporter, a few days later, on February 27th at the "Hayatsk" club, Karineh Nalchajyan, another psychologist, explained everything that was possible to explain. She particularly described the various psychological devices used to influence the consciousness of the society and explained that for ten years straight Levon Ter-Petrosyan had been working to master those devices.

On the other hand, psychologist Samvel Khudoyan had the following to say in response to the same reporter from "Azg" - "Such manipulation can be achieved by anyone who wishes to exploit another for his own ambitions. Such forms of manipulation are carried out during the elections of any given country. The only difference is that in the civilized world such crude manipulations (ballot stuffing, psychological intimidation and physical force) are replaced by more refined forms.

But such sober evaluations didn't correspond to the official version of things. The Public Prosecutor asserted, for example, that psychological offensive had been continuously unleashed on the people attending the rallies. In similar cases the exact wording used speaks about "widespread memory loss" and "general hypnosis". If government officials and political and party operatives didn't have the opportunity of expressing sociological knowledge when making insights, then, the psychological factor was clearly abused in the post-election answers. All this ultimately reached ridiculously comical levels and in this regard the satirical comments of Matthew Bryce were quite tame.

I don't know exactly how many people believe this psychological hypothesis but let me give one example of a similar type of reasoning. The reporter asks the following: "Most of the protestors had rallied around the former president not because they shared the ideas of Ter-Petrosyan but because they were displeased with the regime". Levon Melik-Shahnazaryan replies that, "Yes, those hypnotized people followed Levon's rhetoric, without listening to what he was saying." It would appear that here the political commentator was just as "hypnotized" since he didn't hear the question asked of him.

In all these explanations the Armenian language is imperceptibly being cheapened. Given the very modest capabilities of both the current president and the president-elect regarding literate Armenian speech, well thought out language and the mastery of oratory, diversionary means and manipulation are being declared.

Even while speaking about important social issues and the many other reasons (the corruption, injustice and illegality that is pervasive in the country) that could have fueled this social rebellion, they refuse to credit the Movement with any positive connotation. Here's another quote from Karineh Nalchajyan, "The authorities were shaken and understood that things couldn't continue as such, that the floodwaters could rise and destroy everything.»

If Ter-Petrosyan is completely being demonized and equated with evil, those around him are being stripped of the most basic of things, i.e., logic, the ability to resist manipulation and comprehending what's best for the nation. According to Aram G. Sargsyan, «If they had used reason they would have all together ruled out the possibility of voting for Ter-Petrosyan.» Accordingly, the entire Movement was one big irrational outburst, devoid of any constructive attributes.

Of course, they forget to note the following clearly self-evident points in their explanations - the government's use of overwhelming force on the morning of March 1st in Freedom Square and that the division of society, its extreme polarization into the haves and the have-nots, took place during Kocharyan's term in office. It is understandable that they do not speak in terms of a civil society, democratic principles and other such things. The uniting factor is the nation - thus the terms «traitor of the nation», «national cleavage» and «defense of the national psyche». Ethnic commonality then, in and of itself, becomes the self-evident and absolute principle for unity. The term «we» is constantly bandied about and almost unconsciously used by many people - «our nation», «our people», «our shameful first day of spring», «our disgrace».... Again they forget to mention anything about the society. (Parenthetically, what is the function of sociology in all this when there is no society to speak of, where there isn't even a minimum of correlation to that type of society that gave birth to the science of sociology in the first place, to interpret that same society?)

On March 19th, the reporter from the daily newspaper «Azg» proposes another explanation. Taking into account that Ter-Petrosyan's «promise to destroy and demolish was sufficient to gather such a respectable portion of the electorate around him», he asks, «Where does the frenzy, either latent or manifest, spring from to arouse this intent «to destroy?» Answering his own question he explains, «The main reason is our centuries-old lack of statehood.»

I would like to refer to another excerpt from the above-mentioned interview given by Samvel Khudoyan in which he asserts that Armenians possess «traits specific to the Asiatic mentality». These are «servility, provincialism, the mind-set of the serf, toadyism». I have one important reservation. I believe that the «Asiatic mentality» isn't the reason. Rather, I would like to substitute the euphemism «lack of statehood» with a term accepted and understood by all - subjugation. It has been the Armenian people's longstanding colonial subjugation, rather than the «frenzy to destroy», that has instilled the above-mentioned qualities into many of our people, qualities that have been passed down through the generations. Thank God, however, these qualities are not found in everyone and in everybody.

# Sarkisian Sworn In Amid Tight Security

**Continued from page 1**

They are responsible for the deaths of innocent people."

"This election must be annulled and a new, democratic one must be held," said Shushanik, a doctor. "This is not about Levon. This is about our freedom."

Among the protesters were relatives of opposition supporters killed by security forces. Alla Hovannisian's 23-year-old son, Tigran Khachatrian, was one of them. "He didn't go to rallies," she said, holding the young man's picture. "But on that day he heard about the beating of demonstrators [in Liberty Square.] He called someone and then said, 'Dad, I have to go there.' I said, 'Tigran, don't go, it's dangerous.'"

Another action in memory of the March 1 victims and against the new president was organized near the CEC building. With posters reading "Falsifying Election Commission", "[CEC Chairman] Azaryan is a Criminal" and other posters of similar content, a group of young people wearing black ribbons made several circles in front of the building and went away in silence.

## International Crisis Group
## Armenia: Picking up the Pieces

Armenia's flawed presidential election, the subsequent lethal crackdown against a peaceful protest rally, the introduction of a state of emergency and extensive arrests of opposition supporters have brought the country to its deepest crisis since the war against Azerbaijan over Nagorno-Karabakh ended in 1994. The situation deprives Serzh Sarkisian, scheduled to be inaugurated as president on 9 April 2008, of badly needed legitimacy and handicaps prospects for much needed democratic reform and resolution of the Nagorno-Karabakh conflict alike. Unless the U.S., EU and others with significant diplomatic leverage over the regime in Yerevan exert pressure, Armenia is unlikely to make progress on either. The Sarkisian administration must urgently seek credible dialogue with the opposition, release prisoners detained on political grounds, stop arrests and harassment of the opposition and lift all measures limiting freedom of assembly and expression. Unless steps are taken to address the political crisis, the U.S. and EU should suspend foreign aid and put on hold negotiations on further and closer cooperation.

On 1 March 2008, police and security troops broke up a peaceful demonstration that had been going on continuously in Yerevan's Liberty Square to protest the announced official result of the 19 February presidential election. Clashes with demonstrators intensified later in the day, and the violence, involving firearms, arson and looting, left seven civilians and one police officer dead. More than 450 people were reportedly injured, including several dozen police and troops.

Outgoing President Robert Kocharian reacted by declaring a sweeping twenty-day state of emergency, which suspended many basic civil rights and temporarily banned independent media reporting. The authorities used the claim that an attempt, involving a vague "international conspiracy", had been made to topple the government as justification for arresting over 100 opposition figures. Though the state of emergency was officially lifted on 21 March, President Kocharian signed a new law into effect four days earlier placing new controls on political manifestations.

Sarkisian, prime minister since 2007, is Kocharian's hand-picked successor, but questions about his election and its violent aftermath will undermine his authority. The 19 February election was marred by serious irregularities, and the subsequent use of excessive force and wide arrests by the authorities has caused a deep rift in society. Unless opposition figures are freed, dialogue resumed and justice pursued, this division will deepen.

Armenia's democracy has in most respects been in retreat for over a decade. Some constitutional and legal reforms have been undertaken, but they are mostly formalistic and the exception. The rule has been flawed elections, concentration of power in the hands of the executive, an army and security services which enjoy virtual impunity, a court system subservient to and manipulated by the government, and increased government censorship and control of key media outlets. Though the economy has performed relatively well and poverty has decreased, corruption and cronyism still seriously restrict sustainable, equitable growth.

Armenia needs to address the electoral violence as well as more fundamental questions regarding the country's governance. If the incoming presidency takes the right course, the EU and U.S. need to help foster reconciliation and deeper institutional reform. Their reaction to the flawed election and lethal crackdown, however, has been inadequate. The international community needs to send a stronger message to ensure that Armenia remains a democratic state, with a functional opposition that does not live in fear, and where basic human rights, including the right to freedom of assembly and expression, are guaranteed.

To avoid a crisis of legitimacy and the concomitant political instability, the Armenian authorities should:

· release persons detained due to their political activity and cease arrests and threats against the opposition, including against the runner-up in the 19 February election, former President Levon Ter-Petrosian;

· authorise an independent investigation, with international participation, into the 1 March violence and follow through on the pledge to punish police officers who illegally used weapons against civilians;

· revoke the amendments to the law on freedom of assembly adopted during the emergency rule and allow peaceful protests in locations where they will not cause a threat to public order;

· lift remaining media restrictions and refrain from new restrictions on the media or access to the internet;

· investigate claims of violence and attacks against political party vote monitors at polling stations and initiate criminal proceedings against perpetrators; and

· pursue a credible dialogue process with the opposition in an effort to lower political tensions.

To defuse tensions, the Armenian opposition should:

· agree immediately and without preconditions to enter into dialogue with the government;

· impress upon supporters that protests which aim to stir unrest, such as blockading government buildings and impeding the work of government ministries, will not be condoned; and

· appeal the Constitutional Court's decision on the elections to the European Court of Human Rights and consider the same course with respect to other court decisions when all domestic remedies are exhausted.

To facilitate a way out of the impasse, the EU and U.S. should:

· encourage all major Armenian political forces to engage in direct negotiations to find ways to defuse tensions and speed reconciliation; and

· deliver clear messages to the Sarkisian administration that business

Continued on page 4

## Letters To The Editor
### Genocide Denial - U.S. Policy Stamped In Blood

In April 2006, I encountered Secretary of State Condoleezza Rice in an Alexandria, VA restaurant. I approached Dr. Rice who was accompanied by First Lady Laura Bush and a secret service cadre. As I shook her hand, I broached the subject of genocide by commenting on my family's support of action in Darfur. She replied, "I have been there." Moving to the topic of the Armenian Genocide, I told her I was in Washington to urge my congressional delegation's support of a reaffirmation of the Armenian Genocide — a horrific event every American Armenian connects to. She simply stared back at me - and, without further comment, departed.

This February, I was again in Washington to promote Genocide reaffirmation. I met with first-term Colorado Congressman, Doug Lamborn. Mr. Lamborn, a former Colorado State Representative, had cosponsored a state resolution supporting Genocide recognition. As CO District 5 Representative, he cosponsored H. Res.106 in February 2007. However, that October, he withdrew his name. I wanted to know why!

During my meeting with Representative Lamborn, he told me he had rejected multiple State Department attempts to persuade him to withdraw from H. Res.106 because he understood the historical facts of the event. The turn came with an unsolicited call from General David Petraeus. He told Representative Lamborn that his support of the Armenian Genocide resolution threatened the safety of our troops in Iraq because of Turkey 's view of this sensitive political issue.

When I heard Mr. Lamborn's explanation, I was stunned. All I could think was how could this happen in America — a country once viewed around the world as a beacon of moral justice. That America had actively and officially assisted my great grandmother Haiganoosh sue the Ottoman Empire for its government directed murder of her husband. My great grandfather, Dr. Nahabed Abdalian, an American educated medical doctor, ordained minister, and naturalized American citizen was murdered by Turkish gendarmes in Gurin, Turkey . In 1897, the U.S. Consulate in Sivas completed its investigation of his murder and provided an official recounting to the U.S. State Department and my great grandmother. (UCLA Professor Richard Hovannisian obtained a microfiche copy of this handwritten document and Tufts Professor Lucy Der Manuelian assisted me in its transcription.)

This present-day official Genocide denial policy (i.e. use every word but genocide) is our community's legacy initiated by President George Herbert Walker Bush. The slippery slope was strengthened and reaffirmed by President William Jefferson Clinton who personally intervened to subvert passage of a House Genocide reaffirmation resolution. President George Walker Bush has grown genocide denial into an Administration-wide policy, aided by the sheepish compliance of our 110th Congress. As my own experience confirms, President Bush's denial zeal has permeated into every pore of government — even reaching into the highest levels of our traditionally non-partisan military command. Another consequence of his proactive denial is the currently diminished Administration-proposed financial support package for the blockaded Republic of Armenia.

While both parties have been complicit in denigrating the first Genocide of the 20th Century, a change of course could come with our 2008 Presidential election. Senators Clinton and Obama have pledged to reaffirm the Armenian Genocide (Senator McCain would presumably maintain the current policy of denial). I would urge every American-Armenian to reflect on our presidential history of Genocide denial as they cast their vote this November.

And should our next President come to office with a pledged policy of Genocide reaffirmation, it is our community's duty to our history to press for that commitment to be honored.

**Pamela Barsam Brown**
**Boulder, Colorado**

## Correction

Editor:

I was surprised to see my name in a lengthy, rambling letter by Harout Bronozian, published in the March 29 issue of Massis.

While I respect everyone's right to have their own political opinion, I find it unacceptable that falsehoods and insults are used to make a personal point. As they say in Armenian, "hayhoyanke pasdi sov e."

Bronozian is wrong when he writes: "Harut Sassounian's Lincy Foundation was another organization that quickly congratulated Sargsyan." First of all, The Lincy Foundation is not mine. It does not belong to me. I am just an employee there. Secondly, The Lincy Foundation, as a non-profit, does not get involved in political issues. No message was sent in the name of The Lincy Foundation.

Finally, Bronozian writes "One wonders what Sassounian will get in return?" I would like to state that, contrary to Bronozian's insinuations, I have no interest in getting anything from anyone. I resent Bronozian's innuendo.

Bronozian is well advised to stick to expressing his own opinion rather than making false and insulting accusations about others.

Sincerely,

**Harut Sassounian**
**Publisher,**
**The California Courier**

**www.massisweekly.com**
**massis2@earthlink.net**

## KCET Airs 'Armenian: A Story Of Survival' On April 24

Armenians: A Story of Survival, a film by Emmy-Award winning producer Andrew Goldberg, airs Thursday, April 24 (8:00-9:00 p.m.) on KCET. Filmed in 12 countries, the documentary explores the Armenian people's struggle from their humble beginnings to their near elimination and beyond.




Narrated by Academy Award winner Olympia Dukakis, Armenians: A Story of Survival includes interviews with scholars and writers, including Nobel Peace Prize laureate Elie Wisel, Dr. Robert J. Lifton, author of The Nazi Doctors, and Peter Balakin, author of Black Dog of Fate. This program also includes interviews with the Head of the Armenian Church and the President of Armenia.

Broadcast as part of Armenian Remembrance Month, Armenians: A Story of Survival follows the journey of the Armenian people starting from their beginnings near the Middle East, where they were identified only by their different language, and continues with Armenia's conversion to Christianity in 301 A.D. The documentary also explores some of the countless wars Armenians have fought to defend their faith, Armenia's domination by numerous empires and the near-elimination of its people during the first Genocide of the 20th century. Also profiled are the birth of the Armenian nation, which achieved its independence from the Soviet Union and became a member of the United Nations in the early 1990s; the Armenian Diaspora; Armenia's war with neighboring Azerbaijan; and the future of the country and its people.

### Fresno

## Armenian Minister From Turkey To Keynote Genocide Month Gathering

An Armenian pastor whose ministry is based in the Republic of Turkey will speak at the oldest Armenian Church in the State of California.

Reverend Krikor Aghabaloghlu will keynote the Spring 2008 Dinner of the First Armenian Presbyterian Church Men's Fellowship.

The dinner event, honoring the faith and sacrifices of the Armenian Martyrs of 1915, will take place on Tuesday evening, April 29, 2008, at the church campus, 430 South First Street at Huntington Boulevard in Fresno.

The evening will begin with ethnic appetizers at 6:30 p.m. and continue with a barbecue steak and chicken dinner at 7 p.m. The event is open to the public and reservations, at $10 per person, may be made by calling George Karkazian at (559) 434-9009.

The keynote speaker was born in 1957 in Arapkir, Turkey near the confluence of the Eastern and Western branches of the Euphrates Rivers. After receiving his early education in his native city and Malatya Province, Aghabaloghlu matriculated at the University of Istanbul, a state institution dating to A.D. 1453. He majored in the history of Turkey as an undergraduate and received a Bachelors of Education Degree in 1979.

Some years later, Aghabaloghlu completed graduate work at the Bitinia Bible School of Istanbul. In September 1999, the Union of Armenian Evangelical Churches in the Near East granted him a license to preach and perform the Sacraments at the Armenian Evangelical Church of Gedik Pasha, Kumkapi, Istanbul. Three years later he was ordained a Minister of the Word and Sacraments and continues to serve as pastor of the Gedik Pasha congregation. He is married to the former Maria Semerji and they have two children.

Founded in 1850, the Gedik Pasha church is one of the oldest Armenian Evangelical houses of worship in the Republic of Turkey and was the home church of the late Hrant Dink, founding editor of the influential Agos Weekly .newspaper.

In 2005, the Turkish national television channel, Flash TV, invited Aghabaloghlu to participate in a five-hour live talk show on the topic of the Armenian Genocide. The young pastor had once been jailed for challenging the confiscation of church property by the authorities. Shocking his broadcast hosts, he told viewers there was no doubt genocide had occurred and that citizens of Anatolia knew the truth about the subject. He insisted that a member of the clergy has the obligation to tell the truth and he refused to allow himself to be silenced.

The host congregation in Fresno has its roots in the Ottoman Empire of 19th Century Turkey. On July 25, 1897, 40 immigrants from Marsovan, a town in the Central Black Sea region, chartered the First Armenian Presbyterian Church of Fresno. The boyhood church of authors William Saroyan and A.I. Bezzerides, FAPC today has a multigenerational congregation drawn from the Old and New Worlds.

The Fresno congregation is marking its 110th Anniversary Year with the theme, "Becoming the Church." FAPC is a member congregation of the Presbyterian Church (U.S.A.) and the Armenian Evangelical Union of North America.

## Merdinian School 26th Anniversary Banquet Celebration

### AMAA Vice President Peter Kougasian, Esq. Keynote Speaker New High School Project Highlighted

**By Joyce Abdulian**

The Universal Sheraton Hotel Roof Garden was, on March 2, 2008, the celebration site of the 26th anniversary of the Charlotte and Elise Merdinian Armenian Evangelical School. Peter Kougasian, an Assistant District Attorney of New York City was Keynote speaker. He spoke about the importance of an Armenian Evangelical education such as the one offered at Merdinian. He shared how his ancestor's Armenian Evangelical faith and education continues to influence him.

Mr. Kougasian, works in the office of Robert Morgenthau— grandson of Henry Morgenthau, the US Ambassador to the Ottoman Empire during World War I. He relayed a warm message from Mr. Morgenthau. He shared how the Morgenthau family are fierce partisans of the Armenian people in the world today stating "Armenian blood flows through their veins and whenever there is an Armenian cause, they can always be counted on to try to bring a sense of justice."

The evening began with the honoring of Armenian history and language teacher Ashkhen Ispendjian. Board of Directors Chairman, Dr. Hrair Atikian honored Mrs. Ispendjian for her 25 years of devoted service to the students and school. She came to Merdinian after serving in Lebanon as a teacher and principal for 20 years. Here, she not only taught Armenian language and history, but prepared textbooks for these courses when no such books existed. Mrs. Ispendjian expressed her appreciation for the honor and confessed she "lied" to her students claiming no knowledge of English in order to encourage their use and understanding of Armenian.

Former students honored her. Duduk player Armen Kvryan, performed a musical piece and Greg Martayan, stated, "Merdinian is not just a school feeding into college prep schools. Merdinian is the prep school for life."

Also honored were individuals who have served 15 years or more on the Board of Directors. The late Mrs. Alice Haig was highlighted as the "First chairperson and moving force behind the school from its inception 27 years ago." Accepting her award posthumously was her husband, Dr. Vahe Pierre Haig. The other honorees were: Zaven Khanjian, Koko Balian, Samir Ekmekji, Hratch Sarkis, and Dr. Nazareth Darakjian,

Dr. Steve Aharonian, AMAA President, encouraged the gathering to continue their financial support for the growth of the school—pledging AMAA's support by raising 10% of the cost. A conditional-use permit for the new expansion has been granted as of this printing, adding 13,100 square feet on the same school site for a high school. The projected cost is about $7 million. The student population will have the capacity to increase from 260 to 650.

Principal Hovsep Injejikian stressed the importance of a high school by stating; "When the students leave us at the end of middle school, they are still teenagers. They are not fully committed to their Armenian Christian heritage."

Master of ceremonies Dr. Nazareth Darakjian stated how the school started with, "a few visionaries and with a lot of faith and hope." Miss Elise Merdinian made the school possible by donating her entire estate to the AMAA.

An architectural drawing of the proposed new high school was proudly exhibited by the building committee consisting of Samir Ekmekji, Dr. Hrair Atikian, Hratch Sarkis, and Herair Mouradian. Evening co-chairpersons Helga Sarkis and Seta Nalbandian, along with their committee, were encouraged by the enthusiasm shared by the evenings large crowd and some impromptu donations. The Lark Musical Societies Women's Acappella Chorus provided the musical portion of the evening under the direction of Maestro Vatsche Barsoumian.

From the humble beginning in 1982 with only 13 students and no campus of their own, Merdinian has developed into this unique Armenian Evangelical School shaping the lives of hundreds of students as they envelop their Armenian Christian heritage coupled with a first class education. Elise Merdinian's dream was realized beyond her expectations.

## Armenia: Picking up the Pieces

**Continued from page 3**

as usual will not be possible until serious steps are taken to reconcile the Armenian polity as well as to address the root causes of the current instability.

If the government does not take credible steps to implement the measures recommended above and if arrests of opposition members continue:

· the EU and U.S. should suspend foreign aid;

· the Council of Europe should consider suspending Armenia's membership; and

· the U.S., EU and EU member states should consider, especially if there is more violence, initiating a diplomatic embargo on visits by President Sarkisian and senior officials of the security services.

**Yerevan/Tbilisi/Brussels, 8 April 2008**

NOR SEROUNT TV LIVE
CHARTER CABLE CHANNEL 280
GLENDALE - BURBANK
EVERY THURSDAY 10.00 to 11.00 PM

ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍ

# ԱՐԱ ԹՈՓՃԵԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ, ՏՆՕՐԷՆԸ ԵՒ ՄԱՐԴԸ

«Մանկավարժութիւնը ազգային է եւ կարելի չէ ուրիշ երկրի մը մանկավարժութիւնը ներածել այլ երկիր»:
Տնօրէն Արա Թոփճեան

*ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ*
*(1959–1965)*

*- Երախտապարտ ենք իմանալու որ ՀԲԸ Միութեան մայր վարժարաններէն՝ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութենէն մինչեւ Դարուհի Յակոբեան Աղջկանց եւ Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարաններ, դաստիարակուած են սերունդներ, որոնք ազգային-հասարակական կեանքէն ներս, հայրենիքի եւ սփիւռքի մէջ, ստանձնած են կարեւոր պարտականութիւններ, - կը գրէ Յովնան Արք. Տէրտէրեան, Առաջնորդ Սրբազան հայրը իր յարգանքի ու օրհնութեան գիրին մէջ՝ նորոգ հանգուցեալ Պրն. Տնօրէն Արա Թոփճեանին նուիրուած հոգեհանգիստ-յուշահանդէսի առթիւ:*

*Քառասուն տարի Պրն. Արա Թոփճեան եղաւ ուսումնական յասանողները կը խոնարհին անոր յիշատակին առջեւ եւ կը վերյիշեն զինք խոր յարգանքով, - ըսաւ օրուան հանդիսավար Պրն. Լեւոն Քէշիշեան, ապա հրաւիրեց Սանուցի ատենապետ Պրն. Աւօ Մակարեանը, որ Սանուցի շնորհակալութիւնը յայտնելէ ետք ներկաներուն, հակիրճ տեղեկութիւն մը տուաւ հանգուցեալին թաղման հետ կապուած եւ ծրագրուած հանգանակութեան մը մասին:*

*Վարժարանի առաջին շրջանաւարտներէն ( 1953) եւ Լիբանանի ՀԲԸ Միութեան երկարամեայ վարիչ քարտուղար Պրն. Սարգիս Մինասեան ունեցաւ յատկանշական սրտի խօսք մը՝ մեզմէ յաւէտ հեռացած Պրն. Արա Թոփճեանին նուիրուած հոգեհանգիստ-յուշահանդէսի առթիւ: Ան ամփոփ կերպով տալէ ետք Յովակիմեան-Մանուկեանի պատմականը եւ մանաւանդ անդրադառնալով 1975-87*



Յովակիմեան-Մանուկեան Վարժարանի շրջանաւարտներէն խումբ մը

*առաջդիմութեան, մարդակերտութեան եւ հայակերտութեան առաջատար զինուորագրեալը Լիբանանի մէջ եւ իր անունը նոյնացաւ իր իսկ պաշտօնավարած վարժարանին հետ, իր համբաւը տարածելով հայագաղութներէ ներս: Պրն. Տնօրէնը իր մահկանացուն կը կնքէր 11 Փետրուարին, Պէյրութի մէջ եւ Հայաստանեայց Եկեղեցին իրեն կը շնորհէր համալիբանանեան յուղարկաւորութիւն Անթիլիասի Ս. Գրիգոր Մայր տաճարէն ներս:*

*Կիրակի, 30 Մարտ 2008-ին, Գալիֆորնիոյ Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն՝ կազմակերպութեամբ ՀԲԸ Միութեան Դարուհի-Յովակիմեան Սանուց Միութեան, հովանաւորութեամբ Հարաւային Գալիֆորնիայի ՀԲԸ Միութեան Շրջանակային Յանձնաժողովի եւ նախագահութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Այնուհետեւ, ՀԲԸ Միութեան Ալեք Մանուկեան կեդրոնի Պոյաճեան սրահին մէջ կայացաւ յուշահանդէս-հոգեճաշ, որուն ներկայ էին յովակիմեանցիներ, դարուհի-յակոբեանցիներ, մելգոնեանցիներ, նախկին ուսուցիչներ եւ Պրն. Տնօրէնը յարգող ու գնահատող բազմաթիւ ազգայիններ:*

*- Մարդը՝ շիջեցաւ, բայց այդ Մարդուն հովանիին տակ կրթութիւն ստացած աշխարհացրիւ ուտարիներու Լիբանանի քաղաքացիական պատերազմի տարիներուն Պրն. Արա Թոփճեանի վճռակամութեան՝ յիշեց թէ ինչպէս երկսեռ երկրորդական մէկ վարժարանի մէջ միաձուլուած աղջկանց եւ մանչերու երկրորդական վարժարանի քաջարի տնօրէնը Պէյրութի Արեւմտեան կողմէ Արեւելեան բաժին կը ճամբորդէր ամէն օր վտանգեր դիմաւորելով: Ապա, խօսելով գլխագիր մտաւորական տնօրէնին մասին, Պրն. Ս. Մինասեան Պրն. Ա. Թոփճեանը նմանցնելով իսկական դարբինի, ըսաւ. «Հազուագիւտ երեւոյթ է ունենալ զարգացող միտքը, տեսիլքը, հաւատքը եւ աշխատանքի կիրքը միատեղ մարմնացած մէկ մարդու մէջ, որ տակաւին աւիւնն ունէր ուսումնականէն անդին, ժամանակ տրամադրելու նաեւ ազգային, մշակութային գործունէութեանց»:*

*Պրն. Ա. Թոփճեանի շունչին տակ դաստիարակուած է նաեւ Փրոֆ. Օշին Քէշիշեան ( 1955) գաղութիս ամենէն վաւերական հրապարակագիրներէն ու հրապարակախօսներէն մին: Փրոֆ. Օ. Քէշիշեան իր ելոյթին մէջ յատկապէս ընդգծեց Յովակիմեան-Մանուկեան վարժարանի կրթական մակարդակի զգալի բարձրացումը, որուն մէջ մեծ ջանք ու ճիգ ներդրաւ Պրն. Տնօրէնը: Պրն. Ա. Թոփճեան*

*Շար.ը էջ 22*

# «ԻՆՉ ՈՐ ՏՈՒԻ ՈՒՐԻՇԻՆ»
## ՏՆՕՐԷՆ ՊՐՆ. ԱՐԱ ԹՈՓՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

*Դոկտ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան*

*Կիրակի Մարտ 30-ի առաւօտուն եպիսկոպոսական սուրբ Պատարագի մատուցմամբ Քառասունքի հոգեհանգիստ կատարուեցաւ Փասատինայի նորաշէն եկեղեցւոյ մէջ ի յիշատակ Յովակիմեան-Մանուկեան Երկրորդական Վարժարանի երկարամեայ եւ նուիրեալ Տնօրէն Տիար Արա Թոփճեանի: Ապա Հ.Բ.Ը. Միութեան կեդրոնին մէջ հոգեճաշ տրուեցաւ եւ պատշաճ յայտագիրով եւ բացառիկ պատկառանքով Վարժարանի Սանուց Միութեան կազմակերպութեամբ նշուեցաւ հանգուցեալի անմնացորդ ծառայութիւնը հայ ազգին ու անոր հասցուցած մտաւորական սերունդին:*

*Հոն էին հոծ թիւով Վարժարանի շրջանաւարտներ ու բարեկամներ որոնք լսեցին բարի վկայութիւններ այն Տնօրէնին մասին որ անձնդիր, տիրական ու հեղինակաւոր իր գործունէութեամբ ամբողջ 40 տարիներ նոյն պաշտօնին վրայ փայլեցուց Մեծ Միութիւնը Բարեգործականի, «տալով լիովին իր ունեցածը ուրիշին» հանճարեղ բանաստեղծ Վահան Թէքէեանի յաւերժական խօսքերով: Պրն. Թոփճեան «հարստացուց» իր ազգը՝ տալով անոր բազմաթիւ որակաւոր զաւակներ որոնք այլապէս կրնային կորսուիլ ու այսօր չմիանալ այն փաղանգին որ երախտագէտ սիրով եկած էր իր սրտի ու մտքի ամենէն զգայուն լարերուն վրայ «նուագելու եւ երգելու»:*

*«Ինչ որ տուի ուրիշին»: Տնօրէն Արա Թոփճեանի «Ուրիշը» հոն ներկայ էր, իր «տուածն» էր, որոնք յարգալից կերպով իրենց «տրուածը» իրենց կարգին կուտային «ուրիշին»: Պրն. Թոփճեանի հասկացողութեամբ հրաշքը այս կերպ միայն կը կատարուէր: Ու այդ կատարուեցաւ իր աչքին առջեւ երբ մանաւանդ Աստուած իրեն պարգեւեց 93 բեղմնաւոր տարիներ:*

*Բացառիկ էր մթնոլորտը երբ հասուն մարդիկ, այն ատեն ուսման ծարաւի պատանիներ, հետզհետէ բեմ բարձրանալով վկայեցին թէ հրաշքներու համազօր աշխատանք տարած էր իրենց մեծանուն Տնօրէնը եւ Վարժարանը դարձուցած ամենէն օրինակելի հաստատութիւնը բազմաբեղուն Պէյրութի հայ համայնքէն ներս: Անոնք բեմ կը բարձրանային Յովակիմեան Վարժարանի անունին արժանի բարձրագոյն դիրքերով, եւ հրաշքը հոս կը կայանար, երբ պատանիներ արդէն դարձած ծնողներ ու ազգին նուիրեալ տաղանդաւոր անձինք, կուգային վերյիշելու ապրուած կեանք մը, Տնօրէն-աշակերտի լիիրաւ կեանք մը, եւ ոչ թէ սոսկ »ի յուշ իրենց յարգարժան Տնօրէնին«:*

*Տողերս արձանագրողը հոն ներկայ էր, թէ՛ եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհանգիստին եւ թէ՛ Տնօրէն Արա Թոփճեանի յիշատակին նուիրուած յարգանքի ցերեկոյթին: Ջեմ աշակերտած Յովակիմեանին, սակայն եղած եմ ժամանակակիցը Պրն. Թոփճեանին ու իր գլխաւորած կարկառուն ուսուցչական կազմին, ըլլալով նաեւ անոնցմէ մին երբ կ'ուսուցանէի Դարուհի-Յակոբեան Երկ. Վարժարանէն ներս: Առաջնակարգ կը հնչէր մեր ականջին անունը այս մեծ նուիրեալին եւ կարողագոյն Տնօրէնին: Բոլորը հմայուած կ'արտասանէին իր անունը: Ուսուցչական կազմի մէկ ժողովին, երբ տղոց եւ աղջկանց երկու վարժարաններու ուսուցիչներ հաւաքուած էինք, տիրական դէմքը, ճշմարիտ առաջնորդողը, արթնամիտ վարչագէտը, հնարամիտ մտաւորականը, խղճամիտ եւ մանաւանդ սկզբունքի բացարձակ տէր Պրն. Թոփճեան իր կարգապահութեան գերզգայուն պահանջկոտութեամբ կը վարէր ժողովը, ժպիտը դէմքին ու անմնացորդ յարգանքը ի սպաս դնելով ուսուցչական կազմին: Տիրապետող էր պարզապէս իր ներկայութիւնը:*

*Իմ նկատողութեան արժանի մէկ »աննշան« կէտն էր ա՛յն որ Պրն. Թոփճեան միշտ »ոտքի« կեցած տեսած եմ, չեմ յիշեր գործի ժամերուն իր բազկաթոռի եւ կամ նստած դիրքի վրայ ըլլալը: Իմ վրայ այդ խոր տպաւորութիւնը գործած է թէ ան միշտ ոտքի, բարետես իր հասակով, տարածուն նայուածքով, ամէն ինչ »իր աչքին առջեւ« կատարուած ըլլալու պահանջքով, միշտ գործի գլուխ եւ մշտարթուն գործող գիտակից Տնօրէնն է եղած, որ իր այդ բազմերես բարեմասնութիւն-*

*Շար.ը էջ 17*


ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ... ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ...

Մեծ Ժողովրդականութիւն Վայելող
Կլէնտէլի AMGA 280-րդ Ալիքը
Այժմ Կը Սփռուի
GlobeCast
Արբանեակային Հեռատեսիլով
Ամերիկայի, Գանատայի Եւ Մեքսիքոյի
Ամբողջ Տարածքին
Դուք Կրնաք Դիտել
Հայաստանեան Լուրեր
Քաղաքական Վերլուծութիւններ
Երաժշտական Հաղորդումներ
Եւայլն

Մանրամասնութիւններու Համար
Հեռաձայնել 818.547.9696

# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

## ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՎԱՅԵԼԵԼՈՒ «ԶԷՄԻՐԷ» ԵՐԳԱԽԱՂԸ




*«Զէմիրէ» երգախաղին նուիրուած մամլոյ ասուլիսէն պահ մը*

*Շաբաթ, Ապրիլ 6ին, կէսօրուայ ժամը 12-ին Փասատինայի Հ.Բ.Ը.Մ.ի Ալեք Մանուկեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ խիստ շահեկան մամլոյ ասուլիս մը, որուն ներկայ էին Հարաւային Գալիֆորնիոյ հայ մամուլի եւ հեռուստատեսութեան գրեթէ բոլոր ներկայացուցիչները:*

*Արդարեւ, Հ.Բ.Ը.Մ.ի Մշակութային Յանձնախումբի եւ Լարք երաժշտանոցի կողմէ նախաձեռնուած Տիգրան Չուհաճեանի «Զէմիրէ» երգախաղի յառաջիկայ ամսուան վերջաւորութեան տեղի ունենալիք անդրանիկ բեմադրութեան մասին էր ասուլիսը:*

*Ուրախ ենք որ այս վիթխարի եւ աննախընթաց գործի յաջողութեան համար՝ կազմուած են եօթ յանձնախումբեր, որոնք մեծ պատասխանատուութեամբ եւ արհեստավարժ մակարդակով լծուած են նախապատրաստական լուրջ աշխատանքներու:*

*«Հետաքրքրական, ջերմ եւ պատշաճ մթնոլորտի մէջ» սոյն ասուլիսի բացումը կատարեց «Զէմիրէ»ի մամլոյ դիւանի ատենապետ՝ Զաւէն Խանճեան: Ան ողջունելէ ետք ներկայ լրագրողները յայտնեց թէ «Արուեստն ու Մշակոյթն է որ կու գայ փրկելու մեզ մեր հոգեկան աղէտներէն»: Զ. Խանճեան անդրադառնալով այս հսկայ գործին՝ ընդգծեց որ ան կարիքն ունի մեծ աշխատանքի եւ բախտաւորութիւն է գաղութիս մէջ ունենալ երկու տաղանդաշատ արուեստագէտներ՝ Վաչէ Պարսումեան եւ Գրիգոր Սաթամեան, որոնք մեծ նուիրումով լծուած են այս բացառիկ երգախաղի (օփերէթ) յաջողութեան:*

*Այնուհետեւ, ծանօթ խմբավար Վաչէ Պարսումեան մանրամասն տեղեկութիւններ տուաւ քոմբոզիթոր Տիգրան Չուհաճեանի ստեղծագործութիւններուն եւ յատկապէս «Զէմիրէ»ի մասին, որ հարիւր տարիէ ի վեր չէ բեմադրուած, ձեռագրի անյայտ մնալուն պատճառով: Վերջապէս կրցած է գայն գնել լիբանանահայ երաժշտասէր Նիկողոս Յակոբեանէն ու գործը իր փոշեթաթախ վիճակէն բերուած է լոյս աշխարհ: Նշենք նաեւ որ «Զէմիրէ»ն գրուած է 1890-ին եւ քանի մը տարի ետք միայն մէկ անգամ բեմադրուած է Պոլսոյ մէջ (Թրքերէն լեզուով): Ներկայիս մեծ աշխատանք կատարուած է լիպրեթթօն հայերէնի վերածելու եւ բնագիրը որոշ մշակումներու ենթարկելու մէջ:*

*Տեղեկացանք որ «Զէմիրէ»ի նիւթը առնուած է արաբական կեանքէ: Հազար ու մէկ գիշերներու հեքիաթի նմանող իրադրութիւնը՝ տեղի ունեցած է Հիճազի մէջ (Սէուտական Արաբիա), սակայն այս գործը նախաձեռնողները զայն փոխադրած են Պարսկաստան:*

*Բիէսին մասին խօսելով ըսուեցաւ որ եւրոպական մակարդակով բարձրարուեստ գործ մըն է, հեղինակի այլ ստեղծագործութեանց նման: Երգախաղին իրենց մասնակցութիւնը կը բերեն ծանօթ եւ տաղանդաշատ մեներգիչներ (Անի Մալճեան, Սուրէն Մկրտիչեան, Արտաշէս Հայրիեան, Ռուբէն Թենունց, Կարինէ Աւագեան եւ ուրիշներ), Լարքի 50 հոգինոց երգչախումբը եւ այլ կատարողներ:*

*Արտադրութեան վարիչ եւ ծանօթ բեմադրիչ՝ Գրիգոր Սաթամեան լրացուցիչ տեղեկութիւններ տուաւ «Զէմիրէ»ի մասին: Ան բարձր գնահատեց այս գործի յաջողութեան համար Վաչէ Պարսումեանի տարած յամառ աշխատանքը, որ կորստեան դատապարտուած «Զէմիրէ»ն իր փրկութիւնը գտաւ:*

*Արդարեւ, «Զուարթ»էն եւ «Լէպլէպիճի»էն ետք «Զէմիրէ»ն յաղթանակի նոր դափնեպսակ մը կը խոստանայ Հ.Բ.Ը.Մ.ի Արտաւազդ Թատերախումբին եւ Լարք երաժշտական ընկերակցութեան:*

*«Զէմիրէ»ն դուռը կը թակէ...*

*Գ. Մ.*

## ՀԱՅԿԱԿԱՆ ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՌԱՋԻՆ ԹԵԼԵԹՈՆԸ

### «ՀՐԵՇՏԱԿ ՄԸ ԵՂԻՐ, ԿԵԱՆՔ ՄԸ ՓՐԿԷ« ՔԱՐՈԶԱՐՇԱՒ Ի ՆՊԱՍՏ ՑՈՂՈՒՆԱՅԻՆ ԲՋԻՋՆԵՐՈՒ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄԻ ԿԵԴՐՈՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ




*ՀՈՆԱՀ-ի «Հրեշտակ մը եղիր, կեանք մը փրկէ» թելեթոնի կամաւորները*

*Մեծաթիւ կամաւորներու, նուիրատուներու եւ կազմակերպիչներու նուիրեալ ջանքերուն շնորհիւ, Հայկական Ոսկրածուծի Նուիրատուներու Արձանագրութեան Հիմնարկը (ՀՈՆԱՀ) պիտի կազմակերպէ «Հրեշտակ մը եղիր, կեանք մը փրկէ» քարոզարշաւ-թելեթոնը, Կիրակի, Ապրիլ 13, 2008-ի երեկոյեան ժամը 4:00-9:00: Յոյսով ենք, որ այս միջոցաւ ուսմով կարելի պիտի ըլլայ անհրաժեշտ գումարները գոյացնել, որպէսզի Երեւանի մէջ կարելի ըլլայ հիմը դնել Ցողունային Բջիջներու Պատուաստումի Կեդրոնին:*

*Թելեթոնը համատարած կոչ պիտի ընէ հանրութեան, որպէսզի իրենց մասնակցութեամբ այս ծրագրի ֆինանսաւորումը իր լրումին հասցնեն, որուն համար Հիմնարկը նախնական զօրակցութիւն ստացած էր Լինսի Հիմնարկութենէն, ան հատներէ, ՀՈՆԱՀ-ի վարչութեան անդամ Գարօլան Նաճարեանէն, Glendale Sunrise Rotary Club-էն, եւ մեծաթիւ զօրակցողներէ, որոնք անցեալ տարի ներկայ գտնուեցան Հիմնարկի հինգերորդ տարեդարձի համերգային դրամահաւաքին: Այդ առիթով գոյացած գումարները առիթ ընծայեցին ՀՈՆԱՀ-ին, որ գնէ բջիջային անջատման կազմածներ, եւ սկսի կարելիութեանց վերանորոգման:*

*ՀՈՆԱՀ-ը կը յուսայ, որ թելեթոնէն գոյանալիք գումարներով ամբողջութեամբ կարելի ըլլայ ֆինանսաւորել Ցողունային Բջիջներու Պատուաստումի Կեդրոնը, որ հիմնադրութեան պարագային, պիտի սկսի արեան քաղցկեղէ եւ արեան առնչուող տարբեր հիւանդութիւններէ տառապող աւելի մեծ թիւով հիւանդներու կեանքը փրկելու գործընթացին՝ ցողունային բջիջներու փոխ պատուաստումի ճամբով, ինչպէս նաեւ հիմնական դեր պիտի կատարէ այլ հիւանդութեանց՝ ինչպէս օրինակ քաղցկեղի, շաքարախտի, եւ սրտի հիւանդութեանց դարմանումին մէջ:*

*Կեդրոնը նաեւ կարելիութիւնը պիտի ստեղծէ Հայաստանի մէջ բժշկական եւ հետազօտութեան արհեստագիտութեան գերարդիական միջոցներու օգտագործման, Երեւանը վերածելով ցողունային բջիջներու պատուաստումի եւ արեան բաղադրամասերու անջատման շրջանային կեդրոնի, որ ո՛չ միայն եկամուտ պիտի ապահովէ այլ երկիրներէ, այլեւ Կեդրոնը պիտի վերածէ փոխ պատուաստումի համաշխարհային հիմնական եւ գործունեայ դերակատարի: Ինչպէս ինքնին ՀՈՆԱՀ-ը, այս Կեդրոնը եւս միջազգայնօրէն պիտի վարկաւորուի, նոր դռներ բանալով դեղերու եւ գիտական հետազօտութեանց ծիրէն ներս համաշխարհային մաշտապով համագործակցութեան:*

*Թելեթոնին հետեւողները պիտի վայելեն օգտաշատ եւ հետաքրքրական ծրագիր մը, ուր ելոյթ պիտի ունենան անակնկալ հիւրեր՝ զօրակցելու, ինչպէս նաեւ քաջալերելու ժողովուրդը՝ որ նեցուկ կանգնի ՀՈՆԱՀ-ին եւ յա՛տկապէս այս ծրագրին:*

*Դիտեցէք. Հայկական Ոսկրածուծի Նուիրատուներու Արձանագրութեան հիմնարկի Թելեթոնը «Հրեշտակ մը եղիր, կեանք մը փրկէ» քարոզարշաւ ի նպաստ Երեւանի մէջ Ցողունային Բջիջներու Պատուաստումի Կեդրոնի հիմնադրութեան: Կիրակի, Ապրիլ 13, 2008, ժամը 4:00-9:00 PST:*

Charter Communications:

Channel 281 (High Vision); 283 (ATV); 285 (Horizon); 286 (ISN)

*Հայկական Ոսկրածուծի Նուիրատուներու Արձանագրութեան Հիմնարկը (ՀՈՆԱՀ) իր տեսակին մէջ առաջինը եւ միակն է Կովկասեան շրջանին մէջ, որ հիմնուած է 1999-ին, որպէս անկախ, ոչ-կառավարական, ոչ հասութաբեր կազմակերպութիւն, որուն առաքելութիւնն է ճիգ չխնայել, որ ամէն հայ, որ ենթակայ կը դառնայ կեանքին սպառնացող արեան առնչուած հիւանդութեանց, կարելի ըլլայ յոյս գտնել երկար ժամկէտի վրայ զինք փրկելու, ծինային յարմար ոսկրածուծի ճշդորոշումի ճամբով:*

## ՍԱՐԳԻՍ ԵՒ ՀԱՅԿՈՒՀԻ ՓԱԹԱՓՈՒԹԵԱՆՆԵՐ (ՎԱՀԱԳՆ), Կ'ԱՐԺԱՆԱՆԱ ՇՔԱՆԱՇԱՆՆԵՐՈՒ

*Կիրակի, Մարտ 30-ին, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Թերթիս աշխատակիցներէն, սփիւռքահայ ծանօթ արձակագիր՝ Սարգիս Վահագն իր տարիներու հայ գրականութեան եւ մշակոյթին ծառայութեան համար արժանացաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Տ. Յովհնան Արքեպս. Տէրտէրեանի ձեռամբ: Առաջնորդ Սրբազան Հայրը նաեւ պարգեւատրեց Տիկ. Հայկուհի Փաթափութեանը իր դաստիարակչական երկարամեայ գործունէութեան համար:*

*«Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմը կը շնորհաւորէ մեծարեալները եւ իրենց կը մաղթէ քաջառողջ կեանք եւ բեղուն գործունէութիւն:*

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863

# ՌԱՔԷԼ ՏԻՆՔ ԵԼՈՅԹ ՈՒՆԵՑԱՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԷՋ

Հինգշաբթի Ապրիլ 3, 2008, երեկոյեան ժամը 8:00–ին՝ Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդարանի համալիրին մէջ հանդիպում մը կազմակերպուած է Իսթանպուլի Ակօս թերթի հիմնադիր եւ գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքի այրիին՝ Ռաքէլ Տինքի հետ:



Հրանդ Տինք 2007 Թուականի Յունուար 19–ին՝ 1996 իր իսկ հիմնած «Ակօս» թերթի խմբագրատան մուտքի մայթին վրայ զոհ գնաց ատրճանակի չարանենգ փամփուշտին: Հրանդ Դինք անվախօրէն կը դատապարտէր Թուրքիոյ մարդկային իրաւանց անտեսումը, կը յարուցանէր Հայոց ցեղասպանութեան հարցը եւ աշխատանք կը տանէր բարելաւելու համար Հայ–Թրքական յարաբերութիւնները:

Հանդիսութեան նախագահն էր Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ Արք. Պարսամեան, որ իր խօսքին մէջ ըսաւ որ երբ տեղեկութիւն հաղորդուեցաւ որ Ֆորտհըմ Համալսարանը Տիկին Տինքին պիտի յանձնէր անոր ողբացեալ ամուսնոյն շնորհուած մրցանակը՝ յարմար առիթ նկատուեցաւ որպէս զի ընտանեկան ջերմ մթնոլորտի մը մէջ հանդիպում մը կազմակերպուի Ռաքէլ Տինքի հետ: Ապա յիշեց իր հանդիպումը Ռաքէլ Տինքի հետ՝ նախ քան անոր ամուսնոյն թաղման արարողութիւնը եւ ըսաւ որ անոր այցելած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ ցաւակցութիւն յայտնելու եւ զայն մխիթարելու համար, սակայն ինք մխիթարուած էր Ռաքէլ Տինքի հոգիի ջերմութեամբ: «Հակառակ անոր որ կը տառապէր ու ցաւէր, սակայն երբեք իր հոգիին մէջ ատելութիւն չէր զգար: Իր խօսքերուն, իր արտայայտութիւններուն մէջ, ինչպէս այսօր, այն օրն ալ ի յայտ կու գար անոր խորունկ հաւատքը, սէրը մարդկութեան, սէրը Աստուծոյ եւ մասնաւորաբար սէրը իր կողակիցին՝ Հրանդին հանդէպ: Զգալի էր ցաւը այդ սիրոյ մէջ, բայց ոչ չարը, ոչ թոյնը: Անոր ցուցաբերած այս ոգին սքանչելի երեւոյթ մըն էր ինծի համար՝ որուն համար շնորհակալութիւն կը յայտնեմ Ռաքէլին: Ես վստահ եմ որ բոլորս ալ, ընտանեկան այս մթնոլորին մէջ, Ռաքէլի հոգիին հետ հաղորդակից դարձանք: Մեր հաղորդակցութիւնը փաստն է Աստուծոյ ներկայութեան. եւ ուր որ Աստուած ներկայ է՝ այնտեղ չարութիւն գոյութիւն չունի, անիրաւութիւն գոյութիւն չունի: Հրանդը պայքարեցաւ որպէս զի Աստուած շարունակէ գոյատեւել մարդկային կեանքէն ներս, մարդոց ընկերային կեանքէն ներս՝ որպէս զի արդարութիւնը իր տեղը գտնէ, եւ մարդոց միջեւ սէրն ու հաղորդակցութիւնը յարատեւէ: Մենք, որպէս քրիստոնեայ հայեր, կը լսենք Հրանդ Տինքի ձայնը եւ ամէն ջանք ի գործ կը դնենք որպէս զի անոր ոգին կենդանի մնայ: Այդ ձեւով միայն մենք կրնանք առաջքը առնել բոլոր դժբախտութեանց եւ չարիքներուն» ի մէջ այլոց ըսաւ Սրբազան Հայրը:

Թեմական պատուիրակ Գերշ. Տ. Վիգէն Արք. Այգազեան հանդիսութեան բացման աղօթքը՝ ըսելով. «Հրանդ Տինք անմատոլուցի է, եւ անմատոլուցին քաջ ու անվախ է»: իսկ Առաջնորդական Փոխանորդ Հոգշ. Տ. Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան կատարեց հանդիսավարի պաշտօնը: Հայր Սուրբը իր խօսքին մէջ ըսաւ. «Հրանդ Տինք մեզի հետ չէ այլեւս, սակայն անոր ոգին մեզի մետ է, եւ Ռաքէլ Տինքն է որ այդ ոգին կենդանի պիտի պահէ»:

Կոնստանդնուպոլսոյ Հայերու Օգնութեան Ընկերութեանց նախագահ Պերճ Արազ ըսաւ. «Տկարներուն պաշտպանը, յոյսն ու լոյսն էր Հրանդ Տինք: Անոր առաքելութիւնը պէտք է շարունակուի»: Իսկ Թէքէեան Մշակութային Միութեան նախագահ Յակոբ Վարդիվառեան ըսաւ. «Այսօր, Թուրքիոյ մէջ նոր սերունդ մը պիտի շարունակէ Տինքի գործը»:

Ռաքէլ Տինք իր խօսքին մէջ ըսաւ. «Իր ամուսնոյն՝ Հրանդ Տինքի տեսիլքը Թուրքիոյ մէջ կը շարունակուի մարդկային իրաւանց ջատագովներուն կողմէ: Մեր լաւագոյնը պէտք է ընենք որպէս զի Հրանդին ձայնը շարունակէ լսելի ըլլալ: Թուրքիոյ մէջ ձեռք բերուած յաջողութիւնները պէտք չէ մոռցուին: Մեր նպատակն է անոր աւանդը կենդանի պահել»: Ռաքէլ Տինք ըսաւ որ Թուրքիոյ մէջ Հայեր եւ ոչ–հայեր վերջերս նախաձեռնած են Հրանդ Տինքի յիշատակին յաւերժացնելու համար հիմնարկութիւն մը հաստատել:

Ռաքէլ Տինք Նիւ Եորք կ՛այցելէր այս հիմնարկութեան մասին ջատագովելու եւ ստանալու Նիւ Եորքի Ֆորտհըմ Համալսանանին կողմէ յետ մահու իր ամուսնոյն տրուած Ուշագրաւ Իրագործումներու Մրցանակը:

Ռաքէլ Տինքի ի պատիւ տրուած այս հանդիսութիւնը կազմակերպուած էր Առաջնորդարանի կողմէ՝ մասնակցութեամբ Հ.Բ.Ը.Միութեան, Հայ–Ամերիկեան Կրթական Կեդրոնի (Հայ Տուն), Կոստանդնուպոլսոյ Հայերու Օգնութեան Ընկերութեան, Ժսաեանկեդրոնական Շրջանաւարտից Միութեան, Ֆորեսթ Հիլզի Մշակութային Կեդրոնի, Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան Նիւ Եորքի մասնաճիւղի, Վարդանանց Ասպետներու Եղբայրակցութեան, Թէքէեան Մշակութային Միութեան եւ Դպրեվանքի Սանուց Միութեան կողմէ:

# «ԻՆՉ ՈՐ ՏՈՒԻ ՈՒՐԻՇԻՆ»

*Շարունակուած էջ 15–էն*

ները գործադրել գիտցած է, ու լիիրաւ իրաւագէտի իր շնորհերով »շահած« է գերազանց որակումը Պրն. Տնօրէնի ճշմարտապէս յարգելի տիտղոսին:

Երբ փակման երկու խօսքս կ՛ուղղէի Կիրակի օր, հարց տուի թէ Ո՛վ էր Արա Թոփճեան: Ան որդին էր մեծանուն դաստիարակ Դոկտոր Յակոբ Թոփճեանի, Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի կրտսեր սերունդի ընտրեալ շրջանաւարտներէն, ինչպէս Գարեգին Յովսէփեանց Կաթողիկոս, Կոմիտաս Վարդապետ, Մանուկ Աբեղեան, Ստեփան Կանայեան եւ շատ ուրիշներ, որ մինչեւ իսկ դասախօսած է Անթիլիասի նորաբաց Դպրեվանքի աշակերտութեան՝ մեր այնտեղ ժամանումէն քիչ առաջ:

Երբ Արա Թոփճեան 1915 Թուին կը ծնէր Կ. Պոլսոյ մէջ Մեծ Եղեռնի այդ տարին, անկէ տարի մը առաջ իր հայրը Դոկտ. Յակոբ Թոփճեան կատարած էր արդէն երախտարժան կարեւոր աշխատութիւն մը, մանրամասն եւ գիտականօրէն ցուցակագրելով 223 հայերէն ձեռագիրները որոնք ի պահ կը մնային Արմաշու Ջարխափանի վանքի ձեռագրատան մէջ: Օրմանեան եւ Դուրեան պատրիարքներու յանձնարարութեամբ հայագէտ եւ Ս. Էջմիածնի Ճեմարանաւարտ Յակոբ Թոփճեան շրջանի մը համար Կ. Պոլսէն Արմաշ կ՛երթար կատարելու համար այդ կարեւոր աշխատանքը: Յիշեալ Յուցակը քննարկուած է իմ պատրաստած «Ազգապատում»ի առաջին հատորին մէջ (1910–1930):

Եկան շուտով սպանդի դժբախտ օրերը: Արմաշ ներխուժեցին Թուրք զինուորներ, արտաքսեցին միաբանները, հրոյ ճարակ դարձուցին ձեռագրատունն, ու վանքի եկեղեցին գրաւեցին: Գացին մատեանները առյաւէտ, մնաց Յուցակը Դոկտ. Յակոբ Թոփճեանի: Գացին մատեանները ծնաւ նորածին մանուկը Յակոբ Թոփճեանի՝ Արա Թոփճեան: Երկուքն ալ նախախնամութիւնը անվտանգ յանձնեց ազգին: Աւելի ծանր կշռեց յետագային Տնօրէն Արա Թոփճեանի հասցուցած սերունդները որպէս »սրբազան վրէժ«, քան 223 թանկարժէք ձեռագիրները: Առաջինները որպէս կեանքի փրկագին, եւ երկրորդները՝ աւանդի: Հայր եւ որդի՝ ընտրելագոյն զաւակներէն երկուքը եղան հայ ժողովուրդին:

Տաղանդաւոր Տնօրէն Արա Թոփճեանի աւանդը ազգային աւանդ մը եղաւ, մտաւորական, ուսումնական, բարոյական, եւ անոնցմէ աւելի բարձր՝ մարդակերտումի աւանդ մը: Հանգիստ իր հոգիին:




**Blue Cross of California takes the worry out of health care.**

Our goal is to make staying healthy easier with a variety of affordable plans to fit your needs. For over 65 years, Blue Cross has been a leader in California offering quality health care coverage with over 41,000 doctors and 400 hospitals in our network. We offer:

- Prescription Drug Coverage
- Individual and Family Plans
- Plans for Small Businesses
- Dental Coverage
- Medicare Supplement Plans
- Life Insurance
  by BC Life & Health Insurance Company
- HSA-Compatible Plans
  by BC Life & Health Insurance Company
- Integrated Workers' Compensation
  by Employers Compensation Insurance Company

**Call now and let me help take the worry out of your health care!**

**HARUT DER-TAVITIAN**
Authorized Independent Agent
1807 W GLENOAKS BLVD. #202
GLENDALE, CA 91201
(818) 502-3233
HARUT@EXCELHYE.COM
WWW.EXCELHYE.COM
CA Insurance
License #0B28270

BlueCross of California
The Power of Blue.℠

Blue Cross of California (BCC) and BC Life & Health Insurance Company (BCL&H) are Independent Licensees of the Blue Cross Association (BCA). The Power of Blue and the Blue Cross name and symbol are registered service marks of the BCA. ©2005 BCC. CAN119

BE AN ANGEL SAVE A LIFE

# COAST TO COAST
# TELETHON
## FOR
## ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY'S PAN-ARMENIAN STEM CELL HARVEST CENTER

**IN YEREVAN, ARMENIA**

**SUNDAY, APRIL 13, 2008**
**4 PM-9PM PST / 7PM-12 AM EST**

**Make Your Pledge**, Call Today:
Toll Free **1-888-75-ABMDR**
www.ABMDR.am

**Broadcasted throughout:**
United States | Canada | Armenia | Artsakh | Middle East
South America | Australia | Europe

**WEBCAST:**
www.ABMDR.am & www. HorizonArmenianTV.com

**For additional Information visit the website or call: (323) 663-3609**

**The Center:**

Will bring this modern day medical miracle within reach of many Armenian patients who are often denied this life saving procedure because of prohibitive costs.

Will significantly improve the collection of stem cells from volunteer donors, & reduce the cost of the trans-plantation by over 40%.

Will become a regional center for stem cell harvesting , bringing not only revenues from other countries, but positioning the Center as a vital and active player among transplantation centers worldwide.



ARMENIAN BONE MARROW DONOR REGISTRY CHARITABLE TRUST

**HELP US BUILD BLOCKS THAT WILL MAKE DREAMS COME TRUE!**

## ՅՈՒՇԵՐ

# ՓՐԿԱՐԱՐ ՀԱՅԸ

**Ռ. ԿՈՐԻՒՆ**

*(Շարունակուած «Մասիս»ի նախորդ թիւէն)*

*Արտեմը անակնկալի եկած, չփոթուեց, չէր կենտրոնանում մի բան ասելու, վերջապէս վերագտաւ իրեն եւ կմկմալով խօսեց.*

*-Ո-չի-նչ, պա-ր-ոն. ոս-տի-կան:*

*-Չէ՛, հաճիս, ինձ ասա. ի՞նչ էիր ասում, դա ի՞նչ լեզուով էր:*

*-Պրն. ոստիկան ես հայ եմ, ես հոգեպէս վրդովուած եւ մտքերի մէջ թաղուած չեմ իմացել, թէ ի՞նչ եմ ասում, միայն ասեմ, որ տանը կնոջս հետ խօսքներս եղաւ, որպէսզի լեզուակռիւը սուր եւ ամպագոռ տեսք չստանայ, սուս ու փուս թողեցի եւ տնից հեռացայ: Աւելի ճիշտ չուզեցի երեխաներիս քննաթաթախ անել եւ ծնողքս չտրտմէր ու անհանգստանար: Պրն. ոստիկան լաւ գիտես, որ կանայք իրենց անտեղի բղաւոցներով եւ անզգամ ճիչերով կ՛ուզեն հաւատացնել, որ իրենք ճիշտ են եւ բոլոր մեղքը բարդել ամուսնու վրայ:*

*Ոստիկանը եղելութիւնը լսելով յուզուեց, խղճաց Արտեմին, մտքից անցաւ իր կեանքում էլ պատահած նման հարցեր, բայց չքրքրեց, ցանկացաւ օգնել ասելով.*

*-Ընկեր Ջա՜ն, կ՛ուզես, քեզ տուն տանեմ, հաշտեցնեմ կնոջդ հետ, ա՛խր, չի լինի այսպէս փողոցները ընկած թափառես, այն էլ էս ժամին, գուցէ մի փորձանք պատահի:*

*-Շնորհակալ եմ, պրն. ոստիկան, ձեր սրտցաւութեան եւ առաջարկած օգնութեան համար, որոշել եմ այս գիշեր տուն չգնալ եւ խորհելով մի ելք ճարել մեր տան կարիքները հոգալու համար, նաեւ տեսնեմ, ինչ անդրադարձ է գտնում իմ բացակայութիւնը կնոջս մօտ:*

*Ոստիկանը նկատելով Արտեմի կամակորութիւնը շատ էլ չստիպեց նրան, այլ՝ իր վիճակին թողնելով եւ գլուխը օրօրելով հեռացաւ, ով գիտէ իր մտքում մտածելով, թէ.*

*-Ինչ տեսակ մարդիկ են ճարւում, մարդն էլ կնկայ ձեռքից տնից դուրս կը տա՞յ փողոցներում գժի նման ման գալո՞վ:*

*Արտեմը ոստիկանից ազատ պրծնելով քայլերը չդադարեցրեց, այլ՝ առաջ շարժուեց Ալիէ Շարիաթի ( Ջադէ Ղադիմ Շեմիրան ) մայր պողոտայի աջ մայթի եզերքին բարձրացած սիւների ուղղութեամբ, որոնց ճայանման կտուցին փակցուած լոյսերից սառն շողերի խուրձը մղւում էր ցած, բայց սիւների տարածութիւններում վիթխարի սօսի ծառերի ճիւղերը արգելք էին առատ լոյսի բաշխմանը՝ մերթ ստուերի մէջ թողնելով Արտեմին:*

*Կէս գիշերը անցած լինելով օդը աւելի էր սառել, քամին չոր ու կծող փչում էր տեղաշարժի ենթարկելով մայթերի վրայ անփոյթ նետուած թափօնները եւ տերեւները, որոնք փաթաթւում էին Արտեմի սրունքներին խուրաքանչիւր քայլափոխին: Պողոտան գրեթէ աներթեւեկ էր դարձել, սակաւադէպ ինքնաշարժերի հռնդիւնը խլացնում էր քամու վզզոցը:*

*Արտեմը գտնւում էր Շեմիրան քաղաքամասում՝ Թեհրանի հիւսիսային ծայրամասը, Ալբորզեան լեռնաշղթայից ոչ հեռու: Աստղալից երկնքի լիալուսնի ցոլքի տակ, հսկայ լեռնաշղթայի մէկ զանգուածն էր երեւում ուրուականի պէս, նրա մթնշաղ մաշկի վրայ տեղ-տեղ յայտնւող փնջաձեւ լոյսերը, լեռնագնացների իջեւաններ էին, որոնք ի յայտ էին բերում լեռան վիթխարի բարձրութիւնը:*

*Ալբորզեան լեռնաշղթան Թեհրանի հիւսիսը եզերող հատուածը միշտ աչքի առջեւն է, հեռուից նմանւում է ուղտերի շարանի, կարծես մետաքսի ճանապարհը յիշեցնող քարաւան լինի քարացած վիճակում: Նա գրեթէ ձմռանը ձիւնով ծածկուած է լինում տեւելով մինչեւ գարնան առաջին ամիսները: Նրա լանջերից բազմաթիւ աղբիւրներ են բխում կազմելով յորդառատ գետեր, որոնք կասեցւում են հսկայ ամբարտակների թիկունքում Թեհրանի բնակչութեան համար խմելու ջուր ապահովելով, նաեւ հոսանք ներարկելով երկրի ելեկտրական ցանցին:*

*Լեռնագնացների սիրելի լեռնաշղթան է Ալբորզը, գարնան, ամռան եւ աշնան հազարաւոր մարդիկ ուսապարկերը մէջքներին կապած վեր են բարձրանում վայելելու նրա հրապուրիչ տեսարանները, թովիչ օդը, սառնորակ աղբիւրների ջուրը եւ ականատես լինելու արեւի հրաշափառ այգեբացին: Նրա ամենանշանաւոր գագաթն է՝ Դամաւանդը 5865 մետր բարձրութեամբ՝ յաւերժական ձիւնը գագաթին:*

*Դամաւանդը լեռների զանգուածի միջից գլուխը ցցած. գագաթին սպիտակաթոյր կնգուղը, նմանում է ներհուն մտաւորականի, նա՝ ընդերքում կրակ , տառապելով զսպում է իրեն, որ չլինի յանկարծ ժայթքելով աւեր ու մահ սփռի շուրջը, փոխարէն վեհանձն հոգեբանութեամբ բուժիչ ակնաղբիւրներ արձակելով :*

*Արտեմը աչքերը հեռացնելով լեռան զանգուածքից քայլերը դէպի այլ կողմ ուղղեց եւ շարունակեց ճանապարհը: Նրա միտքը անդուլ բանում էր քաղուածք անելով անցեալի դրուագներից, էլի աչքերի առջեւը պատկերացաւ գիշերուայ միջադէպը, Ռիմայի խոժոռ դէմքը եւ նրա բերանից սպրդած բառերը՝ -զողութիւն արա՛,,, առաւելաբար այս էր, որ իր միտքը նեղում էր, թէ.*

*-Ինչո՞ւ Ռիման պիտի իրատես չլինի, ուսումն ու կրթութիւնը որ օրւայ համար են, պարզ է մարդու կեանքի համար, կեանքը շիտակ եւ առաքինի ապրելու համար:*

*Այս մտային խորհրդածութիւնների ծիրի մէջ էր, երբ յանկարծ կանգնեց եւ հայեացքը նետեց էն հեռուն մի շինութեան վրայ: Ինքը գտնւում էր մի բարձր տեղում, կարելի է ասել բլուրի նման բարձրութեան վրայ, որտեղից գիշերուայ պարզկայ երկնքում աստղերի եւ լուսնի ցոլարձակող լոյսերի ներքոյ պարզօրէն տեսնւում էր շրջապատը: Նա յստակ նկատեց դիմացը մի լուսափառ ապարանք, որը ուշադրութիւնը գրաւեց, կապը խզուեց անցեալի հետ, մի ներքին ձայն իր քայլերը մղում էր դէպի այդ կողմը, ուշ ու միտքը կենտրոնացաւ ապարանքի վրայ՝ մեծ տարածութեամբ, ընդարձակ բակով, գեղեցիկ մի յարկանի կառոյցով ելեկտրական լոյսերի մէջ ողողուած:*

*Արտեմը հոգեպէս փոխուած էր, մոռացած տան միջադէպը եւ իր յոգնածութիւնը, նոր եռանդ էր ստացել գտնուելով ներքին ձայնի մղումների ազդեցութեան ներքոյ, մինչեւ այնտեղ որ հնարաւոր էր զգուշութեամբ մօտիկացաւ շէնքին քննելու ներսի կենդանութիւնը: Նա զարմացաւ որեւէ մի շարժում չնկատելով: Ինքն իրեն մտածեց, թէ ինչպէս կարելի է գիշերուայ այս ուշ ժամին, շրջակայ բոլոր շէնքերը թաղուած են մթութեան մէջ, իսկ այս շէնքի ամբողջ լոյսերը վառ են ինչպէս ցերեկ: Արտեմը տեսաւ բակի մուտքի դարբասը բաց է, չյանդգնեց ներս մտնել, տեղումը կանգնած, ուղեղը աշխատանքի գցեց.*

*-Եթէ հէնց այսպէս ներս մտնեմ եւ մէկը դիմացս դուրս գայ, ինչ բացատրութիւն պիտի տամ , այսպիսով կարող է որպէս գող ձերբակալուեմ: Չէ՛, չէ՛, ներս չեմ մտնի, նախ կը զանգահարեմ, եթէ մէկը ներսից պատասխանեց, կ՛ասեմ իրեն՝ որ ձեր մուտքի դարպասը բաց էք մոռացել, կարող է վտանգաւոր լինի գիշերուայ այս ժամին, եթէ իմ մասին հարցնող լինի, իմ այստեղ գտնուելու անցուդարձը կը պատմեմ:*

*Այս տրամաբանութեամբ Արտեմը ձեռքը տարաւ դէպի կոչնակը եւ սեղմեց, ականջը զանգի այֆոնին եւ աչքերը դէպի բակի ներսը յառած սպասեց, անգամներ կրկնեց, բայց ոչ մի ձայն եւ ոչ մի մարդկային շարժում: Առաւել հետաքրքրութիւնը շարժուեց, ներքին ձայնը իրեն դադար չէր ձգում, շարունակ առաջ էր մղում.*

*-Ինչպէ՞ս կարելի է մարդ չլինի ներսում, բա էս ինքնաշարժերը եւ լոյսերը ի՞նչ են ապացուցում, պէտք է ներս մտնել եւ իմանալ եղելութիւնը:*

*Արտեմը չորս կողմը լաւ ստուգեց, տեսաւ մարդ-մարդասանք գոյութիւն չունի, զգոյշ քայլերով, անթարթ աչքերով շուրջը դիտելով գնաց դէպի շէնքը, դիմացը ամբողջութեամբ մեծադիր ապակէ պատուհաններ իրար ագուցուած, ներսի կողմից թանձր վարագոյրներով ծածկուած լինելով, ոչինչ չէր նկատւում, ականջը դրեց ապակուն եւ ուշ ի ուշոյ մտիկ արաւ, պարսկերէն նուագախառն բառեր լսեց.*

*-Չլինի քնած են եւ հեռատեսիլը վառ են թողել, գուցէ մի փորձանք է պատահել բնակիչներին, եթէ ոչ այդքան զանգահարելուց յետոյ մէկը պիտի լսէր եւ պատասխանէր:*

*Այս մտորումներից յետոյ Արտեմը առաւել լարուեց, շուտ առաջ ուզեց իմանալ ներսում ինչ է անցնում, արագ անցաւ դէպի շէնքի մուտքի դռան մօտ, էլ չհամբերեց, ձեռքը տարաւ դէպի բռնակը, կամացօրէն սեղմեց եւ հրեց, դուռը բացուեց, ի՜նչ զգայ, գազի հեղձուցիչ հոտը դիպաւ քթին, ամէն ինչ պարզուեց Արտեմի համար, էլ վախ ու երկիւղ մոռացաւ, գերբնական ուժ ու կորով ստացաւ, արագ ու զգոյշ ներս մտաւ, յանկարծ գազը չբռնկուի, ինչ տեսնի, բազկաթոռների վրայ ուշաթափուած վիճակում կին ու մարդ, կայծակնային արագութեամբ նրանց մէկ-մէկ գրկելով տեղափոխեց բակ պարկեցնելով գետնի վրայ, հաշուեց թւով վեց հոգի, ականջ դրեց նրանց սրտերին, ուրախացաւ, յոյսի նշոյլ նկատեց:*

*-Պէտք է փրկել սրանց, ինչ գնով էլ եղել է, պէտք է կեանքին վերադարձնել, մտածեց Արտեմը:*

*Անվարան վազեց դէպի դուրս, մէկին գտնելու կամ մի միջոցով շտապ օգնութիւն կանչելու: Բարեբախտաբար կենտրոնական պողոտայի վրայ նկատեց մի ինքնաշարժի գալը, անվեհեր քաջութեամբ կանգնեց ճամբի մէջտեղը ձեռքերը օդի մէջ պարզած, մեքենան կանգնեց, անյապաղ վազեց նրա կողմը, ինչ տեսնի՝ գիշերային շրջիկ երկու ոստիկաններ, աղաչանքով դիմեց նրանց եւ պատմեց դէպքի մասին, նրանք առանց ժամանակ կորցնելու Արտեմին իրենց հետ առնելով գնացին պատահարի վայրը, նրանք տեսան ամէն ինչ իրականութիւն է, անմիջապէս ընդունիչ ռադիօ կապ ապարատով տեղեկացրեցին շտապ օգնութեան: Րոպէապէս երեք ամպուլաս մեքենաներ եկան ծառայողական խմբով, բոլորին տեղաւորեցին եւ ճամբայ ընկան դէպի հիւանդանոց: Ոստիկանները Արտեմի հետ միասին շէնքի դռները փակեցին, ապա Արտեմին էլ իրենց հետ տարան որպէս դէպքի ականատեսն ու վկան:*

*(Շարունակելի 4)*

## ԿՈՉ ՕԳՆՈՒԹԵԱՆ



Ես ԿԱՐՕ ԹՈՔԱԹԼԵԱՆ, 64 տարեկան, ամիսներէ ի վեր կը տառապիմ Leukemia-է (արեան քաղցկեղ): Յաղթելու համար այս հիւանդութեան, պէտք ունիմ որոշ տեսակի՝ ինծի յարմարող արիւնի: Եթէ յարմարող արիւնը գտնուի, տուող ենթական ոչ մէկ վտանգ կամ դժուարութիւն պիտի չունենայ. պարզապէս՝ յատուկ գործողութեամբ մը, մէկ թեւէն առնուած արիւնը, միւս թեւէն իրեն ետ պիտի ներարկուի: 18 տարեկանէն վար եղողները չեն կրնար օգնել ինծի: Կրնաք ինծի հեռախօսել հետեւեալ թիւով՝ (818) 415-4661: Հաճեցէք օգնել ինծի, այլապէս կրնայ շատ ուշ ըլլալ:

Կանխայայտ շնորհակալութեամբ՝

ԿԱՐՕ ԹՈՔԱԹԼԵԱՆ

# ԲԱՑ ՆԱՄԱԿ ԻՄ ԸՆԹԵՐՑՈՂ ՀԱՐՑԱՍԷՐՆԵՐԻՆ

*Շարունակուածէջ6-էն*

*կացան իմ կարծիքը իմանալ Քոչարեանական վարչակարգի մասին: Գրեթէ բոլոր քաղաքական ուժերն ու մեկնաբանները ընդունում են, որ արդի Հայաստանի Հանրապետութիւնը գործում է այս կամ այն մեծ պետութեան հովանու տակ (կամ ԱՄՆ-ի, կամ Ռուսաստանի): Փորձը ցոյց է տալիս, որ հովանաւորող որեւէ ուժ բոլորովին չի ցանկանում, որ իր հովանաւորած վարչակարգն ու դրա ղեկավարը լրացուցիչ խնդիրներ ու բարդութիւններ ստեղծի իր երկրում, քանի որ այդպիսի դէպքում խիստ դժուարանում է մեծ տէրութեան ծրագրերի գործադրումը այդ երկրում: Այս պատճառով էլ մեծ տէրութիւնը տուեալ երկրում որոնում է իրեն աւելի յարմար թեկնածու ու հրաժարւում է «իր նախորդ մարդուց»: Քոչարեանական վարչակարգը իր երկրում հանդէս է գալիս աւելի ու աւելի բարդութիւններ ստեղծողի դերում եւ աւելի ու աւելի յուշում, որ նրան փոխարինելու ժամանակը հասունացել է:*

*Քոչարեանականութեան ղեկավարութեան, Ռոբերդ Քոչարեանի ու Սերժ Սարգիսեանի, դիւանագիտական, քաղաքական ու հայրենասիրական գիտակցութեան մակարդակը իր ողջ խութեամբ բովանդակուած է վերջերս արուած նրանց արտայայտութիւններում: Բաւարարուենք լոկ երկուսի մատնանշմամբ:*

*ԱՄՆ-ի եւ Եւրոպայի հանրութեան, կազմակերպութիւնների (մանաւանդ Եւրամիութեան), տարբեր պետութիւնների եւ ականաւոր գործիչների կողմից անվիճելի ճշմարտութիւն է համարւում այն, որ Հայաստանի 2003-ի ե՛ւ նախագահական ընտրութիւնները, ե՛ւ դրանց յաջորդող խորհրդարանական ընտրութիւնները խստօրէն քննադատուել են միջազգային հանրութեան կողմից, այդ թւում Եւրոպական Միութեան Վեհաժողովի պատուիրակութիւնների կողմից: Նրանք գտել ու գտնում են, որ ընդհանուր առմամբ ընտրական գործընթացը չէր համապատասխանում միջազգային չափանիշներին: Դիտարկուած խախտումներից նրանք մասնաւորապէս մատնանշել են լրատուամիջոցների կողմնակալ լուսաբանումը, ընդդիմութեան վստահուած անձանց եւ ընտրարշաւը իրականացնող աշխատակազմի ձերբակալութիւնները, արդիւնքների կեղծումը, դիտորդներին ուղղուած սպառնալիքները, ինչպէս նաեւ ընդհանուր առմամբ ընտրական յանձնաժողովների ոչ պատշաճ պահուածքը: Պարզ ու յստակ ասւում է, որ Քոչարեանի վարչակարգը չի պահպանել ժողովրդավարական սկզբունքների հիմնական մասը, մանաւանդ այն, ինչ վերաբերում է ընտրութիւններին: Բայց նրանք փաստերի արձանագրութիւնից այն կողմ չեն անցնում: Միւս կողմից, ԱՊՀ երկրների դիտորդները գովեցին Հայաստանի ընտրութիւնների ընթացքը ու ստեղծեցին այն տպաւորութիւնը, որ արդի Հայաստանից աւելի ժողովրդավարական երկիր չկայ:*

*Վերոյիշեալ բացայայտ ծայրաբեւեռուած գնահատումները քոչարեանական ղեկավարներից Սերժ Սարգսեանը մեկնաբանում է, որպէս մտայնութեան, «մենտալիտետի» տարբերութիւն: Նա գտնում է, որ Հայրենի ժողովուրդը երկար տարիներ ապրելով ԱՊՀ երկրների ժողովրդների հետ (այսինքն Խորհրդային Միութիւնում եւ վերջինիս քայքայումից յետոյ) ունեն ընդհանուր պատկերացումներ, ընդհանուր «մենտալիտետ», որի հետեւանքով նրանք իրար աւելի լաւ ու ճիշդ են հասկանում: Իսկ մարդիկ, ովքեր ծնուել ու իրենց ամբողջ կեանքն ապրել են Եւրոպայում կամ Ամերիկայում, դժուարութիւն են ունենում հայ իրականութեան մէջ տեղի ունեցած երեւոյթները ճիշդ ըմբռնելու: Արեւմտեան դիտորդներն ապրում են այնպիսի միջավայրում, որտեղ իրենց առանձնայատուկ պատկերացումներն ունեն ժողովրդավարութեան մասին: Այսինքն, Սերժ Սարգսեանը ժխտում է ժողովրդավարական իրաւակարգի առարկայական, ընդհանրական, ընկերաբանական պատկերացման գոյութիւնը:*

*Անհասկանալի է մնում նաեւ, թէ ինչ է Սերժ Սարգսեանը հասկանում «ռուսական մենտալիտետ» ասելով: Ռուսական միտքը հարուստ է ինչպէս իրաւ ժողովրդավարական աւանդոյթներով, այնպէս էլ համայնավարական, ռուսաֆիլական եւ նման այլ գաղափարներով: Նկատելի է, որ նա նկատի չունի ռուսական իրաւ ժողովրդական աւանդոյթները:*

*Գոյութիւն ունեն ժողովրդավարութեան տարբեր ու հակադիր մեկնաբանութիւններ: Օրինակ: Վերջին դարաշրջանում մարդկութիւնը տարբերակում էր խորհրդային եւ ազատ շուկայական ու անձնական նախաձեռնութեան երկու հակադիր ժողովրդավարութիւնները: Պիտի ցանկանայինք հաւատալ, որ Սերժ Սարգսեանը արդի պայմաններում հանդէս չգայ որպէս խորհրդայինի ջատագով ու ներկայացուցիչ, թէեւ այդ միտումը նկատելի է: Գոյութիւն ունեն պետութիւններ, որոնք չարժուում են դէպի խռճալական ժողովրդավարութիւնը: Նրանք տարբեր աստիճանի ժողովրդավարական ընկերութիւններ են հաստատել: Դեռեւս չկայ խռճալական ժողովրդավարական երկիր: Բայց տարօրինակն այն է, որ Սերժ Սարգսեանը Հայաստանը չի դիտում դէպի ժողովրդավարութիւն գնացող երկիր: Նա աւելի միտում ունի պատնէշ բարձրացնել Հայաստանի ու առաւել ժողովրդավար երկրների միջեւ: Տարօրինակ ու նոյնիսկ վիրաւորական է Սերժ Սարգսեանի պատկերացումը ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՆՏԱԼԻՏԵՏԻ» մասին:*

*Ես ոչ մի առարկութիւն չունեմ, եթէ Սարգսեանը գտնում է, որ իր մտայնութիւնը, մտածելակերպը, աշխարհաընկալումը, կեցուածքը ,դիրքորոշումը եւ մենտալիտետը խոտոր է կանգնած ժողովրդավարական ըմբռնումներին ու սկզբունքներին կամ անյարիր են դրանց: Բայց այդ հակադրութիւնը վերագրել ողջ հայ ազգին, որը առաջիններից է եղել, որ սկսել է դաւանել ժողովրդավարութիւնը, պարզապէս վիրաւորական է, ազգադաւութիւն, ազգային նիհիլիզմ:*

*Երբ հայերը քրիստոնէութիւնը հռչակեցին պետական ու համաժողովրդական կրօն (301), նրանք գտան, որ պետութիւնն ու եկեղեցին համագործակցող այնպիսի ուժեր են, որոնք ունենալով տարբեր դերակատարումներ լրացնում են իրար: Երբ հայ ազգը հաստատեց եկեղեցական իշխանութիւնը, նա գտաւ, որ այն պէտք է բաղկացած լինի ինչպէս եկեղեցականներից, այնպէս աշխարհականներից եւ ունենայ որոշակի ներկայացուցչականութիւն: Վահրամ Րաբունին (ԺԲ դար) Լեւոն արքայի թագադրութեան ճառն արտասանելիս առաջ քաշեց սահմանադրական միապետութեան գաղափարը: Մատրասեան խմբակի ներկայացուցիչները (ԺԸ-ԺԹ դար) ապագայ հայ պետականութիւնը պատկերացրին որպէս իրաւ ժողովրդավար հանրապետութիւն: Օսմանեան Կայսրութեան հայերը Սուլթանական բռնակալութեան օրերին, (ԺԹ դարի 60-70 Թ.) ազգային սահմանադրութիւնը մշակեցին իրաւ ժողովրդավարութեան ոգով: Այս բոլոր դէպքերում հայ միտքը եւնում էր ինչպէս իր ազգային, այնպէս էլ համամարդկային (ի մասնաւորի ֆրանսական, անգլիական, ամերիկեան) փորձառութիւնից: Եւ յանկարծ Պրն. Սերժ Սարգսեանը, ԻԱ դարում, անտեսելով, չիմանալով կամ շրջանցելով այդ բոլորը գտնում է, որ հայ ազգային «մենտալիտետը» ընդհանուր եզրեր չունի առաջաւոր ժողովրդավարական պահանջների հետ, եւ որ բնական է, երբ հայ ազգը չեղում կատարի դէպի խռճալ ժողովրդավարութիւն տանող ճանապարհից:*

*Նկատենք, որ Եւրոպական Միութիւնը, որին ձգտում է անդամակցել Հայաստանի Հանրապետութիւնը, միտում է որոշակի ընդհանրական գծեր հաստատել իր անդամների համար: Նրա խնդիրներից է իր անդամներին իրար մօտեցնել, նրանց միջեւ հաստատել ընդհանրական կապեր, նրանց մէջ արմատաւորել ընդհանրական ժողովրդավարական արժէքներ, առանց ազգային արժէքների թուլացման: Ահա Հայաստանի Հանրապետութեան իշխող ուժի գլխաւոր ներկայացուցիչներից մէկը ձգտում է հայ քաղաքական միտքը աղաւաղելով այն գգալիօրէն հեռացնել Եւրամիութեան անդամներից, նոյնիսկ հակադրել Եւրոպական Միութեան անդամների արժէքային կողմնորոշման: Այս է քոչարեանական հայրենասիրական գիտակցութիւնն ու դիւանագիտական նրբանկատութիւնը:*

*Ինչպէս գիտենք, Եւրամիութեան Եւրախորհուրդը կազմուած է Նախարարների Յանձնաժողովից (որոշումներ ընդունող հիմնական մարմինը), Խորհրդարանական Վեհաժողովից (խորհրդատուական մարմին) եւ Տեղական ու Շրջանային Ուժերի Գոնկրէսից ( Եւրախորհուրդի սկզբունքները շրջաններում ու երկրներում տարածող մարմին): Խորհրդարանական Վեհաժողովը կազմուած է աւելի քան 291 ներկայացուցիչներից եւ նոյնքան փոխարինողներից: Նրանք ընտրուում են Եւրամիութեան անդամակցող կամ անդամութեան թեկնածու ազգային խորհրդարանների կողմից իրենց անդամների թւից եւ ունեն բազմակուսակցական պատկանելութիւն: Վեհաժողովը հանդիպում է չորս ամիսը մէկ (Յունուար, Ապրիլ, Յունիս եւ Սեպտեմբեր) հինգ օր ժամանակով: Տարբեր ենթայանձնախմբերի կողմից մշակուած զեկոյցները ներկայացւում են Եւրախորհրդի վեհաժողովին: Զեկոյցներում առաջադրուած որոշումները, յանձնարարութիւնները եւ կարգադրութիւնները մանրամասնօրէն քննարկւում են ու դրւում քուէարկութեան:*

*Նշենք նաեւ, որ Եւրամիութիւնը հիմնուած է կամաւորական սկզբունքի վրայ եւ մէկը չի պարտադրւում անդամակցել դրան: Ընդհակառակը, Միութիւնը ինքը դնում է որոշակի պարտադիր պայմաններ: Միայն այդ պայմանների բաւարարումից յետոյ քննարկւում է տուեալ պետութեան անդամակցութեան հարցը: Այդ պայմաններից գլխաւորներն են ժողովրդավարութեան ապահովում, մարդկային իրաւունքի պահպանում, քաղաքակրթուածութեան որոշակի մակարդակի առկայութիւն, բարի-դրացիական յարաբերութիւններ, խաղաղասիրական քաղաքականութիւն, ընդհանրական գծեր անդամակցած կամ անդամակցող կողմերի միջեւ: Պետութիւնները խնդրում են, որ իրենց ընդունեն այդ կազմակերպութիւնից ներս: Նրանք տարիներով պայքարում են դրա համար:*

*Խորհրդարանական Վեհաժողովը ապրիլեան իր նստաշրջանում, ենելով իր կանոնադրութեան պահանջներից, քննարկեց Ռ. Քոչարեանի վարչակարգի ու ՀՀ Խորհրդարանի ընդդիմութեան միջեւ սրուող հակամարտութեան պատճառները, հակամարտութեան ընթացքում արձանագրուած դէպքերը, դրանց հետեւանքները, հակամարտութեան վերացման ու վիճակի բարելաւման ուղիները: Ընդունուած որոշման մէջ նշուեցին կողմերի սխալները, դրանց վերացման ուղիները, որտեղ ընդգծուեց անյապաղ երկխօսութեան հրամայականը եւ կողմերին ժամանակ տրուեց ընդհանուր մի համաձայնութեան գալու համար: Ներկայացուցչական համաեւրոպական այդ մարմնի այսպիսի որոշման մասին իր կարծիքը յայտնելով Ռոբերդ Քոչարեանն անում է հետեւեալ սխալ, անհասկանալի, անտեղի, քաղաքական ու դիւանագիտական խորքից զուրկ, մեծամտական ու հայավնաս արտայայտութիւնը.* “The Council of Europe is an organization of which we are also a member. We have a right to vote and express our opinion there. We are there to defend our common interests, not to clear domestic matters”. “You must not regard the Council of Europe as the former Politburo where they made and imposed decisions” (Asbarez, V. 96, No. 12214, Friday, May 7, 2004). *Նկատենք, որ նոյն բովանդակութեամբ արտայայտութիւններ է անում ընդդիմադրութիւնը Քոչարեանի վարչակարգի ընդունած որոշումների կապակցութեամբ: Վերջինս դրանք համարում է սխալ, անհիմն ու ազգադաւ:*

*Անհասկանալի է, թէ ինչպէս կարելի է ընդհանուր եզրեր գտնել իրեն ժողովրդի ներկայացուցիչ նկատող մի բուռ կոմունիստներից կազմուած Փոլիթբիւրոյի ու Եւրոպական ողջ ժողովուրդը ներկայացնող բազմակուսակցական Եւրախորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի միջեւ, որը կանոնադրութեամբ իր որոշումները ընդունում է լայն քննարկման ու դեմոկրատական սկզբունքների համաձայն ու դրանք համարում է խորհրդատուական եւ իր անդամներին թողնում դրանք գործադրելու որոշման իրաւունքը: Յանձնարարութիւնների կատարումը ենթադրում է համագործակցական ոգի ու կամաւոր միաւորում: Նա բոլորովին չի զրկում անդամներին իրենց խօսքը, կեցուածքը, մտահոգութիւնները ներկայացնելու եւ ինքնութիւնը պաշտպանելու իրաւունքից: Բայց Ռ. Քոչարեանը իրեն նկատում է անսխալական ու իր կամքը օրէնքի հաւասար:*

*Նորից շնորհակալութիւն եմ յայտնում իմ ընթերցողներին՝ իրենց անկեղծ ու շինիչ դիտողութիւնների, առաջարկութիւնների ու բարեկամական զրոյցների համար: Միայն մտքերի ազատ ու լայն քննարկմամբ հնարաւոր է հասնել ճշմարտութեան:*

*Կլէնտէլ, Մայիս 15, 2004*

# ԻՆՉՈ՞Ի Է ԱՂՄԿՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԸ

*Շարունակուածէջ 8-էն*

*հարցի լուծման ռազմավարութեան շուրջ, Փուլային թէ Փաթեթային, սա էր օրակարգի առաջին հարցը, առաջինը, որի գաղափարակիրն էր նախագահ Լ. Տ. Պետրոսեանը, ենթադրում էր հանգուցային հարցերի քայլ առ քայլ լուծում, իսկ երկրորդի կրողն էր, Ռ. Քոչարեանը եւ Ս. Սարգսեանը: Վերջինս ենթադրում էր հարցի լուծումը մի փաթեթով, միանգամից: Որեւէ ռազմավարութիւն որդեգրելիս վճռական որոշումը Ղարաբաղի հարցում կապուած էր նաեւ պաշտպանութեան նախարար, սպարապետ Վազգէն Սարգսեանից: Մի մարդ որ թէ մարտի դաշտում եւ թէ հայկական բանակի կայացման հարցում ունէր իր հսկայական դերն ու ներդրումը: Այսինքն Հայաստանի պետական շինարարութեան հարցում համարւում էր առանցքային դերակատարներից մէկը: Մի մարդ որը մարտի դաշտում տիրող հայրենասիրութեան եւ նուիրուածութեան չափանիշներով միամտօրէն չափում էր նաեւ պալատական եւ իշխանական անցուդարձերը: Ի հակակշիռ «պատերազմ թէ խաղաղութիւն» Լ. Տ. Պետրոսեանի կոնցեպցիայի, որի ճշմարտացիութիւնը եւ կենսունակութիւնը հաստատեց անցեալ տարիների փորձը, ամրագրուեց հակափաստարկներով եւ էմիցիոնալ հայրենասիրական զեղումներով մի գաղափար, թէ նախագահ Լ. Տ. Պետրոսեանի «փուլային» տարբերակը Ղարաբաղի հարցի կարգաւորման շուրջ «նահանջողական է եւ դաւաճանական»: Այս տարբերակի եւ նրա կրող Լ. Տ. Պետրոսեանի նսեմացող, գործում յիրաւի մեծ էր Դաշնակցութեան դերը, որը վիրաւորուած էր Հանրապետութեան նախագահի «Դրօ» անուամբ զինուած խմբաւորման հետ կապուած քրէական գործի յարուցմամբ: Քանի որ ամենէն զնով իշխանութեան գալու տենդը նրան հանգիստ չէր տալիս:*

*Քաղաքական կեանքում զգալի դերակատարութիւն ունեցող Վազգէն Սարգսեանին հրամցուեց (Սփիւռքահայ մեծահարուստների հսկայածաւալ ներդրումների հոսքի) խայծը: Միայն թէ Լ. Տ. Պետրոսեանից եւ նրա «նահանջողական» քաղաքականութիւնից ազատուէն: Լարուածութիւնը վերեւներում եւ հասարակական կարծիքի ոլորտում անբաւարար բացխսը... ինչպէս նաեւ աւելորդ զոհերից եւ կորուստներից խուսափելու համար նախագահ Լ. Տ. Պետրոսեանը իր քաղաքական թիմով տուեց հրաժարական: Ասպարէզը թողնելով «Հայրենասէր» ասպետներին: Սկսուեց առաջին նախագահ Լ. Տ. Պետրոսեանի լռութեան շրջանը: Կայացաւ նախագահական ընտրութիւններ եւ Վազգէն Սարգսեանի անմիջական աջակցութեամբ Հայաստանի նախագահ ընտրուեց Ռ. Քոչարեանը: Շատ ժամանակ չանցած, բոլորի աչքի առաջ նոր իշխանական բուրգը ճաք տուեց: Վազգէն Սարգսեանը մեծ ջանքերով եւ ոգեւորութեամբ էր սպասում Համահայկական առաջինհամաժողովին եւ նրա արդիւնքներին: Հայրենասէր մեծահարուստների միլիարդների հասնող ներդրումները Հայաստանի տնտեսութեան զարգացմանը պէտք է բեկումնային վերելք ապահովէին: Աւաղ նա ուշացումով հասաւ այն եզրահանգման, որ որքան էլ հայրենասէր, ապա դրամատէրը ներդրումների համար պահանջում է իրաւական ապահովուած դաշտ, եւ օրէնքի իշխանութիւն: Կրկնենք օրէնքի եւ ոչ թէ անձերի:*

*Իշխանական կուլիսներում էլ ինչեր էին անցնում, երեւի յետագայում պատմութիւնից կ՚իմանանք, թէ ինչու այս երկու պետական այրերի միջեւ այդքան խզում առաջացաւ: Հանրապետական կուսակցութիւնը առաջնորդութեամբ Վ. Սարգսեանի Դաշինք կնքեց Հայաստանի ժողովրդական կուսակցութեան հետ ղեկավարութեամբ Կարէն Դեմիրճեանի, որի դիմաց դեռ մէկ տարի առաջ լարուած պայքար էր տանում յօգուտ Ռ. Քոչարեանի:*

*Պետական կառոյցներում եւ ներքին տնտեսավարման ասպարէզում հսկայական փորձ ունեցող Կ. Դեմիրճեանի հետ Դաշինքը մեծ յոյսեր արթնացրեց ժողովրդի սրտում: Ժամանակի հրամայականն էր այդ օրուայ կարգախօսը (Կառուցենք եւ Պաշտպանենք): Երկրի զարգացման այդ ձեւը կամ ուղղութիւնը, ինչ որ ուժերի սրտովը չէր: Եկաւ հայոց պետութիւնը գլխատելու փորձերի ժամը մի խումբ ստահակների ձեռքով: 1999 Հոկտեմբերի 27-ին սպանուեցին վարչապետ Վ. Սարգսեանը, Ազգային Ժողովի Նախագահ Կարէն Դեմիրճեանը եւ 6 այլ պետական այրեր: Այդ ժամանակ երկրի նախագահն էր Ռ. Քոչարեանը, եւ անվտանգութեան ապահովման պատասխանատու ղեկավարն էր Ս. Սարգսեանը:*

*Թւում էր անկառավարելի իրարանցում է սկսուել, եւ երկիրը մտնում էր քաոսի մէջ: Բանակը որ կորցրել էր իր սիրելի սպարապետին, ինքնաբուխ պատրաստւում էր գործողութիւնների: Սակայն աւելի քան մէկ ու կէս տարի լուռ իր գրքերի պրիզմայով Հայաստանի անց ու դարձերին հետեւող առաջին նախագահ Լ. Տ. Պետրոսեանը խախտեց այդ լռութիւնը եւ կոչ արեց ժողովրդին համախմբուել երկրի նախագահ այսինքն Ռ. Քոչարեանի շուրջը: Իսկ բանակի հրամանատարներին յորդորեց չխառնուել ներքին քաղաքացիական գործերին: Արդեօք ինչ էր սա, յիսուսավայել ներողամտութիւն, թէ քաղաքական ինչ որ հաշուարկներ: Միանշանակ ասենք, երկիրը քաոսից եւ անկառավարելիութիւնից հեռու պահելու լրջախոհ քաղաքական գործչի արձագանք էր իրադարձութիւնների կապակցութեամբ:*

*Երկրի կայունացումը ամրապնդելու եւ կրքերը հանդարտեցնելու համար, հանրապետութեան նախագահը կատարեց շախմատային լեզուով ասած իր ձիու քայլը, Վ. Սարգսեանի երիտասարդ եւ անփորձ եղբօրը Արամ Սարգսեանին նշանակելով վարչապետ: Ցիրաւի կրքերը հանդարտուեց եւ իրավիճակը սկսեց նորմալանալ, ստահակներին պատժելու եւ կազմակերպիչներին բացայայտելու գործում ապաւինելով Ա. Սարգսեանի ներկայութեանը իշխող բուրգում: Սակայն երիտասարդ վարչապետի առաքելութիւն ըստ Ռ. Քոչարեանի հաշուարկների պէտք է աւարտուեր ամիսներ անց, այն օրերից մինչեւ 2008 թ.ի ընտրութիւնները եւ նրանից բխած վերջին իրադարձութիւնները անցաւ շուրջ 7 տարի: Այս ընթացքում*

*- Ըստ իշխանական վիճակագրութեան, շարունակ Հայաստանի տնտեսութիւնը արձանագրել է երկնիշ տնտեսական աճ, որ սակայն չի նուազեցրել արտագաղթը, խիստ մեծացել է ունեւոր խաւի եւ չունեւորի անջրպետը, չնայած որոշակի ներդրումներին մանաւանդ էլիտար շէնքերի կառուցման առումով էդպէս էլ չգոյացաւ հասարակութեան մէջ զարգացման շարժիչ ուժը հանդիսացող միջին խաւը: Տնտեսութեան գրեթէ բոլոր ճիւղերում մանաւանդ ներմուծումների բնագաւառում արմատաւորուեցին իշխանութեան հետ սերտացած մենաշնորհային ընտանիքները, որոնք յաճախ յանցագործ կրիմինալի հետ համագործակցութեամբ, խեղդում էին ազատ մրցակցութիւնը: Ի հարկէ մենաշնորհային յարաբերութիւնները ղեկավարւում էին մաքսային վարչութիւնից, մաքսային ռեժիմի խիստ անհաւասար պայմաններում, երկ-ստանդարդների կիրառումով:*

*- Խօսքի ազատութիւնը խստօրէն սահմանափակուեց, որի վկայութիւնը եղաւ միակ ընդդիմադիր հեռուստաալիքի՝ Ա1+ի 6 ամեայ եթերազրկումը, եւ նախագահական ընտրութիւնների ընթացքում ստեղծուած լրատուամիջոցների աննախադէպ բլոկադան:*

*- Թէ նախագահական, թէ խորհրդարանական ընտրութիւններում, կեղծիքը, կաշառքը, ահաբեկումները եւ աղաղակող խախտումները դարձան սովորական, ընդունելի եւ մարսուող գործելաձեւ: Նրա վառ եւ ամենաթարմ ապացոյցը եղաւ դարձեալ նախագահական վերջին ընտրութիւնները:*

*- Ղարաբաղեան հարցի կարգաւորումը անհեռանկարային գործելաոճի արդիւնքում մտաւ փակուղի, որտեղ Ղարաբաղը ինքնուրոյն սուբիեկտի եւ կարգավիճակից փոխուեց եւ վերածուեց Հայ-Ատրպէյճանական կոնֆլիկտի օբիեկտ հանդիսացող կարգավիճակ ունեցող: Քանի որ միջազգային յարաբերութիւնները կարգաւորող հիմնադրոյթները իւրացնելիս մեր իշխանական այրերը անհրաժեշտ կամք եւ վարպետութիւն չունեցան, «ազգերի ինքնորոշման իրաւունքի» հիմնադրոյթը գերակայող դարձնելու, եւ յանցաւոր անտարբերութեան ու տհասութեան պատճառով անընդհատ յայտնուեցին «տարածքային ամբողջականութեան հիմնադրոյթ» կոչուած տաշտակի առջեւ:*

*- Հայաստանը գրեթէ ամբողջութեամբ դուրս մղուեց տարածաշրջանային խոշոր նախագծերից այսպէս, Պաքու-Ճէյհան խոշոր խողովակաշարը, որ սկզբնական նախագծով, Հայաստանից անցնող հատուած էր նախատեսուած, աշխատանքները իրականացնելիս, անգամ նախագծի զգալի թանկացման հաշուին, Հայաստանը շրջանցուեց: Տնտեսական եւ քաղաքական այդ հսկայական վնասի դիմաց ինչ շահեցինք: Պատասխանում են ստատուս քուոն պահպանուեց, դարձեալ խաբկանք:*

*- Վերջապէս որքան որ Հայաստանի Եւրոինտեգրման մասին խօսեցին, այնքան ժողովրդավարութիւնը երկրի ներսում հետընթաց արձանագրեց: Ամենաանկողմնակալ մօտեցումներով եթէ շարունակենք երկրի առջեւ ծառացած խնդիրների թուարկումը, կը կանգնենք մի հաւաքական պատկերի առջեւ որը ոչ այլ ինչ է, քան համակարգային փոփոխութեան համար մի հզօր, արմատական ընդդիմութեան անհրաժեշտութիւնը: Ընդդիմութիւն որը ամուր բազիսը պէտք է ունենար ժողովրդական լայն զանգուածների շրջանում: Եթէ իրերը եւ իրադարձութիւնները իրենց անունով կոչենք, կը ստացուի, որ անհրաժեշտ էր ժողովրդային այնպիսի մի շարժում որի ալիքը պէտք է սասաներ, ժողովուրդից կտրուած լպիրշ գողութեամբ «ժողովուրդի հետ վարուող վարչախմբի» հիմքերը: Բնականաբար այդ շարժումը ներդաշնակ դարձնելու եւ նպատակին ծառայեցնելու համար պէտք է ունենար իր պետական շինարարութեան գործում մեծագոյն փորձ ունեցող ղեկավարին: Իսկ ժողովուրդի ընդդիմութեան շարքերում բազմատեսակ, տարբեր տրամաչափի անհատների ու անհատականութիւններ մէջ տեսաւ Լ. Տ. Պետրոսեանի, մարդ որ իր խօսուն լռութեան տարիներին, ոչ միայն մատենագիտական իր խորաթափանց գիտելիքներով վերլուծում էր պետութիւնների ձեւաւորման եւ կործանման նրանց կարճատեւ թէ երկարատեւ կեանքի պատճառահետեւանքային կապերի փիլիսոփայութիւնը, գոյատեւման ռազմավարութիւնը եւ մարտավարութիւնը: Այլ նաեւ մեքենայի ղեկը ոչ հմուտ մարդուն յանձնած վարորդի հոգեբանութեամբ դիտում էր պետական մեքենայի վարման եւ երթի ընթացքը:*

*Թէ ինչո՞ւ անընդհատ լռել, երբ տեսնում ես ուղիղ ընթացքից շեղւում է այդ մեքենան:*

*Դա մի հարց է որ ակնկալւում է պատասխան արդէն ժողովրդի պահանջով հրապարակ իջած առաջին նախագահ Լ. Տ. Պետրոսեանից: Այնպէս որ անիմաստ է այսքան շփոթուած իրարանցումները: Կլոր սեղանների շուրջ չի կարող լինել լուրջ երկխօսութիւններ, քանի որ մասնակիցները անկարող են անգամ իրենց սեփական մտքերը առանց գզգրախօսութիւնների արտայայտել, եւ շատ յաճախ հեռուստաալիքի լսարանը շփոթում են փողոցի կամ սրճարանային լսարանից:*

*Հայաստանում հիւանդ, վախեցած, ստրեսների մէջ գտնուող հասարակութեան առողջացման եւ մաքրման գործընթացներ է սկսուել, ուստի եթէ օգնել չէք կարողանում, մի խանգարէք: Թողէք առողջանայ այս հասարակութիւնը: Եթէ մի քիչ հայրենասիրութիւն ունէք: Ցիշէք իշխանութիւնները եկող գնացող են: Մնացողը Հայրենիքն է եւ ժողովուրդը ազատ կամ ստրուկի ապրելակերպով: Բայց եթէ հնարաւոր է ազատ ու մարդավայել ապրել ինչու մնալ ստրուկ:*

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ
CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԷՆՏԷՅԼ, ՊԸՐՊԷՆՔ, ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱ)
GLOABCAST SATELLITE
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

# ՄԱՐԶԱԿԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԳԱՒԱԹԻ ՄՐՑԱՇԱՐՔ

*Ֆուտբոլի Հայաստանի գաւաթի խաղարկութեան քառորդ եզրափակիչում կայացան առաջին հանդիպումները:*

| | |
|---|---|
| «Փիւնիկ» - «Գանձասար» | 0-0 |
| «Շիրակը» - «Բանանցին» | 0-1 |
| «Միկան» - «Կիլիկիայի» | 1-0 |
| «Արարատ» - «Ուլիս» | 0-1 |

## ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆԸ

*Մեկնարկեց ֆուտբոլի Հայաստանի 2008թ. բարձրագոյն խմբի առաջնութիւնը, որի մեկնարկային տուրում կայացան 4 հանդիպումներ: Կենտրոնական էր համարւում Կապանում կայացած «Գանձասար» - «Բանանց» մրցավէճը, սակայն այս խաղում դարպասի գրաւում չարձանագրուեց: Երեւանի «Նաիրի» մարզադաշտում մրցեցին «Փիւնիկը» եւ «Ուլիսը»: Մրցումի 87-րդ րոպէին «Փիւնիկի» փոխարինող Ալբերտ Թադեւոսեանը Վարդան Պետրոսեանից ստանալով գնդակը հեռահար գեղեցիկ հարուածով գնդակը ուղարկեց դարպասի հեռաւոր անկիւնը, իսկ «Ուլիսի» դարպասապահ Մայիս Ազիզեանը միայն հայեացքով հետեւեց այս դրուագին:*

*Խոշոր հաշիւ է գրանցուել «Արարատ» - «Կիլիկիա» մրցավէճում, որում արարատցիները յաղթել են 5:0 հաշուով: «Միկան» 3:1 հաշուով առաւելութեան է հասել «Շիրակի» նկատմամբ:*

| | |
|---|---|
| «Արարատ» - «Կիլիկիա» | 5-0 |
| «Գանձասար» - «Բանանց» | 0-0 |
| «Փիւնիկ» - «Ուլիս» | 1-0 |
| «Միկա» - «Շիրակ» | 3-1 |

| | Խաղ | Յաղ. | Հաւ. | Պարտ. | Կոլ | Կէտ |
|---|---|---|---|---|---|---|
| «Արարատ» Երեւան | 1 | 1 | 0 | 0 | 5-0 | 3 |
| «Միկա» Աշտարակ | 1 | 1 | 0 | 0 | 3-1 | 3 |
| «Փիւնիկ» Երեւան | 1 | 1 | 0 | 0 | 1-0 | 3 |
| «Գանձասար» Կապան | 1 | 0 | 1 | 0 | 0-0 | 1 |
| «Բանանց» Երեւան | 1 | 0 | 1 | 0 | 0-0 | 1 |
| «Ուլիս» Երեւան | 1 | 0 | 0 | 1 | 0-1 | 0 |
| «Շիրակ» Գիւմրի | 1 | 0 | 0 | 1 | 1-3 | 0 |
| «Կիլիկիա» Երեւան | 1 | 0 | 0 | 1 | 0-5 | 0 |

## ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ ՄԷԿ ՈՍԿԻ, ՄԷԿ ԱՐԾԱԹ


Եւրոպայի ախոյեան Եուրի Պատրիչկեւ

*Տամպերէյում աւարտուեց ըմբշամարտի Եւրոպայի առաջնութիւնը: Ազատ ոճայիններից յետոյ պայքարի մէջ մտան նաեւ յունահռոմէական ոճի ըմբիշները: Հայաստանի կազմում հիանալի ելոյթ ունեցաւ 120կգ գերծանր քաշային Եուրի Պատրիչկեւը, որը այս քաշային կարգում դուրս գալով եզրափակիչ՝ պարտութեան մատնեց ռուս յայտնի ըմբիշ Հասան Բարոեւին: Աշխարհի առաջնութեան բրոնզէ մեդալակիր Պատրիկեեւը այսպիսով ամենածանր քաշային կարգում դարձաւ Եւրոպայի ախոյեան:*

*55կգ քաշային կարգում Եւրոպայի նախկին ախոյեան Ռոման Ամոյանը յաղթելով մի քանի հանդիպումներում դուրս եկաւ եզրափակիչ, որտեղ մրցեց Ատրպէյճանի ներկայացուցիչ Ռովշան Բայրամովի հետ, ցաւոք, Ամոյեանը պարտուեց եւ արժանացաւ միայն արծաթէ մեդալի:*

*60կգ քաշային կարգում յաջող հանդէս եկաւ օլիմպիական խաղերի կրկնակի ախոյեան Արման Նազարեանը, որը հանդէս էր գալիս Պուլկարիայի դրօշի ներքով: Նազարեանը դուրս եկաւ եզրափակիչ եւ պարտուեց ֆինն Յարկօ Հուլկուին: Հայաստանը այս քաշային կարգում ներկայացնող Խոսրով Մելիքեանը 1/8-րդ եզրափակիչում զիջեց Ռուսաստանի ներկայացուցիչ Ասլան Աբդուլլինին:*

*60կգ քաշայինների պայքարում ելոյթ ունեցաւ նաեւ Հայաստանի հաւաքականի նախկին անդամ Էդուարդ Բարսեղեանը, որը ներկայումս ներկայացնում է Լեհաստանը: Բարսեղեանը յաջողութեամբ յաղթահարելով 1/16-րդ եզրափակիչի արգելքը, յաջորդ փուլում պարտուեց ապագայ ախոյեանին:*

*66կգ քաշային կարգում Արման Ադիկեանը պարտուեց հենց առաջին փուլում: 74կգ քաշային կարգում Էդգար Բաբայեանը եւս իր առաջին մրցավէճից յետոյ դուրս մնաց յետագայ պայքարից: Նոյն բախտին արժանացաւ նաեւ 84կգ քաշային Տիգրան Սահակեանը: 96 կգ քաշային կարգում Արման Գեղամեանը հասաւ մինչեւ քառորդ եզրափակիչ, որտեղ զիջեց վրացի Ռամազ Նոզաձէին:*

## ԱՐԱ ԹՈՓՃԵԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ

Շարունակուած էջ 15-էն

*իր լայնահայեաց հետաքրքրութեան շրջհիւ վարժարանի վերջին դասարանի աշակերտները պատրաստեց որ մասնակցին արտաքին քննութեանց: «Պրն. Ա. Թոփճեան ճիգ չէր խնայեր ու կը քաջալերէր երաժշտական, թատերական կամ մարզական ծիրէն ներս հետաքրքրութիւն ցոյց տուող աշակերտները», ըսաւ Փրոֆ. Օ. Քէշիշեան:*

*Սրբազան Հայրը թէեւ չէ աշակերտած Պրն. Տնօրէնին, սակայն տակաւին աշակերտ եղած տարիներուն այլ վարժարաններու մէջ, իր մասին լսած է յարգանքով ու երախտագիտութեամբ լի արտայայտութիւններ: Առաջնորդ Սրբազանը Պրն. Արա Թոփճեանը նմանցուց այն բացառիկ անձերու, որոնք «Աստուծոյ կողմէ բնածին կարողութիւններով եւ շնորհներով ստեղծուած հայորդիներ են, որոնք մեր ժողովուրդի պատմութեան մէջ անջնջելի հետք թողած են շնորհիւ իրենց թանկագին զոհողութիւններուն եւ մատուցած ծառայութիւններուն»:*

*Դոկտ. Ասպետ Մարկոսեան, 1959-ի շրջանաւարտ, որ վարած է ուսուցչական ու տնօրէնական պատասխանատու պաշտօններ, երախտագիտութեամբ յիշեց իր տնօրէնը, որ կեանքի ուղեցոյց մը եղաւ իր աշակերտներուն եւ իր համար: Պրն. Տնօրէնը կը հետաքրքրուէր իր աշակերտներով, կը նամակցէր անոնց հետ ու կը կիսէր իր խոհերը անոնց հետ:*

*ՀԲԸ Միութեան ամենէն գործօն ու պատասխանատու մտաւորականներէն մին է Տոքթ. Սիմոն Սիմոնեան, 1966-ի շրջանաւարտ: Ան ընդգծելէ ետք Պրն. Արա Թոփճեանի դերը ճիշդ ընտրութիւններ կատարելով կրցաւ իր ղեկավարած հաստատութեան մէջ ի մի բերել ուսուցչական կեանքին համար պատրաստ, նուիրեալ, գիտակից ու եզակի ուսուցիչներու փաղանգ մը: Ապա խօսելով Պրն. Տնօրէնի ունեցած մարդկային գեղեցիկ յատկանիշներէն կարգապահութեան մասին, ըսաւ. «Եթէ այսօր յովակիմեանցին կը զանազանուի ուրիշներէ իր քաղաքավարութեամբ ու կենցաղագիտութեամբ, այդ մեծ մասամբ կը պարտի Պրն. Ա. Թոփճեանի խստապահանջ նկարագրին»:*

*Տոքթ. Կիրակոս Մինասեան, 1971-ի շրջանաւարտ անդրադառնալով իր աշակերտութեան տարիներուն ըսաւ. «Պրն. Արա Թոփճեան այն տնօրէնն էր որ շատ մօտիկէն եւ դեռ շատ կանուխ կը սկսէր հետեւիլ իւրաքանչիւր աշակերտի արձանագրած ուսումնական նուաճումներուն, կը վերլուծէր զանոնք անհատաբար, եւ կը յանգէր եզրակացութեան մը, որ պիտի վճռէր աշակերտին ապագան»:*

*Դոկտ. Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեան, որ իր երիտասարդ տարիքին պաշտօնակից եղած է հանգուցեալ տնօրէնին, կարօտով եւ յուզումով յիշեց այն տարիները, երբ Պրն. Արա Թոփճեան հիմքը դրած էր ու կ'ամրացնէր Յովակիմեան-Մանուկեանի խարիսխները: Տ. Զաւէն յիշեցուց թէ ինչպէս յաճախ պտուղը իր ծառէն հեռու չ'իյնար, ինչպէս Պրն. Արա Թոփճեան՝ իր բանասէր ու մանկավարժ հօր Պրն. Յակոբ Թոփճեանէն, որ եղած էր Մելգոնեան Կրթական Հաստատութեան տնօրէն, մանկավարժ, բանասէր, ձեռագրագէտ ու հասարակական գործիչ, մեծ ներդրում ունենալով հայ կեանքի զանազան ասպարէզներէն ներս:*

*Թարմացնող էր ու միաժամանակ յուզիչ 2003-ին պատրաստուած տեսաերիզը, ուր ուխտուոթամեայ Պրն. Տնօրէնը ուղղակի իր խօսքը կ'ուղղէր թանկագին աշակերտներուն՝ ըլլալ հայութեամբ հպարտ, եւ գիտակցիլ թէ առանձնաշնորհուած է պատկանելով հին մշակոյթ ու քաղաքակրթութիւն ստեղծած հայ ազգին: Ընթերցուեցաւ նաեւ այրի տիկին Ռիթա Թոփճեանի շնորհակալութեան ու երախտագիտութեան գիրը ուղարկուած յատկապէս այս յուշահանդէսին՝ կոչ ընելով Պրն. Արա Թոփճեանի յիշատակը յարգել մասնակցելով «ՀԲԸ Միութեան Արա Թոփճեան կրթական ֆոնտին»:*

*Հոգեհանգիստ-յուշահանդէսի աւարտին օրուան հանդիսավար Պրն. Լեւոն Քէշիշեան մէկ առ մէկ ներկայացուց ներկայ տնօրէնները, ինչպէս Պրն. Երուանդ Պապայեան, Պրն. Երուանդ Ակիշեան, Պրն. Մարզպետ Մարկոսեան, (յովակիմեանցի), Տիկ. Հայկուհի Փաթափութեան եւ Դոկտ. Յովսէփ Թորոսեան (յովակիմեանցի), ինչպէս նաեւ Գալիֆորնիոյ Ըրվայն (UC Irvine) քաղաքի համալսարանի տարրաբանութեան ամպիոնի վարիչ, յովակիմեանցի, Փրոֆ. Արա Աբգարեանը: Ողջունուեցաւ նաեւ ներկայութիւնը Յովակիմեան-Մանուկեանի մէջ պաշտօնավարած ուսուցիչներ Պրն. Ստեփան Կուրտիկեանի եւ Պրն. Փարէն Մալճեանի:*


**ԲԱՑՈՒԱԾ Է**

**Հիպնոսաբուժութեան կեդրոն**
**ղեկավարութեամբ՝**
**Փորձառու բժիշկ Արթին Սաղրեանի**
**Փասատինայի մէջ**
**Ամէն օր՝ առաւօտեան ժամը 10:00էն**
**մինչեւ կ.ե. ժամը 3:00**
**Հասցէ՝ 1060 N. Allen Ave. 2nd floor Unit E**
**Pasadena CA 91104**
**Հեռախօս (818) 434-8118 միայն ժամադրութեամբ**

**«Միտք մարմնի վրայ» թուլացման (relaxation) միջոցաւ կը դարմանուին.**
**-Մարմնային քրոնիկ հիւանդութիւններ, արեան գերճնշում, շաքարախտ, ազմա, եւայլն:**
**- Մոլութիւններ - սիկարէթ, ալքոլ, թմրադեղեր, եւայլն:**
**- Հոգեկան տագնապներ - անձկութիւն, ընկճուածութիւն, վախ, անքնութիւն, եւայլն:**
**- Մանուկներու յատուկ վիճակներ -ADD, գիշերային մէզ, եղունգի կրծում, եւայլն:**
**- Ուսումնական եւ սքորթային բարելաւում**

# ՄԱՀԱԶԴ



*ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ*

*Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրեցեալ եղբօր եւ հարազատին՝ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, Մարտ 31, 2008ին, յետ երկարատեւ հիւանդութեան:*

*Թաղման արարողութիւնը տեղի ունենաց Ուրբաթ, Ապրիլ 4, 2008ին, Քովինայի Forest Lawn գերեզմանատան մէջ, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատունը:*

*Սգակիրներ՝*
*Քոյրը՝ Անահիտ Գազանճեան*
*Եղբայրը՝ Զարեհ Սարգիսեան*
*Եղբայրը՝ Մանուկ Սարգիսեան*
*Զարմուհին՝ Սիլվա Գազանճեան*
*Զարմիկը՝ Տէր եւ Տիկ. Արա Գազանճեան եւ դուստրը՝ Ֆելիսիա*
*Զարմիկը՝ Հրաչ Գազանճեան*

*Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարուեցան «Մասիս» շաբաթաթերթին եւ Երեւանի «Բենիամին Ժամկոչեան» դպրոցին:*

# ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

*ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական կազմը իր խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն:*

# ՄԱՐՏԻ 1-ԻՆ ԳԱՐՈՒՆ ՉԵԿԱՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ...

*Շարունակուած էջ 7-էն*

*քան հուժկու եւ բարբարոսաբար հարուածում էին, որ հազիւ թէ նրանք, իրենց ստացած հարուածներից յետոյ կենդանի մնային: Գետին, մէջքի վրայ գետնին պառկած ու արդէն վաղուց անշարժացած մարմինների, քթին, բերնին, սրտին հարուածում ու հարուածում էին:*

*Յանկարծ հեռուից լսածս ձայնը «...հերիք է տղերք, մի խփէք, շատ սպաննուած կայ, թողէք մի խփէք» գոռաց, հենց կողքս պառկած երիտասարդին անխնայ ծեծողներից երկուսը իրենց ձեռքերում բռնած մահակները գետին գցեցին, երկու զինուորն էլ ծնկի եկած հեծկլտալով լացում էին: Նրանց մահակները ամբողջութեամբ արիւն էր, երկուսից մէկը կրացաւ, գետինը անշարժ պառկած եւ իրենց ծեծած երիտասարդի սիրտը լսեց, բացականչելով կտրուող ձայնով հեկեկում էր «...արա, մեռել է, չի շնչում արա, սատկել է արա, մարդասպան դառանք արա...»: Լացող տղային կողքի ընկերները քաշելով տանում էին, նա փորձում էր դեռ բղաւել. «...արա, մարդասպան դառանք, մարդ սպաննեցինք...»:*

*Ես, գետինը անշունչ եւ անշարժ պառկած միայն մի աչքով կատարուածին էին հետեւում: Արդէն պատգարակներ էին բերում ու տանում, աւտոմեքենաների եւ մարդկանց բղաւոցի ձայներին հազիւ շնչող ծանր վիրաւորների տքոցներն էլ էին խառնւում: Արիւնը արտասովոր հոտ ունի, հենց իմ կողքում անշարժացած մարմինով մէջքի վրայ պառկած երիտասարդի արիւնլուայ մարմնից արեան հոտը քթիս էր հասնում:*

*«Ազատութեան Հրապարակ»ում կատարուածը ջարդ էր, Pogrom իր սեփական ժողովրդի հանդէպ, հրահանգուած ու կատարուած ՀՀ (ապօրինի) իշխանութիւնների կողմից: Ես, ականատես եմ եղել կատարուած ջարդին եւ պատրաստ եմ վկայել, որեւէ չէզոք ատեանում (եթէ այդ տեղի ունենայ), որ համայն աշխարհի մարդկութիւնը իմանայ իրականութիւնը:*

*«Որտեղ է արա, գտե՞լ էք ֆրանսացուն», գետնին պառկած՝ հեռուից եկող ձայնն էի լսում, աչքս փակել էի: Հարց տուողը հաստատ չեֆերից էր, ամբողջ կեանքում միայն ու միայն կաշառակերութեան շնորհիւ երեխայ մեծացրած, միմիայն իր անմեղ ու անպաշտպան հայրենակիցներին խեղճացնելուն սովոր, բարոյական արժէքներից, մարդկային զգացումն երից հեռու ապրած, մի խեղճուկրակ «չեֆ» էր հաստատ:*

*Հաստափոր, վիզն էլ հաստ, ժողովրդի հաշուին ապրող մէկը, այդ տասնեակ, հարիւր կամ հազարներից միմիայն մէկը, որոնց համար իրենց իսկ երեխաների ապագան սրբութիւն չէ: Ես պարզապէս խղճում էի այսպիսի «չեֆ»երին, մէջս միայն խղճահարութեան զգացում կար:*

*«Գտէք արա, ֆրանսացի բոզի լակոտին գտէք» հրամայում էր նոյն ձայնը: Ախ «չեֆ ջան» եթէ իմանայիր, որ ես այստեղ, այս հրապարակում եմ կանգնած, ցրտին, սոված, մրսած վիճակում նաեւ քո իսկ երեխաների համար, ձեր նման հազարներով պետական պաշտօնեաների երեխաների եւ թոռնիկների համար, հաստատ կ՚ամաչէիր ինձանից ու իմ երեխաներից: Կարող է հիմա չես հասկանում, բայց կարճ ժամանակ յետոյ հասկանալու ես, իմ կատարած քայլի բարոյական իմաստն ու արժէքը:*

*Շատ ռոմանտիկ էի, արուեստի ներաշխարհում էի ապրում, դեռ մարդուն, այդ էլ հայ մարդուն հաւատում էի: Այդ, որ ասում են «յոյսը վերջինն է մեռնում», ահա այդ վերջը եկել էր եւ ես դեռ յոյսով էի ապրում: Յանկարծ մտածեցի, որ ներքին զօրքերի անմարդկային յարձակում կատարող ուժերը, Լեւոն Տէր-Պետրոսեանին սպաննած կը լինեն: Այո, երկրի ընտրուած նախագահը հաստատ սպաննուել էր, սա իշխանութիւնների կատարած ամենավերջին ստորութիւնն էր, համոզում էի ինքս ինձ եւ ենթադրութեանս հաւատում էի: «Որտեղ մարդ, այդտեղ պրոբլեմ: Մարդուն վերացնում ես, պրոբլեմը վերանում է», 1915 թ. Թալէաթն էր այսպէս վարուել մեր նախնիների հետ, հիմա զոհը Լեւոն Տէր-Պետրոսեանն էր, իսկ դահիճը՝ (ապօրինի) իշխանութիւնները:*

*Վերջ... եթէ նախագահ Տէր-Պետրոսեանին սպաննել են, էլ վերն, Հայաստանը միջնադարում կը յայտնուի, բռնապետական միապետական համակարգը յարատեւ կը դառնայ, հայոց այբուբենի տառերի մէկ երրորդին չտիրապետողները կ՚իշխեն իմ երեխաներին: Արեւը կը խամրի հայոց երկնակամարում, լոյսն ու արշալոյսը կը պարտուի խաւարին:*

*Պրծաւ, այո պրծաւ ուրեմն, այդ հարիւր հազարների վանկարկած «Պայքար, պայքար մինչեւ վերջ»ը: Վերջը, Լեւոն Տէր-Պետրոսեանի սպանութիւնն էր հաստատ, մարդ որ քիչ ժամանակ առաջ այստեղ, այս հրապարակում Զարենց էր արտասանում, բոլորիս աչքերի մէջ նայելով: «... Թող ոչ մի զոհ չպահանջուի ինձնից բացի թող ոչ մի ստուեր կախաղանին մօտ չգնայ...»:*

*Լ. Տէր-Պետրոսեանի իշխանութիւնների կողմից սպաննուած լինելու մասին ենթադրութիւններս այլեւս իմ մէջ համոզմունք էին դարձել: Զոհի, զոհաբերութեան, հողից, հողեղէնից ձերբազատուելու, դէպի երկինք, հանգիստ ու փափուկ, երկինք բարձրանալու զգացումն էր պատել ինձ: Կարծես, այս ամէնը վատ երազ (cauchemar) լինէր, ոտքերս, ձեռքերս, գլուխս, ամբողջ մարմինս կարծես գետնին պառկած չլինէր: Հոգեպէս թեթեւացել էի, մարմնիս ծանրութիւնը չէի զգում արդէն... կարծես թեւ առած լինէի, թռնում, փուչիկի, օդապարիկի նման դէպի վերեւ, դէպի երկինք էի բարձրանում:*

*Ներքեւում արիւն էր, անշարժացած մարմիններ, ջարդուած մարդիկ ու հոգիներ: Ոստիկանները նրանց ոտերից, ձեռքերից քաշում տանում, խցկում ու շպրտում էին մեքենաների մէջ: Յանկարծ ձախ ձեռքս վերեւ բարձրացնել փորձեցի, խզուած ձայնով իբր բղաւում էի, «... այստեղ եմ, ֆրանսացին ես եմ...»: Մի քանի ոստիկաններ շուրջս գլխիս հաւաքուեցին, նրանցից մէկն ինձ ձեռքը մեկնեց, մարմնովս շրջուեցի, հիմա արդէն մէջքիս վրայ էի պառկած: Ոստիկանի ականջին շշջանլով ասացի. «...ֆրանսացին ոչ թէ բոզի լակոտ է, այլ հայ մօր հալալ կաթը կերած մարդ»: Անուժ շարունակեցի, կարծես իր վերջին խօսքերն արտասանող մահապարտի նման. «Գիտեմ, որ ձեր «չեֆ»երը ինձ կը սպաննեն, տղերք: Խնդրում եմ, իմ փոքր երեխաներին ասէք, որ այս տարի Հայաստանում գարուն չեկաւ: Իրենց հայրը ամէն ինչ արեց, որ գարունը բացուի բայց աւաղ, չարը նոյնիսկ բնութեանն էր խանգարում»:*

*Ապշած ինձ նայող ոստիկանին հարցնում էի. «...Լսեցիր, ինձ հասկացար եղբայր»: Նա, ձեռքս պինդ սեղմած, գլուխն էր շարժում, «այո» ասում: Ինձ պատգարակի վրայ տեղաւորելիս, հեծկլտալով, հեկեկալով լացում էի եւ խզուած ձայնովս, կիսատ պրատ բառերով կրկնում էի.*

*«Այս տարի Հայաստանում գարուն չեկաւ»:*


**ՔԱՋ ՆԱԶԱՐ**
**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:00
Կլէնտէյլի 280-րդ կայանից



**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**
**Enclosed a check for (one year)**
*** $50,00 for USA**
*** $60,00 (second class), $ 75,00 (Air Mail) for Canada.**
*** $85,00 (second class), $ 125,00 (Air Mail) Overseas.**

**Name:** ----------------------------------------
**Address:** ----------------------------------------
**City:** --------- **State:**--------- **Zip Code:**------
**Country:** ------------
**Tel :**----------------------- **Fax :** -------------------------

AGBU

LARK MUSICAL SOCIETY

# Zemiré

Զ Է Մ Ի Ր Է

A New Production by

**AGBU ARDAVAZT THEATER COMPANY**
**AND**
**LARK MUSICAL SOCIETY**

Dikran Tchouhadjian

## ZEMIRÉ

*Opera Semiseria in Four Acts*

Stage Director:
**KRIKOR SATAMIAN**

Music Director:
**VATSCHE BARSOUMIAN**

A large cast of singers, actors, chorus, orchestra and supernumeraries.

Friday
May 30, 2008, 8:00 pm
Saturday
May 31, 2008, 8:00 pm
Sunday
June 1, 2008, 3:30 pm

Pasadena Civic Auditorium
300 East Green Street
Pasadena, CA

